651
Q-45

1909 р.

...ого Управленія
...дѣламъ печати
№ 1899

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

ՕՏԱՐ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ

ԿԱԶՄԵՑ

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

Գ. տիպ Ծոխացրած

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ. 7
1909

Դրանց 1: 60 կոպեկ

651

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները

1 Աղօթատետր և. տպ. 1903.
2 Կրօնի դասագիրք ա. մ. 1889 (սպառուած) —
3 » » բ. մ. դ. տպ 1891 —
4 » » գ. մ. դ. տպ. —
5 Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. բ. տպ. 1894 —
6 Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891 —
7 Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 2 —
8 Նոյն. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսր. մրց. արժ. 1894. 7 —
9 Նոյն. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800. 1899. 4 —
10 Նոյն. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1902. 4 —
11 Նոյն. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—2. 1904 4 —
12 Նոյն. գիրք Է. Դաւիթ կաթ. մ. II. 1803—4. 1907. 4 —
13 Նոյն. գիրք. Ը. Սիմէոն կաթ. մ. II. 1767—1776. 1908 4 —
14 Կարգ աստուածապաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով, Զ. տպ. 1907 — 50
15 Հնից-նորից հնախօս. ուղեւոր. պրակ Ա. 1900. — 30
16 Գատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ԺԴ տարի. — 50
17 Նամակագիրք Բ. տպ. հոխացրած 1909. — 60
18 Մոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առողջապահական խոհարարութիւն. — 15
19 Զաքար Ղարդաձեանցի կտակը և Մշակի զառանցանքները (սպ.). — 5
20 Եկէք մեր պարտքը կատարենք՝ 1908 — 5

թարգմանութիւններ

21 Հաւատարմութիւնը ամէն արդելքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 — 40
22 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1888 (սպ.) — 40
23 Դօն Քիշոտ լամանչեցի, Մ. Սերվ. 1878 սպ. — 70
24 Գէորգ Ռօլլէստոն, 1879 (սպառ.) — 60
25 Երբորդ ոսկի առակ Լաֆիդէի բ. տպ. 1893 — 10
26 Ռոբինզոն (հրատ. Թիֆ. տպագր. ընկերութ.) սպ. — 60
27 Զէստերտոնի ժառանգը, պատկերազարդ, 1882. սպ. 1 —
28 Ակտէա. տ. Սիսոեվայի. 1885 սպառ. — 50
29 Եան Էրնստ Սմօլեաբ. Ն. Եանչուկի, 1885 սպ. — 20
30 Արծուի մատծմունքը, պրոֆ. Մ. Բողդան. 1892. — 5
31 Գիւղի սուրբը. Սվետ. Զէխի, 1892 — 10
32 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892. 1 —
33 Դէպի Ոգեստ. Հ. Սենկեվիչի բ. տպ. 1901 — 15

651
Ա-45
07 OCT 2010
07 FEB 2013

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

ՕՏԱՐ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ

ԿԱԶՄԵՑ

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

Բ. տիպ Ճոխացրած

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ, 7
1909

23.547

06 FEB 2013

59344.66

Ա. ՄԱՍՆ

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ա. Նամակագրութեան մասին ընդհանրապէս.—Իւրաքանչիւր նամակի գլխաւոր արժանիքը նամակի համառօտութիւնն է. միշտ պէտք է աշխատել խոյս տալ ճոռոմաբանութիւնից և մանաւանդ կրկնութիւններից, միտքը պէտք է արտայայտել քիչ, որոշ և պարզ խօսքերով ու ոճով, պէտք է աշխատել ասածն այնպէս ճըշտութեամբ բացատրել, որ ոչ վայելչութեան վնասէ և ոչ բացայայտութեան: Բառերով խըճողուած նամակից ստացողը կամ ոչինչ չի հասկանայ և կամ նոյն իսկ կարող է պատահել, որ բոլորովին հակառակ տպաւորութիւն գործէ նա ստացողի վերայ, քան ինչ որ ցանկանում էր գրողը:

Ինչպէս որ խօսակցութեան մէջ ընդունուած է վայելչութեան ու քաղաքավարութեան կանոններով ղեկավարուիլ, այնպէս էլ նամակի մէջ պէտք է առաջնորդուիլ քաղաքավարու-

թեան ընդունուած կանոններով, ուստի և ինչ նամակ էլ որ գրելու լինինք, բարեկամական, գործի վերաբերեալ թէ առևտրական բովանդակութեամբ, գրողի առաջին պարտքն է ի նկատի ունենալ իւր դիրքը, նորա դիրքը կամ կոչումը, ում որ ուղղում ենք նամակը և այնպէս ներկայացնել իւր անձը նորան, որ իբր թէ գրողը կանգնած է նորա առաջ և խօսում է հետը։

Նամակի իւրաքանչիւր կէտ պէտք է ամենկողմից կշռադատուած լինի և մէկ խնդիրը լիովին պարզելուց առաջ՝ չպէտք է դիմել ուրիշ նիւթի և ապա դառնալ դարձեալ առաջին նիւթի և այսպիսով շփոթել նամակի բովանդակութիւնը։ Առաջ պէտք է գրել աւելի կարևոր նիւթերի մասին, ապա աւելի նուազ կարևորութիւն ունեցողների մասին և այլն։

Ստացած նամակին պատասխանելիս միշտ պէտք է նամակի սկզբում յիշել նամակի ստացումը և ստացման ժամանակը. այնուհետև պէտք է առաջ նամակի կէտերին պատասխանել և ապա անցնել այլ առարկաների։

ը. Նամակագրութեան պատշաճը։—Միշտ պէտք է զգուշանալ, որ պահպանուին մի քանի ընդունուած ձևեր, սովորութիւններ և քաղաքավարութեան կանոններ, մանաւանդ օտարներին նամակ գրելիս. այս ձևերը վերաբերում են թղթին, վերնագրին, ստորագրութեան, բովանդակութեան թուականին, յետ գրութեան, հասցէին և այլն։

Թուղթը.—Թղթի ընտրութիւնը թէև այնքան էլ մեծ կարևորութիւն չունի, բայց և այնպէս ուշադրութեան արժանի է։ Հասարակ գրելու թղթի վերայ նամակ գրել կարելի է միայն ստորին դասակարգի անձանց կամ ստորադրեալներին. նամակների համար առ հասարակ գործ է ածւում փոստի կոչուած թղթի տեսակը. եթէ բարձրաստիճան անձանց ենք նամակ գրում, կամ ցանկանում ենք առանձին յարգանք ցոյց տուած լինել, նամակը պէտք է փոստի մեծ ամբողջ թղթի վերայ գրենք, իսկ հաւասար մարդկանց և մերձաւորներին կարելի է գրել փոքր չափսի թղթի վերայ։ Ինչ չափսի թուղթ էլ լինի՝ պէտք է միշտ վերցնել ամբողջ երկայնքը թերթ. անքաղաքավարութիւն է նամակ կամ թէկուզ հէնց տոմսակ գրել կէս թերթի վերայ, թէպէտ և վերան մի քանի տող լինի միայն գրուած։ Թանաքը պէտք է միշտ սև վերցնել. խիստ մեծ անքաղաքավարութիւն է պայծառ գունաւոր թանաքով գրելը։

Նամակի սկիզբը — վերնագիր։ — Նամակի ամենասովորական վերնագիրն է «Մեծապատիւ

Տէր» բառերը. այս բառերը գրւում են առանձին տողով, յետոյ դարձեալ առանձին տողով գրւում է նորա անունն ու ազգանունը, ում որ ուղղուած է լինում նամակը, իսկ այնուհետև մէջ տեղը մի փոքր պարապ տեղ թողնելով՝ սկսւում է բուն նամակը։ Վերնագիրը գրւում է թղթի չորրորդ մասից ոչ-բարձր. ինչքան մէկը դիրքով աւելի արժանի է մեր յարգանքին, այնքան աւելի մեծ տեղ պէտք է դատարկ թողնել վերևից։ Երբ նամակ ենք գրում այնպիսի անձանց, որոնց հետ մերձաւոր յարաբերութեան մէջ ենք, պէտք է գործ դնել «յարգոյամեծար», «ազնիւ», «սիրելի» և այլ ձևերը. երբեմն այս բառերն առանձին չեն գրում, այլ ուղղակի բուն նամակի մէջ, օրինակ «շնորհաւորում եմ Ձեզ, սիրելի Վարդգէս»։

Առանձնապէս յարգելի անձանց ուղղած նամակներում այդ ածականների փոխարէն գրւում է իւրեանց տիտղոսին յարմարները, որոնց ցուցակը ներքև կը գտնէք։ Տիտղոսը կամ պատուանունը երբէք կրճատ չէ գրւում։ Առ հասարակ պէտք է գիտենալ, որ «Դուք», «Ձեզ», «Ձեր» և սորա նման բառերը միշտ պէտք է գլխատառով սկսել, իսկ նշանաւոր անձանց նամակներում դոցա փոխարէն պէտք է իրանց պատուանունը գրել. օրինակ՝ իշխանին փոխանակ գրելու «խոնարհաբար խնդրում եմ Ձեզ», պէտք է ասել «շնորհ ունիմ խոնարհաբար խնդրել Ձեր պայծառափայլութիւնից». այնպէս էլ Ամենայն Հայոց կաթողիկոսին դիմելիս պէտք և գրել «շնորհ ունիմ խոնարհաբար դիմել Ձերդ Աստուածարեալ վեհափառութեան» և այլն։

ՊԱՏՈՒԱՆՈՒՆՆԵՐ

Ա. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ

ՀԱՍՑԷ	ՎԵՐՆԱԳԻՐ
Ամենայն Հայոց Կաթողիկոսի.	
Նորին Վեհափառութեան Ծայրագոյն պատրիարք կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն...	Վեհափառ Հայր. Հոգևոր Տէր. Սրբազնագոյն Քահանայապետ. Աստուածարեալ Հայրապետ. Ծայրագոյն Հովուապետ ազգիս. Ձերդ ս. Օծութիւն
Մասնաւոր Կաթողիկոսների	
Նորին ամենապատուութեան	երանաշնորհ կաթողիկոս.
Պատրիարքի.	
Նորին Ամենապատուութեան Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ (կամ առաքելական ս. Աթոռոյն Երուսաղէմայ) Տեառն.... Արքեպիսկոպոսի.	Ամենապատիւ Բարձր Սրբազան Հայր.

Արքեպիսկոպոս Թեմական.

Նորին բարձր Սրբազնութեան Թեմական Առաջնորդին Հայոց Երևանայ (կամ Վրաստ. և Իմերեթի հայկն).

Ձերդ բարձր Սրբազնութիւն.

Արքեպիսկոպոս անթեմ.

Նորին բարձր Սրբազնութեան Տ.... ս. արքեպիսկոպոսի.

Ձերդ բարձր Սրբազնութիւն.

Եպիսկոպոս.

Նորին Սրբազնութեան կամ Նորին Գերապատուութեան.

Գերապատիւ Սրբազան հայր.

Վարդապետ փոխանորդ վիճակի.

Փոխանորդի վիճակին Հայոց (Սիւնեաց) Բարեշնորհ Տ... վարդապետի.

Բարձրապատիւ Հ... վարդապետ.

Վարդապետ վանահայր.

Վանահօր (Հաղբատայ) վանուց Բարեշնորհ Տ.... վարդապետի.

Նոյն ինչ որ վերն է.

Վարդապետ անթեմ.

Բարեշնորհ կամ Բարձրապատիւ.... վարդապետի.

Նոյն.

Աւագ քահանայ.

Բարձր արժանապատիւ Տ.... աւագ քահանայի.

Բարձր արժանապատիւ Հայր.

Քահանայ.

Արժանապատիւ Տ.... քահանայի.

Արժանապատիւ կամ մեծարգոյ տէր Հայր.

Սարկաւագ.

Շնորհունակ.... սարկաւագի.

Հայր սարկաւագ

ս. Էջմիածնի Հայոց սինոդ.

Ի Լուսաւորչեան Հայոց սինոդն սրբոյ Էջմիածնի

Թեմական Ատեան

Ի վիճակային կոնսիստորիայն Հայոց Երևանայ (կամ Վրաստանի և Իմերեթի են.)

Հոգևոր կառավարութիւն.

Ի Հոգևոր կառավարութիւն Հայոց Գանձակայ.

Գործակալ.

Արժանապատիւ Գործակալի վիճակին Հայոց Կողբայ.

Բ. ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԻ

Իշխան.

Պայծառափայլ իշխան.

Վեհազն Տէր, Վեհազնութիւն.

Իշխանուհի.

Վեհազն իշխանուհի կամ Տիկին.

Շնորհաշուք տիկին.

Ժեներալ.

Նորին գերազանցութիւն,

Գերազանց տէր.

Ազնուական.

Բարեծնունդ.

Ազնիւ պարոն.

Մնացեալ այր մարդոց.

Մեծապատիւ պարոն

Մեծարգոյ տէր.

Կանանց և օրիորդաց

Համեստափայլ տիկին.

Շնորհափայլ օրիորդ, ազնիւ օրիորդ. ազնուութիւն.

Նամակի վերջաւորութիւնը։—Վերջաւորութիւնը միշտ նամակն ուղարկողի ունեցած զգացման յայտարարն է դէպի ընդունողը։ Նամակի

վերջում ստորագրութիւնից առաջ սովորաբար կրկնւում են այն բառերը, որոնք նամակի սկզբում են լինում դրուած. այն է՝ «Մեծապատիւ Տէր», «Ձերդ գերազանցութիւն», «Ամենապատիւ Սրբազան Հայր» և այլն: Նամակի ամենից շատ գործածական վերջաւորութիւնները սոքա են.

1. Խնդրեմ ընդունել յարգանքներս և անձնուիրութեանս հաւաստիքն, որով մնամ Ձեզ,
մեծապատիւ տէր,
Խոնարհ ծառայ...
2. Անկեղծ յարգանքով և անձնուիրութեամբ պատիւ ունիմ մնալ Ձեզ, մեծարգոյ տէր,
Խոնարհ ծառայ...
3. Իսկական յարգանաց զգացմամբ պատիւ ունիմ մնալ միշտ խոնարհ ծառայ
Ձերդ պայծառափայլութեան

Մերձաւոր անձանց համար գործ է դրւում հետևեալ վերջաւորութիւնները.

«Հաճեցէք խնդրեմ ընդունել խորին յարգանաց հաւաստին . . . »

«Սպասելով Ձեր պատասխանին՝ մնամ միշտ Ձեր . . . »

«Ձեզ միշտ անձնուէր . . . »

«Մնամ Քեզ միշտ սիրող եղբայր . . . »

«Ձեր անձնուէր որդին . . . »

«Ընդունեցէք անկեղծ սիրոյ ողջոյնս. . . ».

գ. Մի երկու գիտելիք նամակի բովանդակութեան կամ մարմնի մասին:

Անքաղաքավարութիւն է նամակ ուղարկել քերուածներով և յաւելուածներով:

Թուերը սովորաբար գրւում են թուանշաններով:

Ամեն երեսի ձախ կողմը և ներքև երեք տողի չափ դատարկ տեղ պէտք է թողնել, որ լուսանցք է կոչւում. իսկ միւսը երեսը անցնելու համար պէտք է սկսել ճիշտ այն տեղից, ուր որ առաջին երեսին վերնագիրն է սկսւում:

դ. Թուական:—Վաճառականութեան և գործի նամակներում թուականը գրութեան տեղը դրւում է նամակի երեսին վերևի կողմը դէպի աջ. բարձրաստիճան անձանց ուղղած նամակներում և այն նամակների մէջ, որոնցում յարգութիւնը՝ նամակագրութեան կանոնների խիստ պահպանութիւն է պահանջում, թուականն ու գրութեան տեղը դրւում է նամակի վերջաւորութիւնից քիչ ներքև ձախ կողմը և մինչև անգամ այն երեսի վերջում, ուր աւարտւում է նամակը:

ե. Յետգրութեան:—Յետգրութեան կոչւում է նամակի այն մասը, որ կարևոր է լինում աւելցնել նամակին՝ նորա լրանալուց և ստորագրուելուց յետոյ:

«Յեռագրութեան» հայերէն նամակներում սկսում է Յ. Գ. տառերով, Եւրոպացիք սկսում են P. S. տառերով, որ նշանակում է Post scriptum-այսինքն յետոյ գրուած։

Աշխատելու է խոյս տալ նամակների մէջ այդ տեսակ յաւելուածներից, և դոքա ներելի են միայն հաւասար կամ մերձաւոր անձանց ուղղած նամակներում և երբէք չպէտք է թոյլ տալ դնել բարձրաստիճան անձանց ուղղած նամակների մէջ, իսկ եթէ մարդ որևէ կարևոր բան մոռացել է նամակի մէջ՝ այն դէպքում միայն պէտք է Յեռագրութեան անէ։

Զ. Հասցէ։—Հասցէի առաջին և գլխաւոր պայմանը պարզութիւնն է և ճշտութիւնը։ Նամակը ծրարի մէջ փակելուց յետոյ՝ վերջնիս վերայ պէտք է գրել առաջ այն քաղաքի անունը, ուր նամակը ուղարկւում է, եթէ գաւառական քաղաք է՝ գրւում է թէ որ նահանգին է պատկանում. յետոյ գրւում է այն անձի պատուանունը կամ տիտղոսը, որին ուղղւում է նամակը և ապա նորա անունը, հայրանունն և ազգանունը։ Նամակի վերջում գրւում է փողոցի անունը և տան համարը։

Եթէ մէկը պայմանաւորուած է որ իւր նամակներն առանց հասցէի ուղարկուին, որպէս զի ինքը փոստում ստանայ, այդ տեսակ նամակների վերայ փոխանակ փողոցի անունն ու տան համարը գրելու՝ գրում են «Poste restante»։

Եթէ նամակը գրւում է միևնոյն քաղաքում բնակուող մէկին՝ ծրարի վերայ փոխանակ քաղաքի գրւում է այստեղ։

Նորին Պայծառափայլութեան

Իշխան Ա. Բ.

Եւանգուլեան փողոց տուն № 14

Տփխիս

Բ. ՄԱՍՆ

ՆԱՄԱԿՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ա. ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԿԱՄ ՄԵԾ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ծնողների ուղղուած

Սիրելի հայրիկ և մայրիկ

Բոլոր հոգւով և անկեղծ սրտով շնորհաւորում եմ Ձեզ նոր տարին, սիրելի ծնողներ, և մի անգամ ևս մատուցանում եմ Ձեզ իմ շնորհակալիքը այն սիրոյ և հոգածութեանց համար, որ միշտ ունեցել էք Դուք ինձ վերայ կեանքիս առաջին օրերից սկսած։ Հաւատացած եղէք, որ իմ սիրոյ զգացումներն ու որդիական անձնուիրութիւնը ընդմիշտ կմնան հոգուս մէջ։ Անհամբերութեամբ սպասում եմ այն վայրկենին, երբ բաղդը կարժանացնէ ինձ Ձեր տեսութեան, անձամբ յայտնելու Ձեզ իմ տածած զգացումները։ Աղօթում եմ Աստուծուն և ամենայն հոգւով ցանկանում, որ առաջիկայ նոր տարին երջանկութիւն բերէ իւր հետ Ձեզ համար, փարատէ Ձեր ամեն հոգսերը և Ձեր բոլոր ձեռնարկութիւնները պսակէ լիուլի յաջողութեամբ. իսկ ամենից աւելի մաղթում եմ Ձեզ կատարեալ առողջութիւն ոչ միայն այս տարի, այլ և շատ ու շատ տարիներ։ Հայցում եմ Ձեր ծնողական օրհնութիւնն իմ բոլոր ձեռնարկութիւնների վերայ, իսկ ես իմ կողմից ամեն կերպ կաշխատեմ Ձեր սիրոյն արժանի լինել և գործով ցոյց տալ, թէ ինչքան անկեղծ է իմ յարգանքը և ինչպէս մեծ սէրս դէպի ձեզ։

Մնամ Ձեզ միշտ անձնուէր և յաւէտ սիրող որդի...

Սիրելի հայրիկ.

Քրիստոսի հրաշափառ Յարութեան առաջիկայ տօնը կարծեմ թէ աւելի է զգացնել տալիս ինձ հեռաւորութիւնս Ձեզանից և յիշեցնում սիրելի անցեալս. միակ մխիթարութիւնս է այս հեռաւոր վայրում կանխօրօք շնորհաւորել Ձեզ

առաջիկայ հանդիսաւոր տօնը և ցանկալ Զ
բոլոր հոգւով, որ ուրախութեամբ անցկացն
այն և կատարեալ յաջողութեամբ, նոյնպէս
բարի առողջութեամբ, որ մաղթում եմ տ
Ձեզ Աստուած երկար տարիներ։ Խնդրեմ ի
ևս չմոռանաք և յիշէք, որ առաջին «Քրիստո
յարեաւ»ը թէպէտ և հեռուից՝ Ձեզ եմ ուղղու
Հայցելով Ձեր ծնողական խրատներն ու օրհնու
թիւնը իմ բոլոր գործերիս վերայ, մնամ Ձեզ
սրտէ սիրող և հարազատ որդի...

Սիրելի և թանկագին մայրիկ.

Մօտենում է նոր տարուայ օրը, երբ ես
սովոր եմ անձամբ մատուցանել Ձեզ իմ շնոր-
հաւորութիւնները և առբերել այն ցանկութիւն-
ներս ու խնդրուածներս, որոնց ամեն օր ուղ-
ղում եմ դէպ Աստուած Ձեր թանկագին առող-
ջութեան և Ձեր բոլոր ցանկութիւնների կա-
տարման համար. իսկ այժմ բաղդի բերմուն-
քով ստիպուած եմ այդ անել հեռուից. հաւա-
տացէք, թանկագին մայրիկ, որ այս նամակը
ոչ թէ ձևականութիւն կատարած լինելու հա-
մար եմ գրում, այլ մաքուր հոգւով. ուստի և
յոյս ունիմ, որ իմ բոլոր բաղձանքները Ձեր

բաղդաւորութեան, յաջողութեան և առողջու-
թեան նկատմամբ անշուշտ կկատարուին. ես իմ
կողմից իբրև շնորհակալութիւն Ձեր իմ մասին
տարած հոգացողութեան համար կաշխատեմ ա-
ռաջիկայ տարին ևս ուրախացնել Ձեզ իմ յա-
ջաղիմութեամբ գիտութեան մէջ։ Հաճեցէք
խնդրեմ իմ շնորհակալութիւնները նոր տարուայ
առիթով յայտնել մեր բոլոր բարեկամներին
և ծանօթներին։ Ես, փառք Աստուծոյ, առողջ
եմ, սակայն չեմ կարող ուրախ լինել, առաջին
անգամ այսպիսի մի տօնի հանդիպելով ծնողա-
կան տանից հեռու։ Ջերմագինս համբուրում
եմ Ձեզ և մնում խսկական անձնուիրութեամբ,
միշտ Ձեզ ջերմ սիրող դուստր...

Ազգականներին ուղղուած

Սիրելի եղբայր Արամ.

Թէպէտև բաղդը մեզ հեռացրել է միմեանց-
ցից, սակայն հաստատ հաւատում եմ, որ հոգ-
ւով մենք միասին ենք ապրում. ուստի և ակա-
մայից յիշում եմ անցած գնացած անգին ժա-
մերը, երբ մենք ուրախ ուրախ դիմաւորում էինք
Քրիստոսի ծննդեան տօնին. այժմ միմեանցից
հեռու լինելով՝ ես պարտք եմ համարում ինձ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

գրով արտայայտել իմ անկեղծ շնորհաւորու-
թիւնները առաջիկայ տօների առիթով և ցան-
կալ Քեզ ամենայն բարիք և կատարեալ յաջո-
ղութիւն նոր ընտրածդ ասպարիզի մէջ. լիայոյ-
եմ, որ իմ շնորհաւորութիւնը կընդունես ոչ
ինչպէս դատարկ բառեր, այլ այնպէս, ինչպէս
ուղարկում է Քեզ միշտ սիրող եղբայրդ։ Որով
հետև շատ ժամանակ չէ անցել, ինչ որ քեզ տե-
ղեկութիւններ եմ հաղորդել իմ այժմեան վի-
ճակի մասին, որ այնուհետև չէ փոխուել, ուս-
տի խօսքս չերկարացնելու համար այսքանս կա-
սեմ ընդհանրապէս, որ ողջ եմ, առողջ և առ
այժմ բաղդը ժպտում է ինձ։ Յաւելութիւն, սի-
րելի եղբայր, սրտագին համբոյրներով մնամ Քեզ
միշտ անձնուէր և անկեղծ սիրող եղբայրդ
Վարդգէս Աղանեանց։

Սիրելի պապս.

Յիշելով, թէ ինչպէս վաղ ժամանակ իմ
ծննդավայրիցս հեռանալուց առաջ, մանկութեանս
օրերից, մենք ինչպէս լաւ էինք անցկացնում
Քեզ մօտ բարեկենդանի օրերը և թէ ինչպէս
հոգացողութեամբ էինք վերաբերւում դէպի մեզ,
ինձ, որ այժմ հեռու եմ գտնւում հարազատնե-

րից, մի կողմից առանձնապէս հաճելի է ան-
ցեալի յիշողութիւնները, իսկ միւս կողմից տխուր
եմ, որ անկարող եմ Քեզ ուրախութեանց մաս-
նակից լինել, ուստի և ստիպուած եմ կանխա-
ւօք շնորհաւորել Քեզ այստեղից և ցանկալ Քեզ
շատ այսպիսի տօնախմբութիւնների արժանա-
նալ Քեզ կեանքում։ Միշտ առանձին հրա-
ճեռանքով յիշելով Քեզ, մնամ անկեղծ անձնուի-
րութեամբ Քեզ Թոռն Գիսակ Վահանեան։

Իմ սիրելի, բարի քեռի.

Քեզ՝ դէպի ինձ ունեցած մշտական սէրը
յուսադրում է ինձ, որ հաճութեամբ պիտի ընդունիք
իմ սրտագին շնորհաւորութիւնները նոր տա-
րուայ առիթով. սիրտս և հոգիս բարի բարի ցան-
կութիւններով լի են Քեզ համար. ամեն օր մաղ-
թանքներ եմ առաքում առ Աստուած, որ նա
Քեզ տայ բարեբաղդութեամբ և անդորրու-
թեամբ լի երկայն օրեր։ Իսկ ամենից մեծ ցան-
կութիւնս, որի կատարումը խիստ մեծ գին ունի
ինձ համար, Քեզ սէրն ու հովանաւորութիւնը
շահելն է, որոնց արժանի լինելու ես միշտ ջանք
եմ դնում։ Խորին յարգանքով և յաւէտ անձնուի-
րութեամբ, մնամ ձեզ սիրող քեռորդին...

Կողմնակի անձանց ուղղած

Իմ թանկագին և սիրելի Նուարդ.

Անկեղծ համակրութիւնս դէպի քեզ թելադրում է ինձ վերարտադրել մեր անցեալ յիշողութիւնները և ցանկալ քեզ բարեբաղդ օրեր Նոր տարուայ ոսնի առիթով։ Հաւատացիր, որ եթէ մէկի բաղդաւորութիւնը մօտ է իմ սրտին, այդ հէնց քոնն է, ուստի և հոգւով չափ ցանկանում եմ, որ առաջիկայ Նոր տարին ևս առողջութիւն և երջանկութիւն բերէ քեզ համար։

Առիթից օգտուելով և ի նշան մեր նախկին բարեկամութեան խնդրեմ ընդունել լուսանկարս և յիշէք ինձ. խնդրեմ ընդունիր մշտատև բարեկամութեանս և յարգանացս հաւաստիքը, որով մնամ քեզ անկեղծ սիրող ընկերուհի...

Մեծարգոյ պարոն Վահան Ցոլակեանց.

Ձեր անսպառ բարութիւնը, որ ես վայելել եմ վաղ ժամանակներից և մանաւանդ անցեալ տարի ծանր հիւանդութեանս ժամանակ, պարտք են դնում ինձ վերայ սրտիս ներքին բարեմաղթութիւնները արտաքուստ ևս յայտնելու և նոր տարուայ առիթով շնորհաւոր տարեդարձ մաղթելու Ձեզ։ Ձեր բարեբաղդութիւնը իմ սրտի ցանկութիւնն է և մշտամռունչ աղօթքիս առարկան. թող Աստուած վարձատրէ Ձեզ այն ամենի փոխարէն, ինչ որ արել էք ինձ համար. և պահպանէ ձեր թանկագին կեանքը։ Խնդրեմ շնորհաւորութիւնս ընդունուած սովորութեան մի նշան չհամարէք, այլ որպէս Ձեզ անձնուէր մի սրտի խորքից արտադրուած ցանկութիւն։

Խորին վերապատուութեամբ և անձնուէր հաւատարմութեամբ մնամ խոնարհ ծառայդ...

Մեծապատիւ Տէր Հայկ Արմենեան.

Աննկարելի ապերախտ պիտի համարուէի, մեծարգոյ վարժապետ, եթէ այս նոր տարին զանց անէի Ձեզ իմ երախտագիտութիւնս յայտնել Ձեր աշխատութեանց և խնամքի համար։ Հաւատացէք, որ բացի շնորհակալութիւնից ես նաև երախտապարտ եմ Ձեզ, որովհետև Ձեր տուած դասերն ու կրթութիւնը պիտի կազմեն իմ ապագայ կեանքիս հիմքը և ես խոստանում եմ, որ այսուհետև ևս կհետևեմ Ձեր բարի խորհուրդներին և ուսման մէջ կունենամ առաւել փոյթ և եռանդ, ինչ որ և Ձեր ցանկութիւնն է։

Հաճեցէք խնդրեմ ընդունել իմ ամենախոնարհ

ին շնորհակալութիւնը և երախտագիտութեան այս նոր ապացոյցը և մնամ Ձեր ի սրտէ անձնուէր աշակերտ...

Սիրելի բարեկամ և ընկեր Հրաչեայ.

Ժամանակը բաժնեց մեզ և թէպէտ մենք մէկմէկուց հեռու և բոլորովին տարբեր ճանապարհներով գնացինք, բայց կարծում եմ երբէք ոչ ոք չէ կարող մեզ բաժանել, որովհետև անկարելի է մոռանալ այն քաղցր բարեկամութիւնը, որ մենք անցրել ենք միասին և ոչ մի ժամանակ նոր բարեկամը չէ կարող փոխարինել մանկութեան ընկեր հին ու բարի բարեկամին։ Թոյլ տուր, ուրեմն, սիրելի ընկեր, սրտանց շնորհաւորել քեզ առաջիկայ նոր տարին և ցանկալ քեզ ամենայն բարիք։

Որովհետև ես առաջ քեզ ծանօթացրել եմ իմ կենցաղավարութեան հետ, ուստի և այժմ բաւականանում եմ միայն շնորհաւորութեամբ, հաստատելով, որ մեր ընկերական բարեկամութիւնը վերանորոգելով՝ մի փոքրիկ բաւականութիւն պատճառած պիտի լինիմ քեզ։ Ցտեսութիւն, սիրելի բարեկամ. մնամ միշտ քեզ անձնուէր ընկեր...

Ծնունդեան կամ անուանակոչութեան առիթով

Սիրելի հայրիկ.

Մօտենում է մեր ամբողջ գերդաստանի համար ուրախառիթ օրը—Ձեր ծննդեան տարեդարձը։ Ոչ տարիները, ոչ հեռաւորութիւնը չեն կարող մոռացնել իմ յիշողութիւնից այն երջանիկ ժամանակները, երբ ես անձամբ էի մատուցանում իմ շնորհաւորութիւնները. բայց ինչ արած. ամբողջ հոգւով աղաչում եմ այժմ գրով ընդունել եմ շնորհաւորութիւնը. մաղթում եմ առ Աստուած, որ թէ այս և թէ շատ այսպիսի տարեդարձներ անցկացնէք ուրախ, առողջ և երջանիկ, շրջապատուած Ձեզ սիրող զաւակներով։ Եթէ եռանդագին խնդրուածներս լսելի լինին, նոյն զգացումներն ու նոյն ցնծութիւնը երկար ժամանակ յայտնելու անպատմելի հաճութիւն պիտի ունենամ։ Կրկին անգամ ցանկանում եմ Ձեզ յաջողութիւն բոլոր գործերիդ, իսկ որ գլխաւորն է առողջութիւն, որ այնքան թանկ է և անհրաժեշտ մեր ամբողջ ընտանիքի համար։

Ջերմագինս համբուրելով Ձեզ՝ մնամ խորին յարգանքով և անչափ սիրով, Ձեր որդին...

Սիրելի և թանկագին մայրիկ

Քո ծննդեան տօնը հանդիսաւոր և սուրբ օր է իմ կեանքումս. հէնց որ զարթնում եմ ես՝ առաջին պարտքս լինում է խնդրուածքներ վերառաքել դէպի Ամենաբարձրեալը, որ նա երկայն կեանք շնորհէ քեզ, կատարեալ առողջութիւն և ցնծալից ուրախութիւն ընտանիքիդ շրջանում. ինչ որ ինձ է վերաբերում, ես ամեն կերպ աշխատում եմ ընթանալ քո ցանկութիւններիդ ու յոյսերիդ համեմատ և իմ պարտաճանաչութեամբ մխիթարել քեզ և ապացուցանել իմ անձնուիրութիւնս դէպի քեզ և շնորհակալութիւնս քո ինձ վերայ ունեցած խնամքների փոխարէն։ Համբոյր քեզ, սիրելի մայրիկ, բիւր համբոյր և մնամ միշտ անձնուէր և սիրող դուստրդ...

Սիրելի եղբայր

Վաղարշ.

Յիշում ես, սիրելի եղբայր, թէ ինչպէս դեռ մեր մանկութեան ժամանակ անհամբերութեամբ սպասում էինք յունուարի 5-ին, այնպէս էլ այժմ վաղօրօք միտս է գալիս այդ և վաղօրօք էլ գրում եմ այս նամակը, որ դու իմ

հաշուով պիտի ստանաս միշտ քո ծննդեան տարեդարձի օրը և յիշես, որ եղբայրդ միշտ սիրում է քեզ։ Եղբայրական սիրով շնորհաւորում եմ քեզ և մաղթում երկրային ամեն բարիք. չեմ կարող չցանկալ քեզ ամեն լաւ բան։ Անկեղծ ողջոյնս խնդրեմ յայտնես յարգելի...ին և նորա որդւոց, թէպէտ նոքա ինձ չեն ճանաչում, բայց թող գիտենան, որ ես նոցա սիրում եմ և յարգում։ Յաւէտ, սիրելի եղբայր. մնամ քեզ միշտ պատրաստակամ և անձնուէր եղբայր...

Սիրելի հօրեղբայր.

Մերձենում է Ձեր ծննդեան տարեդարձը, ուստի և ես միացնում եմ իմ ձայնը Ձեր մերձաւոր ազգականների ձայնին և աղաչում Աստծուն, որ Նորա հովանու տակ հասնիք խորին և բաղտաւոր ծերութեան, շատ և շատ անգամ տօնէք Ձեր ծննդեան օրը և բարեմաղթութիւնները ընդունէք Ձեզ սիրող բարեկամներից։ Այս օրը միշտ յիշեցնում է ինձ Ձեր ինձ արած բարիքները, ուստի և թոյլատուէք ինձ անկեղծ սրտով ողջունել Ձեզ և այս երկտողով վկայել Ձեզ իմ սէրն ու համակրութիւնը։ Տայ Աստուած, որ ես արժանի լինիմ դարձեալ շատ անգամ շնոր-

հաւորել Ձեր տարեդարձի օրը, պարգևէ Ձեզ Տէրը երկար տարիներ. այս է Ձեզ սիրող եղբօրորդու անկեղծ ցանկութիւնը։ Մնամ միշտ Ձեզ անձնուէր...

Բազմայարգ բարեկամ
պարոն Դրաստամատ.

Թէպէտ ծննդեան տօն շնորհաւորէքը միայն ընդունուած քաղաքավարութեան հարկ հատուցանել է համարուում, բայց ես համոզուած եմ, որ Դուք իմ նամակս լոկ ձևականութեան կատարում չէք համարի. Դուք ինձ այնպէս լաւ էք ճանաչում, որ իմ արածը երբէք կեղծաւորութիւն չի թուայ Ձեզ, այլ ուղղակի Ձեր դէպի ինձ ունեցած բարի համակրութիւնից առաջացած զգացմանցս անկեղծութեան հաւաստիք։ Եւ ուրեմն հետևելով ընդհանուր սովորոյթին՝ ցանկանում եմ Ձեզ առողջութիւն, հոգու անդորրութիւն և ընտանեկան երջանկութիւն մինչև խորին ծերութիւն և խնդրեմ ապագայում ևս չզլանալ ինձ Ձեր անգնահատելի բարեկամութիւնը, որ ես բաղդ եմ ունեցել վայելել մինչև այժմ։ Իսկական յարգութեամբ և անձնուիրութեամբ պատիւ ունիմ մնալ միշտ Ձեզ յարգող բարեկամ...

Ձերդ գերազանցութիւն
Կարապետ Յարութիւնեան.

Վստահանում եմ դէպքից օգուտ քաղել, մատուցանելու Ձեզ իմ անկեղծ շնորհակալութիւնը այն շնորհների համար, որ ցոյց էք տուել Դուք ինձ և շնորհաւորելու Ձեր գերազանցութեան անուանակոչութեան տօնը. ընդ նմին ցանկանում եմ բոլոր սրտով առաջիկայում ևս շատ և շատ անգամ կատարել նման տօնախմբութիւններ ի մխիթարութիւն այն ամենքի, որոնք բաղդ ունին Ձեզ շրջապատելու. մաղթում եմ առ Աստուած, որ օրհնէ Ձեր բոլոր բարի ձեռնարկութիւններն ու գործերը և շնորհէ Ձեզ անդորրութիւն և երկար կեանք լի առողջութեամբ։

Խորին յարգանքով և կատարեալ անձնուիրութեամբ պատիւ ունիմ մնալ.

Ձերդ գերազանցութեան
Խոնարհագոյն ծառայ...

Ամուսնութեան առիթով

Սիրելի և պատուական եղբայր Կորիւն.

Գիտես, որ մեր վաղեմի ցանկութիւնն է քեզ ամուսնացած տեսնել, ուստի և կարող ես իմանալ թէ ինչ գոհունակութիւն պատճառեց ինձ քո հարսանիքի լուրը։ Ամուսնութիւնը երջանկութիւն պիտի բերէ քեզ, որովհետև ընտրել ես քեզ համար մի առաքինի ու բարենշան անձն իբրև կենակից, որ վաղուց ծանօթ է մեզ։ Հոգւով չափ ուրախ եմ ինչպէս ընտրութեանդ, այնպէս էլ ամուրի կեանքիդ վախճան տալուդ վերայ։ Կաղաչեմ, որ Աստուած շնորհէ Ձեզ առողջութիւն և երջանիկ ապագայ։ Ներեցէք խնդրեմ, որ բարեմաղթութիւններս նուիրեմ Ձեր ամուսնոյն, իսկ ողջոյններս նոր բարեկամներիդ։ Համբոյր քեզ, նոյնպէս ամուսնոյդ և իմ քրոջ, և մնամ քեզ միշտ սիրող քոյր...

Սիրելի և պատուական քոյր Անոյշ

Վերջապէս ուրախացրիր ինձ քո ամուսնութեան համբաւով. վաղուց է որ իմ սրտի ցանկութիւնն էր քեզ պսակուած տեսնել իմ յարգած...ի հետ, ճանաչելով ամուսնուդ որպէս մի կրթուած, բարի և առհասարակ ամեն

կողմից քեզ արժանի. ես չեմ կասկածում, որ այդ ամուսնութիւնը բարեբաղդ պիտի լինի։ Հաւատացէք, որ Ձեր երջանկութիւնը ինձ համար ճշմարիտ ուրախութիւն է. յոյս ունիմ շուտով տեսնել Ձեզ և անձամբ իմ խնդակցութիւնը յայտնել, իսկ առայժմ համբուրում եմ քեզ և խնդրեմ ամուսնուդ յայտնես իմ խորին յարգանքս։ Մնամ քեզ միշտ սիրող եղբայր...

Սիրելի հօրեղբայր.

Սրտանց շնորհաւորում եմ Ձեր դստեր և իմ քոյրիկի ամուսնութիւնը բազմայարդ...ի հետայս լուրը մեծ ուրախութիւն պատճառեց ինչպէս ինձ, այնպէս էլ ամբողջ գերդաստանին, որովհետև դորանից յարմար ընտրութիւն դժուար կարելի էր սպասել, մանաւանդ որ Ձեր դուստրը մարդու է գնացել մի անձի, որ իւր ազնուութեամբ և ընտիր բնաւորութեամբ յարգանք և սէր է վայելում իրան մօտիկ ճանաչողների կողմից։ Խնդրեմ նորապսակներին հաղորդէք իմ և մեր ընտանիքի խնդիրը, որ չդլանան այցելել մեզ, որպէս զի առիթ ունենանք աւելի մօտից ծանօթանալ Ձեր պատուական փեսայի հետ։ Ի խորոց սրտէ ցանկանալով Ձեզ ամենայն յաջողութիւն և բարիք, մնամ ձեզ միշտ սիրող...

Մեծարգոյ
Պարոն Արմենակ.

Ոչ մի նորութիւն չէր կարող այն ուրախութիւնը պատճառել ինձ, ինչ որ Ձեր ամուսնութեան ախորժելի համբաւը. հաստատ հաւատացած եմ, որ այս զուգաւորութիւնը բարեբաղդ պիտի լինի Ձեր բոլոր կեանքում: Ձեր ընտրութեան հաւանում են ամեն նկատմամբ, ուստի մեզ՝ Ձեր բարեկամներին, մնում է ցանկալ ամուսնոյդ հետ միասին առողջութիւն և փոխադարձ սէր ամբողջ կեանքում: Խնդրեմ ընդունել իմ սրտագին շնորհաւորութիւնս և անկեղծ սէրս, որով մնամ յաւէտ Ձեզ սիրող և անձնուէր...

Սիրելի և թանկագին ընկերուհի
Աստղիկ.

Ձեզ կարող երևակայել, թէ ինչպէս ուրախացրեց ինձ քո պսակուելու լուրը: Եթէ ես այսքան ջերմ և անկեղծ չսիրէի, կարող էի նախանձել քեզ, որ դու այդպիսի համակրելի և ամեն կողմից արժանաւոր ամուսին գտար: Ցանկանում եմ քեզ երջանիկ օրեր. և մնամ միշտ քեզ սիրող...

Սիրելի բարեկամներ.

Երբ Ձեր ազգականներն ու անկեղծ բարեկամները իրանց շնորհաւորութիւններն են ուղղում Ձեզ Ձեր ոսկեայ (կամ արծաթեայ) հարսանեաց առթիւ, որ ներկայումս մի հազուագիւտ երևոյթ է մեր մէջ, ես թէպէտև հեռու, բայց հոգով և սրտով տեղափոխւում եմ իմ հայրենի աշխարհը և միանում եմ ուրիշների հետ, նուիրելու Ձեզ իմ սրտագին շնորհաւորութիւններս և բարեմաղթութիւնները Ձեր կեանքի այդ հանդիսաւոր օրուայ առթիւ և ցանկանում կատարեալ երջանկութիւն: Այդ օրը յիշեցնում է ինձ շատ բան, որի համար պարտական եմ ես Ձեզ: Դուք էիք, որ եռանդուն մասնակցութիւն ունեցաք իմ կրթութեան գործի վերաբերութեամբ և արիք ինչ որ կարելի էր. Ձեր արած բոլոր բարիքները մտքումս են և երբէք չեմ մոռանայ և միշտ կաղաչեմ Աստծուն, որ տայ Ձեզ առողջութիւն և բարեբաղդ օրեր: Մնամ խսկական յարգանքով և խորին անձնուիրութեամբ Ձեզ միշտ սիրող Թոռն Զարմայր:

Որդու ծննդեան առիթով

Սիրելի եղբայր Շաւարշ.

Քո հաղորդած լուրը, որ Աստուած պարգևել է քեզ անդրանիկ դուստր-զաւակ—ինձ անչափ ուրախացրեց։ Ի զուր չէ որ առաջինը դուստր է տուել Քեզ Աստուած. դա մի նշան է, որ շատ արու զաւակներ էլ պիտի ունենաք, որոնք կարող էին չափազանց ծանրաբեռնել մօրը իրանց հոգսերով, եթէ նա ապագայում մի յուսալի օգնական դուստր չունենար, ուստի պէտք է մխիթարուիք Քեր ամուսնական կեանքի այս անդրանիկ պարգևով. ճշմարիտ է մենք տղամարդիկս միշտ ցանկանում ենք, որ շուտով մի արու զաւակ ունենանք, որ թէ մեզ օգնէ, թէ ցեղը պահպանէ, բայց պէտք է չմոռանալ, որ աղջիկը շուտով մեծանալով թէ մօրը կօգնէ և թէ ապագայ մի ընտանիքի հիմքը կկազմէ։ Ցաւում եմ, որ չեմ կարող շուտով Քեզ մօտ լինել և գրկել Քեր սիրոյ առաջին զրաւականը, անհրաժեշտ գործերս զրկում են ինձ այդ բաւականութիւնից. շնորհաւորում եմ Քեզ և ցանկանում, որ Աստուած պահպանէ տիկնոջդ և նորածնի կեանքը և առողջութիւն պարգևէ նոցա։

Շուտափոյթ տեսութեան ակնկալութեամբ մնամ Քեր ընտանիքի ամեն ուրախութեանց նաչանձախնդիր և քեզ անկեղծ սիրող եղբայր...

Սիրելի և պատուական ազգականներ.

Ոչինչ բան չէր կարող ինձ այնքան ուրախութիւն պատճառել, ինչպէս այն լուրը, որ իբրև լրումն Քեր երջանիկ ամուսնութեան, Աստծուն հաճելի է եղել պարգևել Քեզ արու զաւակ, որ այնքան ցանկանում էիք և անհամբեր սրտով սպասում։ Դա հաստատ ապացոյց է Տիրոջ օրհնութեան Քեր ամուսնական կեանքին։ Յոյս ունիմ և սրտանց ցանկանում եմ, որ նորածինը ստանայ այն բարեմասնութիւնները, որոնցով օժտել է Քեզ Աստուած և պարգևէ նորան երկար կեանք յուրախութիւն և ի մխիթարութիւն ծնողների։

Խնդրեմ ընդունէք իմ անձնուիրութեանս հաւաստիքը և ջերմագին սէրս, որով մնամ միշտ Քեզ յարգող օր. Զարուհի։

Կեանքի այլ դէպքերի առիթով.

Անգին և պատուական Հայրիկ.

Մեծ ցաւով լսեցի ձեր հիւանդութեան լուրը, մանաւանդ որ վտանգաւոր է եղել այն. և հազար ու մի բան էր անցնում մտքովս։ Այն միտքը, որ կարող էի զրկուել նորանից, ում հետ ես կապուած եմ հոգւոյս բոլոր զօրութեամբ և որին ես անչափ սիրում եմ, ամբողջ հանգստութիւնը խլեց ինձանից, այնպէս որ գործով զբաղուելու բոլոր ընդունակութիւնս գրեթէ կորցրի. ամեն օր մտահոգ պաղատանքներով դիմում էի առ Աստուած քեզ առողջութիւն պարգևելու, որ լսելով որդուդ ջերմագին խնդրուածքը՝ թեթևութիւն է շնորհել Քեզ։ Գիտէք ինչ անպատմելի ուրախութեամբ իմացայ ես Ձեր առողջանալու լուրը և ինչ ցնծալից հանգստութիւն պարգևեց նա ինձ, այնպէս որ ինչքան առաջ ամեն ինչ մռայլ էր երևում ինձ, այնքան էլ այժմ ամեն ինչ ներկայանում է ինձ պայծառ գոյներով և արդէն սկսել եմ նախկին եռանդով նուիրուել իմ պարապմունքներին։ Մաղթում եմ առ Տէր, որ պահպանէ Ձեր կեանքը և բարի առողջութիւն պարգևէ Ձեզ։ Հոգեբուղխ յարգանքով համբուրում եմ Ձեր ձեռքը և նորանոր ուրախալի համբաւների ակնկալութեամբ Ձեր առողջութեան մասին՝ մնամ Ջերմագինս սիրող և անձնուէր որդիդ...

Սիրելի բարեկամ Պարոյր.

Լաւ գիտենալով, թէ ինչպէս դժուար է մեզ համար կեանքի երջանկութիւն ձեռք բերել և որ մեր բոլոր բարեկեցութիւնը կախուում ունի անձնական մշտատև աշխատանքից, ես չափազանց վշտացայ Ձեր հիւանդութեան վերայ և այնպէս ուրախ եմ առողջութեանդ համբաւի վերայ, որ անկարող եմ այն արտայայտել լիովին։ Թողնելով առ այժմ իմ մասին խօսելը, սրտանց շնորհաւորում եմ առողջանալդ և ցանկանում, որ կատարելապէս առողջութիւն գրտնես. իբրև սրտակից խնդրում եմ զգուշանաս խանգարուած առողջութեանդ, աշխատիր փոքր առ փոքր ոյժիդ չափ միայն և ոչ միանգամից։ Յոյս ունիմ շուտով կաւետես ինձ կատարեալ ապաքինութեանդ մասին և մնամ միշտ քեզ սրտակից բարեկամ...

Մեծապատիւ պարոն
Գարեգին.

Մեծ խնդութեամբ իմացայ, որ Դուք երկար սպասելուց յետոյ՝ վերջապէս ստացել էք այն բարձր պաշտօնը, որին Դուք վաղուց արժանի էիք։ Իմ ուրախութիւնս աւելի մեծ է այն պատճառով, որ այժմ Դուք կարող էք ապրել ապագայ երջանկութեան յուսով, միայն թող Աստուած Ձեզ ոյժ պարգևէ Ձեր վերայ դրուած ծանր պաշտօնը վարելու առանց Ձեր ցանկալի առողջութեանը վնասելու։ Ձեր աշխատութիւններն անշուշտ կպսակուին, որովհետև, ինչպէս լսել եմ, իշխանութիւնն ուշադրութիւն է դարձնում Ձեր օգտակար աշխատութեանց և ընդունակութիւնների վերայ։

Լիայոյս եմ, որ դուք առաջիկայում ևս չէք զլանայ Ձեր բարեկամութիւնն ինձանից և առաջուան պէս կարժանացնէք ինձ Ձեր նամակների, որովհետև ոչ ոք այնքան չէ հետաքրքրւում Ձեր յառաջադիմութեամբ և երջանկութեամբ, որքան Ձեզ անձնուէր...

Իմ անգին եղբայր
Լևոն.

Զափազանց ուրախացայ ես լսելով որ նոր պաշտօն ես ստացել. հոգւով չափ սիրելով թէ քեզ և թէ հարսիս, ցանկանում եմ, որ միշտ առաջ գնաս ու աշխատես ընդհանրութեան օգտի համար. ի խորոց սրտէ աղաչում եմ Աստծուն, որ առողջութիւն և երջանկութիւն պարգևէ քեզ։ Եթէ իմ վիճակն առանձնապէս նախանձելի չէ, առաւել ևս գոհութիւն է պատճառում ինձ իմ հարազատիս բարեյաջողութիւնն ու ապահով վիճակը։ Հաւատա, եղբայր, որ ոչ ոքի սրտին այնքան ժօտիկ լինել չէ կարող քո և ընտանիքիդ ուրախութիւնը, ինչքան քեզ անկեղծ սիրող և անձնուէր եղբօրդ...

Սիրելի քոյրիկ Անահիտ

Վերջապէս իմացայ, որ Տիրոջ յաջողութեամբ ողջամբ ժամանել ես Արտաշատ քաղաքը։ Այդ ամբողջ տաժանելի ուղևորութեանդ ժամանակ ես չափազանց անհանգիստ էի, և «ահա այժմ սիրտս հանգստացաւ ցանկալի նամակդ ստանալուց յետոյ։ Մնում է այժմ ցանկալ, որ առողջ լինիս, բաղտաւոր և գործերիդ

մէջ յառաջադէմ. յոյս ունիմ այս բոլորը կկատարուի, որովհետև իմ ցանկութիւնը բղխում է քեզ ջերմագինս սիրող եղբօր մաքուր հոգուց։ Խնդրեմ մի զրկիր ինձ քո նամակներից, որովհետև գործունէութեանդ սկզբում ամեն մի քայլ հետաքրքրական է մեզ համար։ Քո հեռանալուց յետոյ առանձին նոր բան չէ պատահել կամ հետաքրքրող. սկզբում միայնութիւն էի զգում, իսկ այժմ փոքր առ փոքր ընտելանում եմ վիճակիս։ Ջերմաջերմ համբուրիւ մնամ քեզ անկեղծ սիրող եղբայր...

Բ. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ

Սիրելի որդի.

Ես և որդեսէր մայրդ սրտագին շնորհակալութիւններս ենք յայտնում Նոր տարուայ առթիւ շնորհաւորութեանցդ համար։ Ամենալաւ շնորհակալութիւնը մեր ծնողական սիրոյ և հոգածութեան փոխարէն մենք միշտ պիտի համարենք այն ջանքը, որ դու գործ ես դնում ազնիւ և օգտակար մարդ դառնալու և դորան հասնելը կլինի մեր ամենամեծ վարձատրութիւնը քո դաստիարակութեան համար ունեցածս աշխատանքների փոխարէն։ Աշխատիր, որդի, օրաւուր կատարելագործուիլ ուսման և գիտութեան մէջ և արիաբար մարտնչել կրքերի դէմ։ Դու այնպիսի հասակում ես, որ հեշտ է քեզ համար ձեռք բերել այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է քեզ ապագայի համար։ Ամբարիր քո մէջ բարւոյ սերմերը և ապագայում կմխիթարուես ընտիր պտուղներ կթելով։ Անշուշտ կկատարես խոստումդ և այս տարի ևս նոյն բարի գաւակը կլինիս մեզ համար, ինչպէս եղել ես մինչև ցարդ. այնուհետև վստահ կարող ես սպասել մեզանից այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է քո երջանկութեան համար։

Նախախնամողի Աչը թող պահապան լինի քեզ և այս Նոր տարում և թող ցողէ Նա քեզ վերայ իւր երկնային օրհնութիւնը, այս է հօրդ և մօրդ միակ ցանկութիւնը քեզ համար. համբուրում ենք քեզ կարօտագին սիրով և մնամ քեզ սիրող հայր...

Սիրելի և պատուական քոյր
Զարմանդուխտ.

Անչափ շնորհակալ եմ Նոր տարուայ շնորհաւորութեանդ և այն ջերմ զգացմանցդ համար, որ արտայայտել էիր նամակիդ մէջ։ Փոխադարձաբար շնորհաւորում եմ քեզ առաջիկայ Նոր տարին։ Ճշմարիտ է, շնորհաւորութիւնս մի փոքր ուշացած է։ Բայց այս կայ, որ անկեղծ է և սրտանց։ Ուրախութիւն մաղթելու պէտք չունիս, որովհետև շրջապատուած ես հարազատներով և մօտիկ ծանօթներով, ի հարկէ չես էլ կարող զգալ թէ ինչ ձանձրոյթ է զգում օտարութեան մէջ ապրող մարդը։ Ես ևս քեզ պէս փափագում եմ շուտափոյթ տեսութեան. բայց չէ՞ որ անհրաժեշտ հարկն է հեռացրել մեզ միմեանցից, ուստի և սպասենք յաջող ապագային։ Ողջ լեր և բաղդաւոր, ողջոյնս յայտնիր բոլոր ազգականներին և ծանօթներին, և ընդունիր կարօտալի համբոյրս, որով մնամ քեզ հոգւով չափ սիրող եղբայրդ...

Սիրելի և բարի Վարսենիկ.

Զգիտես թէ ինչքան ուրախացրեց ինձ քո շնորհաւորական գրութիւնը Նոր տարուայ առիթով. նա յիշեցրեց ինձ անցած գնացած ժամանակները, երբ մենք միասին ապրում, միասին դիմաւորում էինք կաղանդին։ Աւելի լաւ նուէրով չէիր կարող ինձ ուրախացնել, քան քո չբքնաղ պատկերդ ուղարկելով. ճշմարիտ է, դու մի քիչ փոխուել ես, բայց դարձեալ ամեն ինչ յիշեցնում է այն քնքոյշ ընկերուհիս, որ երկար ժամանակ ուրախակից և տրտմակից է եղել ինձ։ Մաքուր զգացմամբ ցանկանում եմ քեզ այս Նոր տարուայ ընթացքում ամենայն բարիք. չեմ թուում այդ բարիքները, որ ձևականութիւն չը համարես, աղաչում եմ միայն, որ իմ իղձերը քո նկատմամբ ընդունես այնպէս, ինչպէս որ ես ընդունում եմ քոները։ Ցաւում եմ, որ հէնց այժմ անկարող եմ իմ կենդանագիրն ևս յղել քեզ, որովհետև պատրաստի չունիմ առ այժմ, սակայն յուսամ մօտ օրերս պարտքս կատարեմ. սպասիր և յիշիր միշտ քեզ անձնուէր և սրտագին սիրող ընկերուհուդ...ին։

Սիրելի ազգական
Յուսակ.

Նոր տարուայ առիթով ուղղած շնորհաւորութիւններդ մեծ խնդութիւն պատճառեցին ինձ և քո սիրոյ և շնորհակալութեան զգացումներդ ես համարեցի ամենալաւ վարձատրութիւնը այն զոհաբերութեանց փոխարէն, որ ես ապագայում ևս պատրաստ եմ միշտ անել քեզ համար այն ամենը, ինչ որ կարող եմ անել։ Ես ոչինչ չեմ խնայի քո բարեբաղդութեան համար, եթէ միայն դու էլ քո կողմից կՁանաս ձգտել այդ բանին. համոզուած եմ, որ դու բոլոր ճիգդ գործ կդնես արդարացնել ամենքի յոյսերը, որոնք բարի են ցանկանում քեզ։

Ողջ լեր, սիրելի սանս և եթէ խրատի կամ օգնութեան պէտք ունենաս՝ վստահութեամբ դիմիր քեզ միշտ սիրող քեռի...ն։

Սիրելի որդի
Վարդգէս.

Շնորհակալ եմ, որ շնորհաւորել ես ծնընդեանս տօնը. դա բղխում էր մի բարի և անկեղծ սրտից, իսկ ինձ համար ամենալաւ շնորհաւորութիւնն այն է, որ ինձ շարունակ լաւ լուրեր են հասնում քո վարքի և յառաջադիմութեան մասին, որի համար և սրտանց շնորհակալ եմ քեզանից. բայց լաւ նայիր, որ չշեղուիս ճշմարիտ շաւղից։ Դժուարատար են այն հոգսերը, որ մի հայր ունի իւր զաւակի վերայ և ինչով կարող է նա վարձատրուել այդ ամենի համար, եթէ ոչ որդու բարի վարքով և յառաջադիմութեամբ կեանքի մէջ։ Միտդ պահիր այս միշտ և ըստ այնմ վարուիր, ահա իմ ջերմ փափագս, որ յուսամ կաշխատես միշտ կատարել։ Աշխատիր, սիրելի զաւակս, օգտակար մարդ լինել և դորա համար ոչ մի դէպք աչքից մի բաց թողնիր, սորանով կարդարացնես հօրդ յոյսերը, որ բոլոր հոգւով սիրում է քեզ։ Շնորհակալ եմ երկար կեանք մաղթելուդ համար, բայց ես այդքան խորին ծերութեան փափագողը չեմ, ես միայն ուզում եմ ապրել այնքան, որ քոբարեկեցութիւնն ապահովեմ, մինչև որ դու կաողանաս տանդ նեցուկը լինել, այնուհետև ես հանգիստ գերեզման կիջնեմ։ Հայրական սիրոյ համբուրիւ ճնամ քեզ փարող հայրդ...

Սիրելի և անգին դուստր
Գիսանէ.

Քո նամակդ, յայտարար որդիական անկեղծ սիրոյդ, ստացայ և ուրախացայ։ Շնորհակալ եմ

սրտագին շնորհաւորութիւններիդ համար և ուղարկած պարգևիդ ծննդեան տօնի առիթով։ Գիտենալով սիրոյդ չափը դէպի ինձ, ես համոզուած եմ, որ քեզ համար ցանկալի էր ինձ մօտ լինել. բայց մենք պէտք է բաղտին խոնարհենք, որ սակայն մօրդ փոխարէն քեզ մի բարի և արժանաւոր ամուսին է տուել։

Գնա նոյն շաւղով, որով ընթացել ես մինչև ցարդ, մի ձանձրանար պարտականութիւններդ կատարել որպէս ամուսին և տանտիկին, և դորանով մայրդ միանգամայն վարձատրուած կլինի քեզ վերայ ունեցած խնամքների փոխարէն. հնազանդ եղիր մարդուդ, աշխատիր տան կարգապահութեամբ և տնտեսութեամբ թեթևացնել նորա աշխատանքը, և այն ժամանակ նա իւր երջանկութիւնը քո մէջ կգտնէ, իսկ դու քոնը նորանում և այս ամենամեծ մխիթարութիւնը կլինի իմ ծնողական սրտի համար։ Եթէ ես որպէս և իցէ կարող եմ օժանդակել քո բարեկեցութեան, բոլոր հոգւով պատրաստ եմ անել, ուստի և կատարեալ հաւատով կարող ես դիմել քեզ քնքշութեամբ սիրող մօրդ...

Սիրելի բարեկամ և ընկեր
Ներսէս.

Հոգւով չափ շնորհակալ եմ բարեկամական շնորհաւորութեանդդ համար ծննդեանս տօնի առիթով։ Նամակիդ մէջ արտայայտուած սրտագին զգացումներդ ինձ խիստ ուրախացրին, թէ բաղտաւորութեան և թէ դժբաղտութեան ժամանակ, սիրուած ու յարգուած մարդու բարեկամութիւնից ու կարեկցութիւնից լաւ բան չկայ աշխարհումս։ Աւելորդ եմ համարում ասել, բայց կցանկայի գործով ցոյց տալ, թէ ինչ ասիճան գնահատում եմ ես քո բարեկամութիւնը։ Ես որոշել եմ, հէնց որ գործերս թոյլ կը տան, մի քանի օրով գալ քեզ մօտ. մեծ գոհունակութիւն պիտի պատճառէ ինձ հին բարեկամիս տեսակցութիւնը և նորա հետ անցկացրած ժամերի յիշողութիւնը։

Ընդունիր անկեղծ յարգանացս հաւաստին, որով մնամ յաւէտ քեզ սիրող ընկեր...

Սիրելի եղբայր
Ռուբէն.

Անչափ շնորհակալ ենք շնորհաւորութեանդդ և ջերմ բարեմաղթութիւններիդ համար թէ ես

և թէ ամուսինս, որ միշտ առանձնապէս յար-
գանք է տածել դէպի քեզ։ Նամակդ աւելի ու-
րախացրեց մեզ մանաւանդ նորա համար, որ
ինչպէս երևում է մեր լծակցութիւնը հաճելի է
եղել ձեզ ամենքիդ։ Քաջ ճանաչելով քո պարզ-
մտութիւնը՝ ես համոզուած եմ, որ գրածդ մա-
քուր սրտից է բղխում և ոչ թէ որևէ մի դա-
տարկ խօսք է։ Շնորհակալ եմ կարծիքիդ հա-
մար կնոջս մասին, որ դործով աշխատում է
արդարացնել ասածներդ։ Նա խնդրում է իւր
ողջոյնը յայտնել քեզ և շնորհակալութիւնը բա-
րի զգացումներիդ համար ու խնդրում է, եթէ
կարելի է, այցելել մեզ։ Եւ ես մնամ միշտ քեզ
անձնուէր և սիրող եղբայրդ...

Սիրելի քեռորդի
Երուանդ.

Քո շնորհաւորական նամակը դստերս ա-
մուսնութեան մասին չափազանց ուրախացրեց
մեզ ամենքին, մանաւանդ որ, ինչպէս գրում էք
փեսայիս բարեմասնութեանց մասին Ձեզ էլ
լուրեր են հասել. իսկ ես գիտեմ, որ Դու կեղ-
ծել չգիտես, այլ եթէ մի բան գրում ես՝ ան-
շուշտ զուտ ճշմարտութիւն է. ի հարկէ ես կան-
խօրօք աշխատել եմ հետաքրքրուել և ամեն բան
իմանալ իմ ապագայ որդուս մասին և անձնա-

կան ծանօթութիւնս նորա հետ համոզեց ինձ,
որ յիրաւի նա մի ընդունակ ու արժանաւոր
անձն է։ Ես ինքս էլ իմ կողմից ամեն բան
արի, տայ Աստուած որ ապագան ինքը արդա-
րացնէ մեր յոյսերը։ Ես քո՝ նորապսակներին
տեսնելու ցանկութիւնը հաղորդեցի իրենց և
նոքա յայտնելով իրանց շնորհակալութիւնը՝
խոստանում են մօտիկ ապագայում այցելել
Ձեզ։ Ողջ լեր և անմոռաց ունեցիր քեզ սիրող
քեռի...

Մեծարգոյ պարոն
Զարմայր.

Ձեր շնորհաւորութիւնը օրհնութիւններով
հանդերձ մի նոր ապացոյց է Ձեր անկեղծ հա-
մակրութեան դէպի ինձ, որի համար և յայտ-
նում եմ սրտագին շնորհակալութիւնս։ Տայ
Աստուած, որ Ձեր ցանկութիւնները կատարուին
և որ առիթ ունենամ նման շնորհաւորութեամբ
փոխարինել Ձեզ։

Ինչ վերաբերում է ընտանիքիս՝ պէտք է
ասեմ, որ ամուսինս այնքան լաւ է արդէն,
ինչքան որ հանգամանքները թոյլ են տալիս.
նորածինը առողջ է և ուրախ։ Մկրտութիւնը
կանենք առաջիկայ կիրակի, այս անգամ առանց
հիւրերի. իսկ եթէ Դուք կցանկանաք շնորհ բե-

ելել, դա մեզ մեծ ուրախութիւն կպատճառէ, որովհետև գիտէք որ Դուք մեզ համար պաշտոնական հիւր չէք, այլ տան բարեկամը։ Սպասելով Ձեր այցելութեան՝ մնամ խորին յարգանքով և անձնուիրութեամբ,

Ծոնարն Ծառայդ...

Սիրելի որդի
Արտակ։

Շնորհաւորական նամակդ առողջանալու վերաբերմամբ մեծ խնդութիւն պատճառեցինձ, որովհետև նորա մէջ արտայայտուած էին որդիական հնազանդութեան զգացումներդ, որ ես միշտ եմ միշտ տեսնել քո մէջ։ Աստուած հաճեցաւ լսել քո խնդրուածքին և մի իրական հրաշք կատարեց, որովհետև ամենահմուտ բժիշկներն անգամ կասկածելի էին համարում իմ առողջանալը, բայց Տիրոջ օգնութիւնն ինձ վերայ իջաւ. նա արեց այն, ինչ որ մարդկային հնարներ անզօր եղան անել և Նորա այսպիսի մեծ ողորմութեան համար ես անդադար փառաբանում եմ Նորա անունը։ Հիւանդութեան հետևորդ ծանր թուլութիւնը դեռ թոյլ չէ տալիս որևէ գործ կատարել, բայց Տիրոջ օգնութեամբ և շրջապատողներիս խնամքի շնորհիւ յուսամ

շուտով կազդուրուիլ։ Ուրեմն անհանգիստ մի՛ լինիր իմ մասին և աշխատիր ջանասիրութեամբ նուիրուել աշխատանքներիդ, որ որդիական վշտից թողել էիր առ ժամանակ։

Ես դեռ այնքան ոյժ չունիմ, որ քեզ մանրամասն նամակ գրեմ, ուստի և այս անգամ սորանով բաւականացիր։

Քեզ յաւէտ սիրող հայր։...

Մեծարգոյ պարոն
Մուշեղ։

Ինչ բան կարող է այնպէս ախորժելի լինել կեանքի մէջ, քան բարեկամական մանակցութիւնը թէ ուրախութեան և թէ տրտմութեան ժամանակ։ Այո՛, բազմայարգ Մուշեղ, բաղդը ծանր և երկարատև հիւանդութեան ենթարկեց ինձ, որ հազիւ նոր է սկսել մեղմանալ։ Ձեր բարեկամական վշտակցութիւնն հիւանդութեան մէջ բաւական սխիթարութիւն եղաւ և ապացոյց է Ձեր կենդանի համակրութեան դէպ ինձ։ Կըրկին անգամ շնորհակալ եմ ուշադրութեան և բարի ցանկութիւններիդ համար, խնդրեմ ներող լինել որ երկար չեմ գրում, չափազանց թու-

լութիւնը արգելք է լինում դորան։ Մնամ խորին յարգանաց հաւատեօք, միշտ Ձեզ անձնուէր...

Մեծապատիւ տէր
Գաղիշոյ Խորխոռունի.

Ձեր շնորհաւորութիւնը պաշտօն ստանալուս վերաբերմամբ գրաւական են ինձ համար, որ ձեր բարեկամութիւնը այսուհետև ևս շահելու բարեբաղտութիւնը պիտի ունենամ, առ որ յայտնում եմ իմ անկեղծ շնորհակալիքը։ Ձեր բարեմտութեամբ խիստ մեծ արժէք էք տալիս իմ ծառայութիւններին. բայց այսքանս կասեմ, որ իմ ծառայութիւններով արժանի էի կացուցել ինձ այդ պաշտօնի։ Նոր պաշտօնիս բազմազբաղ պարապմունքները ամենամեծ բաւականութիւն են ինձ համար և միայնակ խնդրուածքս այն է Աստծուց, որ պահպանէ ոյժերս պարզերես լինելու գործիս մէջ։

Մնամ Ձեզ միշտ բարեացակամ և անխարդախ սիրով...

Սիրելի եղբայր
Արտաւազդ.

Ի սրտէ շնորհակալ եմ շնորհաւորութեանցդ

և բարի զգացումներիդ համար։ Իմ պաշտօնի համար մի քանի արժանաւոր թեկնածուներ կային և եթէ ինձ վիճակուեց այն՝ դա մեծ բաւականութիւն է պատճառում ինձ մանաւանդ այն պատճառով, որ դա՛ ցոյց է տալիս, թէ էշխանութիւնը գոհ է իմ ծառայութիւնից և լաւ կարծիք ունի իմ մասին. իսկ մի ծառայողի ապագայ յաջողութեան համար դա ամենամեծ գրաւականն է։ Ինքս աշխատում եմ ծառայել բարեխղճութեամբ և յոյս ունիմ պարտաւորութիւններս կատարել եռանդով և անթերի։ Դինս և ես ողջագուրանքով համբուրում ենք քեզ և ցանկանում ենք ամենայն բարիք...

Միշտ Ձերմ սիրող եղբայրդ...

Գ. ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծարգոյ պարոն
Գուրգէն.

Այն դառն կորուստը, որ ունեցաք Դուք յանձին Ձեր սիրեցեալ որդու, խորին և ցաւալի ազդեցութիւն արաւ ինձ վերայ. նորա ծաղիկ հասակը, մեծամեծ յոյսեր խոստացող տա-

ղանդը՝ մխիթարելու հնարաւորութիւն չեն թողնում. ես լաւ գիտեմ Ձեր սիրտն ու բնութիւնը, ուստի և հեռու եմ միշտ Ձեզ խօսքերով մխիթարելու մտքից, որոնք չեն կարող վերադարձնել Ձեզ Ձեր խանդակաթ որդին. բայց միայն ցանկանում եմ մեղմացնել Ձեր վիշտը. Ձեր որդու կորստեամբ ես ևս իմ մի անձնուէր բարեկամից զրկուեցի և գրեթէ ինձ է վերաբերում այդ դժբաղտութիւնը։ Հաւատացէք, որ հանգուցեալին բոլոր ճանաչողները ցաւակցում են Ձեզ և վշտով համակուած են նորա մահով։ Գիտեմ, որ Դուք ոչ միջոցներ էք խնայել և ոչ խնամք այդ անբաղտութեան առաջն առնելու համար, ուրեմն և արել էք ամեն բան, ինչ որ կարող էիք անել, ուստի և Ձեզ մնում է քաջաբար տանել այժմ այդ հարուածը և տայ Աստուած, որ ժամանակը, որ ամենալաւ բուժիչն է ամեն տեսակ կորուստների համար, շուտով սրբէր Ձեր աչքերի արցունքը։ Ընդունեցէք խորին յարգանաց հաւատիքը, որով մնամ Ձեզ,

մեծարգոյ պարոն,

Նուաստ ծառայ...

Սիրելի բարեկամ և ընկեր
Սուրէն.

Խորին վշտով իմացայ հօրդ մահուան լուրը և ցաւակցում եմ Ձեր տրտմութեանց, որովհետև ես սիրում էի հանգուցեալ ծնողիդ և միշտ խորին յարգանք էի տածում դէպի նա։ Նա այնպիսի թանկագին յիշատակներ է թողել իւր եւ տեսից, որ մխիթարական պէտք է լինեն նորա քեզ համար, այն է իւր բարի գործերը և առաքինութեան օրինակները, որոնք նորա իմաստութեան և բարեպաշտութեան ապացոյց են. նա ապրեց ինչպէս մի ճշմարիտ քրիստոնեայ և մեռաւ որպէս քրիստոնեայ։ Յուսա առ Աստուած, որ գիտէ բժշկել հարուածեալ սրտերը. և ժամանակը ինքը կբուժէ այն ծանր վէրքը, որ այս ծանր կորուստը դրեց քո սրտին։ Արիացիր համբերութեամբ և յիշիր, որ մահը անխուսափելի դատակնիք է ամենքի համար այս աշխարհում, իսկ չմոռանաս նաև կենդանի մնացողներին, որոնց թուում նաև քեզ միշտ սիրող բարեկամ...

Իմ նազելի և պատուական Աշխէն.

Այն մեծ կորուստը, որ ունեցար դու, այնպէս ազդեց ինձ վերայ, որ խօսք չեմ գտնում մխիթարելու քեզ։ Այո, սիրելիդ իմ Աշխէն, կատարեալ իրաւունք ունիս լալ և ողբալ, որովհետև մայրդ մի այնպիսի կին էր, որի ազնիվ զգացումները միշտ ինչպէս օրինակ էին ծառայում ուրիշներին։ Բայց, սիրելիս, եթէ լաւ մտածենք՝ կտեսնենք, որ այդպէս շարունակել չի կարելի։ Հանգուցեալը հասել էր խորին և բաղտաւոր ծերութեան. մարդկային գոյութեան վերջնական նպատակին։ Չէ՞ որ վերջերս նա յաճախ տանջւում էր ծերութեան յատուկ այլ և այլ հիւանդութիւններով, որոնք ինքն ըստ ինքեան դէպի մահն են տանում։ Քեզ մնում է աղօթել, որ Աստուած ընդունէ նորա հոգին երկնային արքայութեան մէջ. այս է քո որդիական վերջին պարտքը դէպի նա, որ դու պարտաւորեաս կատարել այս կեանքում։ Սրբիր արտասուքդ և գոհացիր Աստծուց, որ նա այնքան ապրեցրեց մօրդ, մինչև որ կարիք ունէիր դու կողմնակի օգնութեան։ Աստուած տայ, որ մենք ամենքս արժանի լինինք այնպիսի երջանիկ և խաղաղ մահուան, ինչպիսի երկրաւոր վախճան

որ ունեցաւ քո հանգուցեալ մայրը։ Ցտեսութիւն, սիրելի Աշխէն, և անմոռաց ունեցիր քեզ միշտ անձնուէր ընկերուհիին...

Սիրելի և անգին քոյր Հռիփսիմէ.

Դատերդ վաղաժամ կորուստը չափազանց վշտացրեց ինձ։ Կուզէի մխիթարել քեզ։ բայց անկարող եմ զգում ինձ այդ անել. որովհետև հէնց որ յիշում եմ իմ սիրելի...ին՝ արիւնով լցւում է սիրտս. թեթևութիւն եմ զգում միայն արտասուելով։ Եթէ ես այսպէս եմ սրտնեղում, հասկանում եմ թէ ինչ կլինի քո դրութիւնը։

Բայց, սիրելի քոյրիկ, աղաչենք Աստծուն, որ նա ոյժ և քաջութիւն տայ մեզ տանել այս սրտցաւերը և հանգստութիւն պարգևէ մեր սրտերին։ Մի տխրիր խնդրեմ և Աստուած համբերին։ Մի տխրիր խնդրեմ և Աստուած համբերութիւն թող տայ քեզ. ինամ քեզ ի սրտէ սիրող եղբայրդ...

Մեծարգոյ տիկին Մարգարիտ.

Ձեր պատուական ամուսնոյ մահուան տրրտմական գոյժը համակեց մեզ ամենիս անմխիթար

սդով։ Ձեզ հետ միասին ողբալով Ձեր սիրելի ամուսնու և իմ ընարելագոյն բարեկամի կորուստը, այդ վիճակիդ մէջ հարկ եմ համարում առաջարկել Ձեզ իմ ծառայութիւնները և այն ամենը, ինչ որ ես կարող եմ անել։ Իմ վիշտը չափազանց մեծ է և ոչ մի բան չէ կարող մխիթարել ինձ, բացի Աստուածային հրամանին հնազանդուելուց։ Մտածեցէք մի վայրկեան նորա քրիստոնէական վախճանը և մխիթարուեցէք այն մտքով, որ հանգուցեալն այս աղցաւոր աշխարհից տեղափոխուել է անանց կեանքը։ Յարգեցէք նրան մշտապէս, յիշելով այն սէրը, որ նա տածում էր դէպի Ձեզ իւր կեանքի ամբողջ ընթացքում։ Ձեր բոլոր քնքշութիւնները դարձրէք ձեր որդւոց վերայ, որոնցում արտափայլուած է նորա՝ Ձեր սրտին այնքան թանկագին տիպարը։ Այժմ դուք պիտի լինիք նոցա և հայրը և մայրը և ձեր մխիթարութիւնը կը գտնէք նոցանում։ Տայ Աստուած, որ Ձեր որդիքը արժանի լինին այն յարգանքի, ինչ որ վայելում էր իրանց հանգուցեալ հայրը։ Այս ցանկութիւններով մնամ Ձեզ միշտ յարգող խոնարհ ծառայ...

Մեծապատիւ պարոն
Վռամշապուհ.

Ձեր հիւանդութեան լուրը չափազանց վշտացրեց ինձ, ինձ՝ որ անչափ սիրում եմ և անձնուէր եմ Ձեզ։ Բայց խնդրեմ մի վհատիք և յիշեցէք, որ հիւանդութիւնն ու նեղութիւնները մարդուս կեանքի անբաժան ընկերներն են։ Գուցէ և ձեր հիւանդութիւնը Տիրոջ կողմից մի փորձութիւն է և ապագայ բարեյաջողութեան մի նշան։ Ես հաւատացած եմ, որ յետոյ Դուք կը համոզուիք իմ ասածների մէջ, որին և ես փափագող եմ ի բոլոր սրտէ։ Համբերութիւն ունեցէք և հեռու վանեցէք Ձեզնից ամեն տխուր մտածումներ, որոնք օգուտ չբերելուց զատ՝ դեռ արգելք են լինում շուտափոյթ առողջացման, որին անհամբերութեամբ սպասում են Ձեր բոլոր բարեկամները և մանաւանդ ես, որ մնամ առ Ձեզ միշտ անփոփոխ անձնուիրութեամբ

Խոնարհ ծառայ...

Ընտիր բարեկամ և ընկեր.

Ձեր գլուխն եկած դժբաղդութեան լուրը խորը խոցեց ինձ։ Աստծուն հաճելի է եղել փորձութեան ենթարկել քեզ, բայց յուսա նորա վե-

բայ և հաւատա՝ որ երբէք չի զրկում նա մեզ իւր ողորմութիւնից, քեզ էլ չի զրկի։ Ցանկանում եմ մանաւանդ, որ այդ ձախորդութիւնը վատ ազդեցութիւն չունենայ առողջութեանդ վերայ, որով և քո ընդունակութիւններիդ շնորհիւ դեռ կարող ես յետ բերել գնացածը և վերականգնել քո նախկին դրութիւնը, որ անհրաժեշտ է ընտանիքիդ և զաւակներիդ համար։ Ցիշիր, որ օգնութիւնը այնքան աւելի մօտ է լինում մեզ, որքան անհրաժեշտ նորա պէտքը. յիշիր որ բազմաթիւ բարեկամներ ունիս, որոնց դու ձեռք ես կարկառել կեանքի ծանր րոպէներում, նոքա անշուշտ պատրաստ կլինին օգնութեան հասնել քեզ առաջին րոպէներին, որ թ հարկէ ոչինչ ամօթ չէ, քանի որ քեզ պատահած ձախորդութեան մէջ մեղաւորը ինքդ չես։ Եվ ինքս էլ քո բարեկամներից մէկը լինելով սեպուհ պարտքս եմ համարում օգնել քեզ ինչով որ կարող եմ. առ որ խնդրեմ մի երկտողով յայտնես ինձ թէ ինչ ծառայութիւն կարող եմ անել քեզ և հաւատա՝ որ պատրաստ եմ ցանկութիւնդ անմիջապէս կատարել։ Բոլոր սրտով ցանկանում եմ քեզ առողջութիւն և հոգու անդորրութիւն, որով շուտով կարող պիտի լինիս վերադարձնել կորցրածդ և մնամ միշտ քեզ սիրող բարեկամ...

Դ. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ

Մեծարգոյ պարոն
Արամայիս.

Անկեղծ սրտով շնորհակալ եմ Ձեր նամակի համար, որ ջերմ զգացումներով լի էր դէպ ինձ և հանգուցեալ զաւակս. ի հարկէ մխիթարել ինձ ոչ Դուք և ոչ այլ ոք անզօր էք. ամենալաւ մխիթարութիւնը ներկայումս Ձեր նամակն է, իմ ամենամտերիմ բարեկամիդ, որ շատ լաւ ճանաչում էիք հանգուցեալին, ուստի և կարծում եմ որ դուք ամենից լաւ կըմբռնէք այն ցաւ ու կսկիծը, որ համակեց ինձ այս անդարմանելի կորուստից յետոյ։ Խորհուրդ էք տալիս քաջութեամբ տանել, բայց մթթէ կարող է մի հայր ոչ քաջաբար տանել այն որդու կսկիծը, որ արժանի էր կացուցել իրեն հօր խնամքներին և փառաքշանքներին։ Բիւր անգամ շնորհակալ եմ յիշելուդ համար և խոստովանում եմ, եթէ նամակդ անզօր էր մեղմացնել ցաւս ու կսկիծս, գոնէ թեթևացրեց իմ հոգին ու սիրտը, որի համար ի սրտէ շնորհակալ եմ, և մնամ միշտ պատրաստակամ ծառայդ...

Աղնիւ և սիրելի
Երանեակ.

Ներիր, որ այսքան ժամանակ ուշացրի անկեղծ բարեկամական նամակիդ պատասխանը. բայց պատճառը երևի քեզ հասկանալի կը լինի. բացի մօրս կորստից, որ անպատմելի վշտի մէջ թաղեց ինձ, դեռ ստիպուած էի տան տնտեսութեան գործն էլ ստանձնել, որ ամբողջապէս դրուած էր հանգուցեալի վերայ։ Ամեն օր ես հարկադրուած եմ յիշել և տեսնել այն հոգսերը, որ մօրս մահուամբ ճնացին ինձ վերայ և որոնք աւելի բարդում են իմ ժառանգութիւնը։ Նամակդ ի հարկէ բոլորովին ինձ մխիթարել չէր կարող, բայց նա մի կաթիլ բալասան լցրեց իմ տանջուած հոգու վերայ և բաւականին թեթևացրեց։ Հէնց որ տունը քիչ թէ շատ կարգի կդնեմ, կգամ քեզ մօտ և յոյս ունիմ, որ մեր տեսակցութիւնը առաւել կամոքէ իմ վիշտը և ոյժ կներշնչէ քեզ միշտ հոգով չափ անձնուէր ընկերուհի...ն։

Սիրելի և անփոխարինելի եղբայր
Վարազդատ։

Շնորհակալ եմ եղբայրական անկեղծ կարեկցութեանդ և վշտակցութեանդ համար. բայց

մտածիր, եթէ քեզ վերայ այդպէս ծանր ազդեցութիւն է արել դստերս մահը, հապա ինչ պիտի լինի իմ դրութիւնը. չեմ ուզում անգամ պատմել, թէ ինչքան եմ տանջուել ես մինչև այժմ և այլ մխիթարութիւն չի կարող լինել ինձ համար, նոյն իսկ ամուսինս, որ ինքն ևս տանջւում է, թէպէտ խնամքով ծածկում է ինձանից այդ և դորանով իմ ցաւին ցաւ աւելացնում։ Մենք սպասում էինք, որ ինքդ անձամբ կգայիր և գոնէ մի փոքր մխիթարէիր քո ներկայութեամբ, բայց գրում ես, որ գործերդ չեն թոյլ տուել։ Խնդրեմ, հոգիս, շուտով գործդ կարգի դնես և գաս, որով բաւական մխիթարած կը լինես մեզ։ Կարօտալի համբոյր ճակատիդ. ամուսինս ողջունում է քեզ և խնդրում այցելել քեզ միշտ սիրող քոյր... ին։

Մեծարգոյ պարոն
Աղան.

Հազիւ թէ քիչ շունչ առայ երկարատև և ծանր հիւանդութիւնից և գրիչ բռնելու կարողութիւն ունեցայ և ահա առաջին և ախորժելի պարտքս համարեցի շնորհակալութիւն յայտնել Ձեզ յիշելու և այն ջերմ ցաւակցութիւնների

համար, որ նամակով հաղորդել էիք ինձ։ Երբ Ձեր նամակն ստացայ՝ այնքան թոյլ էի, որ իսկոյն չէի կարող գնահատել. բայց որքան քաղցր է մի առողջացող մարդու համար մի քանի սփոփիչ տողեր կարդալ և տեսնել, որ իւր մասին հոգացողներ կան, ի սրտէ շնորհակալ եմ Ձեր պատուական նամակի համար։ Այժմ հետզհետէ յոյսս աւելանում է, որ շուտով ոտքի կելնեմ և կարող կլինիմ ձեռնարկել իմ սովորական աշխատութեանց, թէպէտ ճշմարիտն ասած, կար ժամանակ, երբ ձեռք էի վերցրել այս աշխարհից։ Յոյս ունիմ մօտիկ ժամանակներում անձամբ մատուցանել իմ շնորհակալութիւնս Ձեր բարեկամական զգացումների համար, վասն զի բժիշկները խորհուրդ են տալիս ինձ մի առժամանակ գիւղ գնալ կազդուրուելու համար. իսկ առ այժմ խնդրեմ ընդունէք խորին յարգանացս և անձնուիրութեանս հաւաստիքը, որով մնամ ամենախոնարհ ծառայդ...

Սիրելի բարեկամ և ընկեր
Բաբգէն.

Բարեկամական սիրալիր նամակդ, որով առաջարկում ես քո օգնութիւնը վերահաս ձախորդութեան միջոցին, որ այնքան հազուագիւտ երևոյթ է այս նիւթական դարում, ազդեց հոգւոյս խորքի վերայ, միևնոյն ժամանակ բաւական զօրացրեց ինձ դժբաղտութեան մէջ. այժմ ես տեսնում եմ և մտածում, որ յիրաւի քեզ պէս միւս բարեկամներս էլ բարձի թողի չեն անի ինձ, չեն թողնի առանց օգնութեան և այդպիսով ոտի կկանգնեցնեն ինձ, իսկ այնուհետև ես գիտեմ, թէ ինչպէս կաշխատեմ ընտանիքիս գոյութիւնը ապահովելու և երախտագէտ լինելու ինձ օգնութիւն հասնողներին։ Հարցնում ես, թէ ինչով կարող ես ինձ օգնել և առաջարկութիւնդ այնպէս սրտանց է, որ ես կարելի եմ համարում օգտուել դորանից և առանց քաշուելու յայտնել իմ կարիքը. այսօր մեզ անհրաժեշտ է մի բնակարան, ուր կարող լինինք մի կերպ տեղաւորուել և եթէ հնարաւոր համարես քո տանը մի երկու սենեակ տալ, դա այն օգուտն ես կունենամ օգտուել ինձ համար, որ միջոց կունենամ օգտուել նաև քո ամենօրեայ խորհուրդներից, մինչև որ քիչ շատ կարգի կը դնեմ գործերս։ Եթէ խնդրիչ շատ կարգի կը դնեմ գործերս։ Եթէ խնդրեմ շուտ յայտնէք, հակառակ դէպքում խնդրեմ մի արժանի բնակարան գտնես մեզ համար։ Մանրամասնութիւններ մեզ պատահած ձախորդութեան մասին ես կյայտնեմ երբ կտեսնուինք։ Մերայինք

ամենքը իրանց յարգանքն են յայտնում Ձեզ և բարեկամական շնորհակալութիւնը առաջարկիդ համար։ Մնամ միշտ անձնուէր և երախտապարտ բարեկամ և ընկերդ...

Ե. ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծապատիւ պարոն
Գարջոյլ.

Դուք բազմիցս ապացուցել էք, որ միշտ պատրաստակամութեամբ կատարում էք Ձեր բարեկամների ցանկութիւնները. ուստի և առանց քաշուելու դիմում եմ Ձեզ՝ մօտիկ ազգականներիցս մէկի մասին մի խնդրով։ Այս երիտասարդը, որի համար Ձեր միջնորդութիւնն եմ հայցում, կամենում է առենադպրի պաշտօն ստանալ... դիւանատանը. բայց որովհետև ծանօթ չէ իշխանաւորի հետ, ինձ է դիմել, որ Ձեր միջնորդութիւնը խնդրեմ. այս պատուական անձը թէ իւր վարք ու բարքով և թէ ընդունակութիւններով միանգամայն արժանի է ամենայն յանձնարարութեան և ինչ որ նորան շնորհ ցոյց տաք՝ պիտի համարիմ թէ ինձ էք արել. այդ

բարեկամութիւնը ես պիտի համարեմ Ձեր դէպի ինձ անգնահատելի բարեհաճութեան խբբև մի նոր ապացոյց։ Համոզուած լինելով, որ միշտ պատրաստ էք մերձաւորների բարեբաղդութեան օժանդակ լինել՝ յոյս ունիմ, որ խնդիրս անտես չէք անի, որի համար թէ ես և թէ ազգականս կը մնանք միշտ երախտապարտ և շնորհակալու սրտով ամենախոնարհ ծառայդ...

Մեծապատիւ պարոն
Մամբրէ.

Նամակաբերս եղբայրս է, որ ցանկանում է պաշտօն ունենալ իշխան Ա...ի կալուածներում։ Յոյս ունիմ, որ դուք, մօտիկ ազգական լինելով իշխանին, կկատարէք եղբօրս խնդիրը և մի որևէ գործ կը յանձնէք յիշեալ կալուածքում։ Կարող եմ հաստատ հաւատացնել, որ գոհ պիտի մնան նորանից. հակառակ դէպքում ես չէի վստահիլ յանձնարարել։

Խորին յարգանաց հաւաստեօք՝ մնամ խոնարհ ծառայդ...

Մեծապատիւ պարոն Եղիշէ,
յարգոյ բարեկամ.

Լսեցի, որ հարկաւոր է Ձեզ մի ընդունակ մարդ Ձեր գործերը կառավարելու համար։ Եթէ դեռ ևս ոչ ոքի չէք վարձել, ես կյանձնարարէի թղթաբերիս, որ իւր ընդունակութիւններով ինքը լաւապէս պիտի ներկայացնէ իրան Ձեզ։ Մինչև այժմ նա իւր աշխատանքով օգնել է իւր չքաւոր ու հիւանդ մօրը։ Ես նորան ծանօթ եմ մի քանի տարուց ի վեր և կարող եմ Ձեզ հաւատացնել, որ նա միշտ լաւ է պահել իրան և իւր բարի վարքի համար ամենքից գովեստներ է ընդունել։ Եւ յոյս ունիմ, որ իւր ջանասիրութեամբ և կանոնաւոր ու ճիշտ գործակատարութեամբ Ձեր բարեհաճութիւնը պիտի գրաւէ. բացի սորանից, Ձեր ձեռքի տակ նա աւելի կընտելանայ գործին և Ձեր շնորհիւ իւր ապագայ բաղդաւորութեան հիմքը կդնէ, որով առաւել միջոց կունենայ օգնել իւր թշուառ մօրը և կմնայ յաւէտ երախտապարտ Ձեր սիրելութեան, որիդ միշտ խոնարհ յարգանքով...

Մեծարգոյ պարոն
Արշալոյս.

Բարեկամներիցս մէկը պատմեց, որ Ձեր որդւոց համար ուսուցիչ էք ցանկանում վարձել. ուստի շտապում եմ ուղարկել Ձեզ մօտ սոյն գրաբերին։ Դա մասնաւոր շատ տներում ուսուցչութիւն է անում և լաւ վկայագրեր ունի։ Հաւատացած եմ, որ շատ գոհ կմնաք դորանից և Ձեր որդիքը դորա ղեկավարութեամբ կարճ ժամանակում զգալի յառաջադիմութիւն ցոյց կտան ուսմանց մէջ. իսկ դորա վարքի ու բարոյականի մասին ես եմ երաշխաւորը։ Ձեզ շատ լաւ յայտնի է, որ ես սիրում եմ Ձեզ և Ձեր համայն գերդաստանը, հէնց այդ պատճառով պիտի հաւատաք, որ անարժան մէկին չեմ առաջարկի Ձեզ և առիթ չեմ տայ մեր բարեկամութեան խզուելուն։

Ճշմարիտ յարգանքով և անձնընծայութեամբ
մնամ խոնարհ ծառայդ...

Մեծապատիւ պարոն
Շաւասպ.

Այս օրերս իմացայ իմ մէկ մօտիկ ծանօթից, որ Ձեզ մի հմուտ գործակատար է հար-

կաւոր։ Առաջարկում եմ Ձեզ գրաբերիս։ Ես դորան վաղուց ճանաչում եմ և այն՝ լաւ կողմերից։ Շատ լաւ գիտէ հաշուապահութիւն, բընաւորութեամբ ազնիւ և համեստ՝ յոյս ունիմ որ ախորժ տպաւորութիւն պիտի գործէ Ձեզ վերայ և ուրախ եմ, որ սորանով մի չնչին ծառայութիւն պիտի արած լինիմ Ձեզ։

Խորին յարգանքով պատիւ ունիմ մնալ,
միշտ խոնարհ ծառայդ...

Շնորհափայլ տիկին.

Իմ մի բարեկամուհուց իմացայ, որ ուզում էք մի վարժուհի գտնել Ձեր երեխայոց համար և ես շտապում եմ նամակովս Ձեզ մօտ ուղարկել այս օրիորդին. դա մի զարգացած ու բարեբարոյ անձն է. շատ յայտնի տներում ուսուցչուհու պաշտօն է վարել, որի համար և ունի պատշաճաւոր վկայագրեր։ Դորա օրինակն ու խրատները շատ օգտակար կարող են լինել Ձեր որդւոց համար։ Ես երբէք չէի երաշխաւորիլ դորա համար, եթէ ամենաչնչին կասկած անգամ ունենայի դորա արժանիքների մասին։

Մնամ մշտապատրաստ Ձեր ծառայութեան...

Զ. ԱՂԱՉԱՆԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծարգոյ պարոն
Աբգար.

Ձեր հանրահռչակ ողորմածութիւնն ու մեծահոգութիւնը համարձակութիւն են տալիս ինձ դիմել Ձեզ և Ձեր բարեհաճ ուշադրութեան ներկայացնել հետևեալ խնդիրը։

Աննախատես դժբախտ հանգամանքներին զոհ գնալով՝ այժմ գտնւում եմ՝ յետին դրութեան մէջ։ Իմ բոլոր յանցանքս նորանումն է կայանում, որ ես իմ պարզմտութեամբ և բարեհոգութեամբ իմ ամբողջ կարողութիւնս ծախսեցի մի ձեռնարկութեան վերայ, որ յուսախաբ արեց թէ ինձ և թէ բոլոր մասնակցողներին։ Այսպիսով ես պարտքի տակ ընկայ և կնոջով ու փոքրահասակ զաւակներով մնացի անկարող և անօգնական։

Այսպիսի ողբալի վիճակի մէջ Ձեր ողորմածութեանն եմ դիմում և օգնութեան։ Միակ օգնութիւնը, որ ներկայումս կարող էք Դուք ինձ անել, այն է, որ երկարաձգէք Ձեզ ունեցած պարտքերիս վճարումը, որով ինձ միջոց տուած կլինիք քիչ շատ կարգի դնել խանգա-

բուած գործերս։ Ցոյս ունիմ, որ ժամանակով բոլոր պարտքերս կվճարեմ։ Մի զլանաք խնդրեմ ձեռք կարկառել դէպ ինձ, տարածել ինձ վերայ Ձեր հովանին և ներեցէք յանդգնութեանս, որ վստահանում եմ ձանձրացնել Ձեր լսելիքը, վասն զի քաջ գիտեմ, որ Դուք Ձեր մեծահոգութեամբ թոյլ չէք տայ ինձ յուսահատութեան մատնուել ընտանիքովս միասին, որոնք միշտ օրհնաբանող են Ձեր պատուական կեանքի։

Ինձ և ընտանիքս յանձնելով Ձեր վեհանձնութեան խնամքին և ողորմածութեան և Ձեր քաղցր ուշադրութիւնը հրաւիրելով իմ խղճալի կացութեան վերայ, մնամ ամենախորին յարգանքով և անձնուիրութեամբ, Ձեր մեծապատուութեան ամենախոնարհ ծառայ...

Ձերդ գերազանցութիւն
Պարէտ Վահէեան.

Բաղդ ունենալով երկար տարիներ ծառայել Ձեր իշխանութեան ներքոյ, միշտ վայելել եմ Ձեր գերազանցութեան բարեհաճութիւնը։ Իշխանաւորիս այդպիսի քաղցր ուշադրութիւնը, որի համար ակներև է եղել իմ պարապմունքն ու ջանասիրութիւնը, վստահութիւն են ներշնչում ինձ մտածել, որ իմ ծառայութիւնս անօ-

գուտ չէ եղել և գուցէ աւելի օգտակար կերպով կարող լինիմ շարունակել, եթէ մի փոքր աւելի ընդարձակուի գործունէութեանս ասպարէզը։ Ես մտածում եմ, որ ծառայութեանս տեղափոխութեան ցանկութիւնս անախորժ չի թուայ Ձեզ և անփոփոխ կմնայ Ձեր առ իս համակրութիւնը։

Ուստի ի նկատի ունենալով, որ (այս ինչ) պաշտօնը պարապ է, որոշեցի խոնարհաբար հայցել Ձերդ գերազանցութեան միջնորդութիւնը, որպէս զի այդ պաշտօնը ինձ յանձնուի։ Հաւատացած եմ, որ Դուք Ձեր բնածին բարութեամբ և պատրաստակամութեամբ չէք մերժի խնդիրս և բարեբաղդ կկացուցանէք Ձեզ միշտ խոնարհ և անձուէր ծառայ...ին։

Մեծապատիւ պարոն
Անդրանիկ.

Ձեր անչափ զիջող բնաւորութեամբ Դուք միշտ իրաւունք էք տուել ինձ դիմել Ձեզ ամեն անգամ կարիք ունեցածս ժամանակ։ Ձեր բարութեան վրայ յուսացած խնդրեմ այս անգամ ևս չզլանալ ինձ Ձեր հովանաւորութիւնը։ Անչափ կը պարտաւորացնէիք Դուք ինձ, եթէ աշխատէիք

մի պաշտօն տալ իմ որդուն (այս ինչ) ծառայութեան մէջ։ Ծերութեանս և հիւանդութեանս պատճառով ես արդէն զգում եմ, որ բանի պէտք չեմ այլևս, բայց, փառք Աստուծոյ, որդի ունիմ և կցանկայի, որ նա իմ տեղս բռնէր։

Նպաստաւոր մի պատասխանի սպասելով, մնամ ամենախորին յարգանքով, խոնարհ ծառայ...

Ազնուամեծար Տէր
Վահրամ Թորգոմեան.

Ձեր ողորմածութեան մարդասէր խնամքին դիմող դժբախտների ամեն օր ընդունուած բարիքները ըստ ամենայնի ապացուցանում են, որ հրամանքդ աղքատների ու տառապեալների պաշտպան էք հանդիսանում։ Հինգ ամսրահասակ որդուց տէր մի խեղճ այրի կին, որ վեց ամսից ի վեր միմեանց ետևից այլ և այլ աղէտների ու անակնկալ պատահարներին զոհ տուած է իւր ամուսինն ու տուն ու տեղը և որ այժմ աստուած հացի կարօտ՝ բարերար անձանց մարդասիրութեան է կարօտ, համարձակւում է դիմել Ձեր մեծապատուութեան և օգնութիւն հայցել։

Հաւատացէք, բարերար Տէր, որ այս մեծ

բարեգործութեամբ պիտի բազմանայ Ձեր պատուական անուան երախտապարտ սրտով օրհնողների թիւը։

Ամենախորին յարգանքով և ակնկալու աչօք մնամ խոնարհ աղախինդ...

Մեծապատիւ և բազմերախտ Տէր
պ. Խոսրով.

Դուք արդէն բազմիցս ցոյց էք տուել Ձեր հմակրութիւնը դէպի մեր ընտանիքը, ուստի և ես այն յուսով, որ ձեր զգացումները նոյնն են մեր վերաբերութեամբ, սիրտ առայ ձանձրութիւն տալ Ձեզ հետևեալ խոնարհ խնդրովս։ Ձեզ շատ լաւ յայտնի է, որ որդւոց կրթութիւն տալը սուրբ պարտականութիւն է ամեն մի ծնողի համար, որ ցանկանում է իւր ծերութիւնը անցկացնել անդորր և մխիթարուած։ Հիւանդութիւն և ընտանեկան այլ և այլ պարագաներ թոյլ չեն տալիս ինձ այս ծանր պարտքս կատարել։ Խնդրեմ չզլանալ ինձ Ձեր օգնութիւնը և բարերար հանդիսանալով իմ զաւակներին տեղաւորեք մի որևէ յարմարաւոր ուսումնարան։ Ես նոցա միանգամայն յանձնում եմ Ձեր բարեհաճ կամքին, տուէք նոցա ուր և յարմար կհամարէք։

Ձեր բարի սիրտը գիտեմ ես, այն էլ շատ լա
գիտեմ, թէ ինչ գեղեցիկ բարոյական ուղղու-
թիւն տուիք Ձեր որդւոց կրթութեան. վստա-
եմ, որ անուշադիր չէք թողնի և իմ զաւակներին։

Խորին յարգանքով և անձնուիրութեամբ մը-
նամ խոնարհ ծառայ...

Ի. ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծարգոյ պարոն Բակուր.

Ձեր զուտ քրիստոնէական օգնութեամբ
Դուք այնպիսի մեծ բարիքներ էք արել ինձ, որ
ես սրբազան պարտքս եմ համարում սրտագին
շնորհակալութիւնները ժամանակ Ձեզ։

Ձեր ողորմութեան շնորհը ոչ թէ միայն
ինձ վերայ է ծաւալել, այլ և ամբողջ ընտանի-
քիս վերայ, և անշուշտ բարձրեալն Աստուած
վարձահատոյց կլինի Ձեզ այն բարիքների հա-
մար, որով երջանկացրիք մի ամբողջ գերդաս-
տան, որ թէպէտ աղքատ է քառերով, բայց հա-
րուստ է զգացումներով արտայայտել իւր շնոր-
հակալութիւնը Ձեր բարերարութեանց համար։

Աստուած թող օրհնէ Ձեզ և վարձատրէ Ձեր
առատաձեռնութեանց փոխարէն։

Ամենախորին անձնուիրութեան զգացում-
ներով մնամ միշտ երախտապարտ ծառայ...

Մեծարգոյ պարոն Վաղինակ.

Ինձ պատահած դժբաղդութիւնն այնպէս
ծանր էր, որ բոլորովին շփոթուել էի և չգի-
տէի ում դիմեմ։ Ցանկարծ ստանում եմ Ձեր
նամակը և իմ տխրութիւնը ուրախութեան փո-
խարկուեց։ Միթէ՞ հնար էր, որ դուք այդպիսի
ընդարձակ զբաղումների մէջ ժամանակ գտնէիք
և կարևոր համարէիք ուշադրութիւն դարձնել
ինձ վերայ։ Սկզբում ճշմարիտ, ես չհաւատացի
իմ աչքերիս, բայց նամակդ կրկին և կրկին ան-
գամ կարդալով հաւատացի, որ տակաւին կայ
մէկը աշխարհումս, որ կարեկից է իմ վիճակին։
Դուք արժան էք համարում ինձ օգնութեան
ձեռք կարկառել։ Հաւատացէք, որ անձնուիրու-
թեան խորին զգացմամբ լի է այսօր իմ սիրտը
դէպի Ձեզ, իբրև դէպի իմ բարեկամի և բարե-
բարի։ Ես ի հարկէ անկարող եմ ըստ պատշաճին
շնորհակալութիւն յայտնել այդ ամենի փոխարէն,

բայց գոնէ սրտով միշտ երախտապարտ պիտի մնամ Ձեզ քանի որ շունչս բերանումս է։

Կատարեալ յարգանքով և անձնուիրութեամբ մնամ ամենախոնարհ ծառայ...

Մեծապատիւ պարոն
Ծառուկ.

Յունիսի 25-ին գրած նամակդ հէնց այժմ ստացայ։ Այդ նամակում գրում էք ինձ, որ որդիս Ձեր միջնորդութեամբ ստացել է այն պաշտօնը, որի համար խնդրել էի Ձեզ։ Դորանով Դուք անակնկալ խնդութեամբ լցրիք իմ սիրտը, որի համար չգիտեմ ինչպէս պէտք է շնորհակալ լինիմ Ձեզանից։ Հաւատացէք, որ ես տածում եմ դէպի Ձեզ այնպիսի համակրութեան զգացմունքներ, ինչ որ կարող է զգալ մի ազնիւ մարդ, որ վայելած է այդպիսի վեհանձն բարիքներ։ Մօտերումս ես կգամ Թիֆլիս և շատ երջանիկ պիտի համարիմ ինձ, երբ անձամբ մատուցանել կարողանամ Ձեզ իմ երախտագիտական զգացմունքները, որով մնամ միշտ անձնուէր և խոնարհ ծառայ...

Մեծարգոյ պարոն
Սպանդարատ.

Մօտերս բաղտ ունեցայ ստանալ Ձեր նամակը, որի մէջ գրում էք, թէ որդիս Ձեր շնորհիւ ընդունուել է (այս ինչ) ուսումնարան։ Ես համոզուած եմ, որ հէնց դորանից է կախուած նորա ապագայ բաղտը և սեպուհ պարտքս եմ համարում ներշնչել նորա մէջ շնորհակալութեան և երախտագիտութեան բարձր զգացումներ դէպի Ձեզ, որ պատճառ էք հանդիսացել նորա ապագայ երջանկութեան։ Եւ մնամ առ Ձեզ յաւէտ երախտապարտ խոնարհ աղախին...

Մեծապատիւ պարոն
Բենիկ.

Ձեր բարեհաճ ուշադրութիւնը իմ խնդրի վերայ և այն հաւատարմութիւնը, որով ընդունեցիք ինձ Ձեր կալուածների ծառայութեան մէջ, խորին շնորհակալութեամբ լցրել են սիրտս դէպի Ձեզ։ Ես անկարող եմ իմ երախտագիտութիւնս լեզուով արտայայտել, բայց յոյս ունիմ, որ եռանդուն և անթերի ծառայութեամբ գործով ապացուցանեմ Ձեզ իմ զգացումներս։ Ես միշտ ճշտութեամբ կհետևիմ Ձեր տուած

պատուէրներին և միաժամանակ կաշխատեմ ինքս էլ ինքնուրոյնաբար մտածել կառավարութեանս վերաբերեալ քանի մի մասերի բարեփոխութեան մասին։ Բայց այդ մասին դեռ ոչինչ չեմ գրում, որովհետև նախապէս ուզում եմ մօտից ծանօթանալ գործերին և երբ ինքս կը համոզուիմ, որ այդ նորամուծութիւններն անհրաժեշտ են գործի յաջողութեան համար, այնուհետև, ձեր հաճութիւնն առնելուց յետոյ գործի կձեռնարկեմ։ Յոյս ունիմ, որ ոչ թէ միայն Ձեր շահերը պիտի պաշտպանեմ, այլև առաւել վարկս աւելացնեմ Ձեր առաջ։

Ընդունեցէք, խնդրեմ, յարգանացս հաւատին, որով մնամ նուաստ ծառայ...

Սիրելի հայրիկ.

Ամսոյս 20-ի նամակի հետ ուղարկածդ դրամն ստացայ և շտապում եմ յայտնել յատուկ շնորհակալութիւնս, որ անխնայ չէք թողնում ինձ։ Ձեր հայրական հոգացողութիւնից քաջալերուած ես կկրկնապատկեմ իմ եռանդը պաշտօնիս և պարտաւորութեանցս կատարման նկատմամբ։ Որդիական սիրով և անձնուիրութեան զգացմամբ մնամ միշտ Ձեզ սիրող և խոնարհ որդի...

Ը. ԱՋԴԱՐԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Սիրելի հայրիկ.

Շտապում եմ հաղորդել Ձեզ մի շատ ախորժելի լուր. Ատուած մեզ մի մանուկ պարգևեց երեկ երեկոյ։ Ծնունդը շատ դժուար էր և վտանգաւոր մօր համար։ Բայց ամենաբարի Արարիչը օգնութեան հասնելով խաւարը փարատեց և ամուսինս վտանգն անցկացրեց և այժմ նորածնի հետ, փառք Արարչին, առողջ են։ Այժմ որքան հանգամանքները կարող են ներել։ Այժմ կնոջս գլխաւոր ցանկութիւնն այն է, որ Ձեր տեսութեան արժանանայ, սիրելի ծնողներ, և Դուք մեծ ուրախութիւն պիտի պատճառէք ինձ, եթէ շտապէք գալ մեզ մօտ բաւական երկար ժամանակով. գալուց առաջ խնդրեմ մի երկտող ծանուցէք մեզ Ձեր յօժարութեան մասին։

Որդիական հնազանդութեամբ մնամ Ձեզ սիրող որդին...

Սիրելի հայրիկ և մայրիկ.

Երկու ամիսը լրացաւ, որ ես նամակ չեմ գրել Ձեզ։ Գուշակում եմ թէ ինչքան պիտի

անհանգիստ լինէիք իմ մասին, քանի որ այդ-
տեղից մեկնելիս ես Ձեզ խոստացայ գէթ ամեն
ամիս նամակ գրել և իմացնել իմ տեղը։ Այդ-
պէս չէի վարուել ի հարկէ եթէ ճանապարհին
Քանաքեռի մօտ չհիւանդանայի։ Հիւանդութեա-
նըս մասին ես ոչինչ չգրեցի Ձեզ, որպէս զի
Ձեր սիրտը չաղմկէի. այլ հէնց որ մի փոքր
առողջացայ՝ ճանապարհս շարունակեցի թէպէտ
և դանդաղութեամբ, որովհետև տենդը իւր հետ-
քերը թողել էր ինձ վերայ։ Ես թախանձագին
աղօթում էի Աստծուն և նա վերջապէս լսեց իմ
խնդրուածքը։ Հասայ Երևան և լաւ պաշտօն
ստացայ... ի դրասենեկում բաւական լաւ վար-
ձատրութեամբ։

Խնդրեմ, սիրելի ծնողներ, Ձեր աղերսն էլ
միացրէք իմի հետ, որ Աստուած առողջութիւն
պարգևէ ինձ և Ձեզ։ Յոյս ունիմ, որ իմ ջանա-
սիրութեամբ և խնայողութեամբ մի բան տըն-
տեսեմ Ձեզ համար, որ գոնէ դորանով փոխա-
րինեմ այն բարիքները, որ չէք խնայել երբէք
ինձ համար մանկական հասակիցս սկսած։ Տի-
րոջ հովանին թող լինի Ձեզ վերայ, ապրեցէք
երկար տարիներ առողջ և երջանիկ։ Ջերմագին
սիրով մնամ

Ձեր երախտապարտ որդին...

Սիրելի գաւակս.

Վաղուց է նամակ չեմ գրել քեզ և այսքան
երկար լռութիւնիցս յետոյ առաջին նամակս
դժբախտաբար գուժաբեր է լինելու քեզ համար։
Երբ դու հեռացար ինձանից, քոյրդ, մեր սիրելի
Լուսիկը, առողջ էր և վարդի պէս կայտառ։ Ով
կմտածէր, որ այլ ևս տեսնելու չես նորան։ Մա-
կմտածէր, որ այլ ևս տեսնելու չես նորան։ Մա-
կայն, ի խոր ցաւ մեր սրտի, դա արդէն կատա-
ռուած իրողութիւն է։ Երեկ երեկոյեան տասնևմէկ
ժամին հանգաւ նա իւր մօր գրկում և իմ աչքիս
առաջ։ Թոքատապը, որի առաջը առնել չկարո-
ղացաւ ոչ մի բժշկական օգնութիւն, վերջ դրեց
նորա կեանքին, իսկ այսօր նորա մարմինը հողին
յանձնուեցաւ։ Աւելին գրել անկարող եմ այժմ
ես։ Աստուած յաջողի, որ դու շուտով վերա-
դառնաս ողջ և առողջ, որ գոնէ քեզանով մխի-
թարուին քո վշտակոծ ծնողները։

Մայրդ ողջունում է քեզ արտասուաթոր
աչքերով և ես համբուրելով քեզ՝ մնամ սի-
րող և փարող հայրդ...

Մեծարոյ պարոն
Սահակ.

Ողջամբ հասայ Արմաւիր։ Շատ նորութիւն-
ներ ունիմ հաղորդելու Ձեզ, սակայն առ ժա-

մանակ չեմ պատմում, որովհետև դեռ նոր եմ տեղ հասել և լաւ չեմ նայել քաղաքը, շատ ծանօթներիս էլ դեռ չեմ տեսել։ Պատահեցի Սըմբատին, նա հարցրեց ձեր մասին և առաջին պատեհութեամբ մտադիր է Ձեզ նամակ գրել։ Ինչ վերաբերում է Ձեր յանձնարարութեան տիկին Երանուհու ժառանգութիւնը ստանալու մասին, միամիտ եղէք, ես վաղն և եթ կզբաղուիմ այդ գործով և կարճ միջոցում կտեղեկացնեմ հետևանքի մասին։ Արդէն գիտէք, որ ես միշտ առանձին գոհունակութեամբ կատարում եմ Ձեր յանձնարարութիւնները։

Մնամ խորին յարգանքով, խոնարհ ծառայդ...

Թ. ՆԵՐՈՒՄՆ ԽՆԴՐՈՂ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծարգոյ պարոն
Յոյս.

Խնդրեմ վեհանձնաբար ներէք ինձ, որ Գանձակից դուրս գալու միջոցին անկարող եղայ շնորհակալութիւնս մատուցանել Ձեզ՝ Ձեր ցոյց տուած շնորհների համար։ Այդ ի հարկէ սրտիս զգացմունքներից չէր, որ միշտ լի է երախտագիտութեամբ դէպի Ձեզ, այլ որովհետև ամենևին ժամանակ չգտայ պաշտօնական ծառայութիւններիս պատճառով։ Այժմ, օգուտ քաղելով բարեյաջող դէպքից, շտապում եմ մատուցանել Ձեզ, մեծապատիւ Տէր, իմ սրտի անկեղծ շնորհակալութիւնը այն բարիքների համար, որոնք խորը պաւորուած են իմ սրտում։ Ուրեմն դարձեալ ներումն խնդրելով վարմունքիս համար, վերստին յայտնում եմ այստեղ իմ երախտագէտ սրտի զգացումները, որով միշտ անձնուէր խոնարհ ծառայ...

Մեծարգոյ պարոն
Շնորհք.

Ներեցէք, որ ժամանակին չպատասխանեցի Ձեր պատուական նամակին և խնդրեմ իմ լռութեան որևէ անախորժ բացատրութիւն չտաք։ Ես այնպէս զբաղուած էի գործերով իշխանաւորիս մօտ, որ գրեթէ վայրկեան չունէի ազատ. բայց հաւատացած կացէք, որ իմ յարգանքներս անփոխոխ են դէպի Ձեզ և իմ ջերմ ցանկութիւնս է անձամբ տեսնուիլ Ձեզ հետ, որ անձամբ կարող լինեմ իմ սրտի գոհունակութիւնը յայտնելու Ձեզ. յոյս ունիմ, որ ցանկութիւնս շուտով կկատարուի. և միշտ անկեղծ սիրով Ձեր...

Մեծապատիւ պարոն
Կարէն.

Ձեր անցեալ նամակում Դուք մեղադրում էք ինձ, որպէս թէ ես վիրաւորական լուրեր եմ տարածում Ձեր մասին։ Այս ամենը միայն չարախնդաց մարդկանց հնարածներն են, որոնք աշխատում են սևացնել ինձ Ձեր առաջ. իմ խիղճս միանգամայն մաքուր է, և եթէ Դուք հաւատաք անբարեվիտ անձանց խօսքերին, ապագայում, երբ գաղտնիքը կպարզուի, Դուք ինքներդ կմեղադրէք Ձեզ։ Նեղացէք ինձ վերայ այժմ ինչպէս կամիք, վնաս չունի, ես չեմ փորձում արդարանալ, քանի որ մաքովս էլ չեմ անցկացրել վիրաւորել Ձեզ։ Յիշեցէք միայն, որ ես միշտ ամենամեծ յարգանք եմ տածել դէպի Ձեզ, որով ճամ այժմ և միշտ խոնարհ յարգողդ...

Ժ. ՀՐԱՀԻՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Սիրելի բարեկամ
Ուքան.

Ինձ թւում է, թէ բարեկամների հետ ժամանակ անցկացնելուց լաւ բան չկայ, ինչպէս

և ոչինչ այնքան ձանձրալի չէ, ինչպէս նոցանից հեռու լինելը։ Կեանքը ինքը մի տանջանք կլինէր առանց անկեղծ բարեկամների։ Յոյս ունիմ, որ Դուք ևս հաւանութիւն կտաք իմ կարծիքին և այս երեկոյ կայցելէք ինձ, որով մեծ բարեկանութիւն պատճառած կլինիք ինձ։

Ձեր...

Սիրելի բարեկամ
Տիրան.

Պարոն Ռշտունին, որի մասին խօսեցի Ձեզ հետ մեր վերջին տեսակցութեան ժամանակ, շատ ցանկանում է ծանօթանալ Ձեզ հետ և վաղը ճաշի ինձ մօտ կլինի։ Նա շատ համակրելի և զարգացած մարդ է։ Խնդրեմ վաղը ինձ մօտ գաք։ լաւ ժամանակ կանցկացնենք. և միևնոյն ժամանակ այդ այցելութեամբ շատ կպարտաւորացնէք Ձեզ միշտ անձնուէր ...ին։

Սիրելիդ իմ
Գայիանէ.

Ես վաղուայ համար թատրոնի տոմսեր եմ վերցրել. եթէ ազատ ես, խնդրեմ դու էլ գաս, որ միասին գնանք։ Եղբայրս էլ մեզ հետ կլինի։

Ասում են, որ շատ հեռաքրքիր ազգային մի ներկայացնելու, բայց աւելի հաճելի կլինի ինձ համար այդ ներկայացումը, եթէ չմերժեն ընկերանալ ինձ. և միամ քոյդ...

Սիրելի բարեկամ
Սմբատ.

Տիկին Զուլիկը խնդրեց ինձ գրել Ձեզ, որ վաղը խմբով գնում ենք զբօսնելու. նա ցանկանում է, որ դու ևս մասնակցես մեր խմբին։ Գործերդ թող կամ գէթ այնպէս կարգադրիր, որ վեց ժամին ազատ լինիս։ Իմաց տուր այժմ իսկ, դու կգաս, թէ մենք պիտի անցնենք քո կողմը։ Սակայն յամենայն դէպս չզրկես մեզ քո ընկերութիւնից։ Քեզ միշտ անձնուէր...

ԺԱ. ՅԱՆԴԻՄԸՆՈՒԹԵԱՆ, ԳԱՆԳԱՏԱՆԱՑ, ԽՈՐՀՐԴԱՏԻՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծարգոյ պարոն
Վաչագան

Ես միշտ համոզուած էի, որ Ձեր բարեկամութիւնն անխախտ պիտի լինէր ղէպ ինձ

և երբէք չեմ մտածել, որ թէկուզ ամենանշան կասկածանքով պիտի վշտացնեմ Ձեզ։ Բայց այժմ փորձով տեսնում եմ, որ այդ բարեկամութիւնը այլ ևս գոյութիւն չունի ինձ համար, թէպէտ իմ սէրը նոյնն է մնում դէպի Ձեզ։ Եթէ Դուք ինձ թոյլ կտաք զղջացած պարզել Ձեր առաջ, առանց գէպի Ձեզ յարգանքներս թուլացնելու, վստահութեամբ կասեմ, որ Դուք ինձ չափազանց վիրաւորել էք Ձեր վարմունքով։ Ձեզ համար կարծեմ ամօթ էր քաղաքից դուրս գնալ առանց ինձանից ներողութիւն խնդրելու. Դուք խլեցիք ինձանից իմ անհրաժեշտ բանը—միութիւնս միայնութեան մէջ, որ այժմ պիտի տանեմ առանց Ձեզ։ Բայց թէպէտ Դուք այդպէս վարուեցաք և այն հակառակ Ձեր կամքի, այնուամենայնիւ իմ սիրտը միշտ պիտի Ձեզ մօտ լինի ուր և լինիք և պիտի միամ միշտ անձնուէր խոնարհ ծառայդ...

Մեծարգոյ տիկին
Անթառամ.

Դուք բոլորովին աչքից գցել էք ինձ։ Անշուշտ մէկ ուրիշը փոխարինել է ինձ Ձեզ համար։ Ես միշտ վայելում էի Ձեր սէրն ու հա-

մակրութիւնը. ինչպէս եղաւ ուրեմն, որ այս-
պիսի փոփոխութիւն առաջացաւ։ Եթէ երբէք չէի
կարող մոքովս չանցնել, որ Դուք կարող
էիք պէտք փոխուելս անտարբեր լինել դէպի
իմ վիճակը։ Ինքս ինձ յանախ հարցնում եմ,
թէ ինչ յանցանք եմ գործել դէպի Ձեզ, և
միանգամայն ոչ մի ստուերն չէմ գտնում որով
կարելի լինէր ինձ մեղադրել։ Ձեզ շատ լաւ
յայտնի է իմ անձնուիրութիւնը և մինթէ Դուք
այնքան անգթութիւն կունիք, որ նամակս ան-
թեամբ կվերադարձնէք ետ։ Ես չափազանց
անդնդագիտակ եմ խնդրեմ պարզապէս գրէք
Ձեր վարմունքի պատճառը և ինձ այս դրութե-
նից դուրս եկէք։ Մինթէ խիղճը չէ տանջում Ձեզ
այդպիսի չնչին վարմունքի համար դէպի ոչ մի
անձն, որ իւր սիրտը կենդանի անձնուէր է
դրել Ձեզ։

Յորին յարգանքով

Մեծարգոյ պարոն

Կոմսուհի

Ես դեռ բաղդ չեմ ունեցել Ձեզ որևէ
ծառայութիւն անել, դստի և իրաւունք չու-
նիմ նկատողութիւն անել Ձեզ, որ իմ յանձնա-

ղարութիւններս չէք կատարում, բայց գոնէ
իրաւունք ունիմ ասել, որ Դուք ձեր խոստումը
չիմաստարեցիք։ Անշուշտ չէք բարկանայ ինձ վի-
ռայ այս խօսքերիս համար, եթէ նկատի առնէք
թէ ինչ անելանելի դրութեան մէջ եմ այժմ
Ձեր խօսքերի վերայ յուսալով։ Գուցէ Դուք էլ
յանցաւոր չէք գուցէ որևէ անախորժ հանգա-
մանք արգելել է Ձեզ ես կատարել Ձեր խոս-
տումը։ Այս դէպքում գէթ պէտք է ինձ իմաց
տուսը։ Այս դէպքում գէթ պէտք է ինձ իմաց
տայիք, որ ես այլ միջոցներ ձեռք առնէի։ Ցոյս
ունիմ, որ նամակս ստանալու պէս կշտապէք
պատասխանի արժանացնել ինձ։

Ընդունեցէք, խնդրեմ, խորին յարգանաց
հաւաստին, որով մնամ ամենախոնարհ ծառայ։

Մեծապատիւ պարոն

Հանկակ

Պարոն Արմոզի առաջարկութեամբ ես ըն-
դունեցի Ձեզ պաշտօնով ինձ մօտ գրագ յանձ-
նեցի Ձեզ։ Ես յոյս ունէի, որ իմ յանձնարարու-
թիւններս անթերի կատարելով կարգաց-
նէիք պ. Արմոզի հետ իմ յոյսերը։ Այժմ ի-
ցաւագրի տեսնում եմ, որ ես սխալուած եմ
Ձեզ ընդունելով։ Ես այս յանդիմանութիւն

թիւնը երբէք չէի ուղղիլ ձեզ, եթէ չցանկայի, որ Ձեր ուղղութեան ծառայէր այդ։ Ես առանձնապէս բաւարարուած կհամարէի ինձ, եթէ իմ այս նամակը ցանկալի ազդեցութիւնն ունենար Ձեզ վերայ։

Ձեզ միշտ բարեացակամ...

Սիրելի որդի
Հայկ.

Կարող է պատահել, որ երկու ամսի չափ հեռու լինիմ քեզանից, և որովհետև ես ամենրողջ մտածում եմ քեզ վերայ, ուստի անհրաժեշտ եմ համարում երկու բան յիշեցնել քեզ, որ խիստ կարևոր եմ համարում քո ապագայի նկատմամբ։ Նախ՝ ինչքան կարելի է քիչ խօսիր. շատախօսութիւնից փախիր. սա ամենավատ սովորութիւնն է երիտասարդ մարդու համար և մանաւանդ այնտեղ, ուր դու ես ընակւում այժմ։ Երկրորդ՝ լսիր պ. Պահլաւունու խորհրդներին, որ քեզ որդու պէս է սիրում։ Անշուշտ յիշում ես իմ խօսածները հասարակական զուարճութիւնների մասին. թէ քեզ և թէ ինձ համար խիստ կարևոր են, որ դու որքան կարելի է քիչ երևաս այն տեղերը. մանաւանդ որ դու ուսման

համար ես ուղարկուած և ոչ թէ քէֆի և ուրախութեան։ Երբէք սրտիցդ մի հանիր այն սէրը, որ ես ներշնչել եմ քո մէջ դէպի մեր ազգային եկեղեցին։ Խնդրեմ այս խրատս էլ ընդունես այնպիսի մաքուր սրտով, ինչով որ ես եմ տալիս քեզ։ Ողջ լեր, սիրելի որդիս, շուտ շուտ նամակ գրիր։ Քեզ սիրող հայր...

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Մեծապատիւ պարոն
Մանաւազ.

Երբ այստեղից գնում էիք՝ Դուք ինձ հաւատացրիք, որ խնդիրս կկատարէք և ինձ պարտեղած գումարից մի մասը կուղարկէք։ Գիտեմ, որ ճշտապահ մարդ էք և երբէք չեմ կասկածում Ձեր մասին. բայց ընտանեկան հանգամանքներիս պատճառով անհրաժեշտ է ինձ իմանալ, թէ իսկապէս երբ կարող կլինիմ ստանալ Ձեզնից այս դրամը։ Ուրեմն խոնարհաբար խնդրում եմ յայտնէք ինձ այդ, եթէ իսկոյն վճարել անկարող էք. այդ խիստ ցանկալի կլինէր ինձ համար։ Գուցէ Ձեզ յայտնի է, թէ ինչքան դժուարութեամբ կարողանում է մարդ իւր վարկը պահ-

պանել, երբ պարտապանները ուշացնում են ի-
բանց վճարը։

Յոյս կունենամ ուրեմն, որ դուք ներող
կլինիք դէպ ինձ և մտնելով իմ դրութեանս մէջ՝
կաշխատէք շուտով գոհացնել ինձ։

Խորին յարգանքով և կատարեալ անձնուի-
րութեամբ մնամ ամենախոնարհ ծառայ...

Մեծարգոյ պարոն
Մաժդոց.

Անցեալ շաբաթ... ռուբլի ուղարկեցի Ձեզ
իմ պարտքի հաշուում։ Ես յոյս ունէի ամբողջ
պարտքս վճարել, բայց այլ և այլ աննախատես
հանգամանքների պատճառով ստիպուած եմ թա-
խանձել Ձեզ երկարաձգել վճարմանս պայմա-
նաժամը կարճ ժամանակով։ Երկար ժամանակ
է, որ Ձեր բարեկամութիւնը վայելելու բարե-
բաղդութիւնը ունիմ, որից զրկուելը ինձ համար
շատ անախորժ կլինէր։ Ուստի և հաւատացած
կարող էք լինել, որ ես ամեն ջանք գործ պիտ
դնեմ պարտքիս մնացորդը վճարելով պարզերե
երևալու Ձեր առաջ...

Ամենախոնարհ ծառայ...

Մեծարգոյ պարոն
Խորէն.

Յուսալով Ձեր բարեմտութեան վերայ՝ դի-
մում եմ Ձեզ հետևեալ խոնարհագոյն խնդրով։
Գ. Օնիկը, որ վաղուց ծանօթ է Ձեզ, խնդրում
է փոխարինաբար տալ իրան... ռուբլի դրամ.
ուստի, մեծապատիւ Տէր, խնդրեմ չզլանաք ինձ
հաղորդել, թէ կարելի է հաւատալ այդ պարոնին
և տալ խնդրուած գումարը։ Հարկաւ գիտէք, որ
այսպիսի մի խոշոր գումար ներելի չէ հաւատալ
մի բոլորովին անծանօթ մարդու. ուստի նորից
խնդրում եմ Ձեզ, ձանձրութիւն յանձն առնէք
լաւ տեղեկանալ և ամեն կասկած փարատել
ինձանից։ Պատասխանի ակնկալութեամբ, յայտ-
նում եմ Ձեզ և Ձեր համեստափայլ ընտանիքին
Ջերմեռանդ յարգանքներս և մնամ միշտ խոնարհ
ծառայդ...

Մեծարգոյ պարոն
Գագիկ.

Քանիցս նամակ եմ գրել Ձեզ, անձամբ էլ
քանի անգամ եկել եմ Ձեր տուն, բայց ոչ
մի անգամ տանը չեմ գտել, երբեմն Ձեր տանե-

ցիք ասել են ինձ, որ ինքներդ կբերէք Ձեր պարտք... ռուբլին։ Սակայն մինչև այժմ ոչ մի բաւարարութիւն չստանալով ստիպուած եմ նորից յիշեցնել Ձեզ, որ Ձեր պարտքի վճարման ժամանակակէտը վաղուց արդէն անցել է և որ ես չէի ցանկալ, որ Ձեր անճշտութիւնը որևէ անախորժութեան առիթ ընծայէր։ Ինքս մեծ կարիք ունիմ փողի և յոյս ունիմ, որ այս անգամ արդէն կգոհացնէք իմ պահանջը։

Խոնարհ ծառայդ...

Մեծապատիւ պարոն

Աշոտ.

Լրագրներում կարդացի, որ շատ ձեռնտու գնով ծախւում է մի տուն Հայոց փողոցում թ. 100։ Հիւանդութեանս պատճառով անկարող լինելով տանից դուրս գալ՝ խնդրում եմ Ձեզ, եթէ հնար է, նեղութիւն յանձն առնէք այն տունը տեսնել, տեղեկանալ թէ գնի և թէ եկամուտների որքանութեան մասին և մի երկտողով յայտնէք ինձ այդ ամենը որքան կարելի է շուտով։

Ձեզ միշտ անձնուէր...

Մեծարգոյ պարոն.

Հարկ ենք համարում գրութեամբս ծանուցանել Ձեզ, որ այս օրուանից սկսեալ «Հայկազեան» անունով վաճառականական մի ընկերութիւն ենք հաստատել, որի գլխաւոր ճիւղը արտասահմանեան ապրանքների յանձնարարութիւնն է։ Ուրախ կլինինք, եթէ մեր ծառայութիւնը կարողանայ Ձեզ հաճոյ լինել։ Համոզուած ենք, որ Ձեր հրամանները ճշտիւ կատարելով և մեր հաւատարմութեամբ՝ Ձեր վստահութիւնը կշնորհէք մեզ, որով երկուստեք օգտուած կլինենք փոփոխակի։

Խորին յարգանքով...

Մեծարգոյ պարոն.

Պարտք ենք համարում ծանուցանել Ձեզ, որ մեր Առևտրական տունը այսօրուանից դադարեցնում է իւր գործունէութիւնը. իսկ այսուհետև թէ ինչ գործ պիտի սկսինք՝ այդ մասին Ձեզ կտեղեկացնենք իւր ժամանակին. առ այժմ խնդրեմ հաճիք շարունակել մինչև այժմ մեզ ցոյց տուած համակրութիւնն ու վստահութիւնը, որի համար յայտնում ենք մեր ի սրտէ շնորհակալութիւնը։ Մեր տան ընդունուած ստորագրութիւնը։

գրութիւնը այսօրուանից նշանակութիւն կունենայ միմիայն մեր հաշիւները փակելու համար, որ պիտի կատարէ պ. Արգամը։

Ընդունեցէք մեր մեծարանքը, որով մնամք...

Մեծարգոյ պարոն Վասակ.

Տխրամած սրտով ծանուցանում եմ Ձեզ, որ իմ ամուսինը, քաղաքիս վաճառականը, ամսոյս 1-ին կնքեց իւր երկրաւորը։

Հարկաւոր եմ համարում Ձեզ յայտնել, որ բարեյիշատակ հանգուցեալի առևտրական գործերը ես պիտի շարունակեմ անդրանիկ որդւոյս հետ նոյն անուան տակ, ինչ որ մինչև այժմ էր, և կարող եմ ապահովացնել Ձեզ, որ գործը պիտի ընթանայ նոյն կարգով և ճշտութեամբ և պիտի աշխատինք աւելի արժանի ցոյց տալու մեզ Ձեր վստահութեան։

Հաճեցէք, խնդրեմ, ուշադրութիւն դարձնել մեր կրկին սորագրութիւնների վերայ և ընդունեցէք մեր խորին յարգանաց հաւաստին,

որով մնամք...

Մեծարգոյ պարոն Մեհրուժան.

Ձեր ինձ ցոյց տուած բարեկամութեան վերայ վստահացած՝ դիմում եմ ձեզ հետևեալ խնդրով։ Պարտապաններիս անճիշտ վերաբերմունքի պատճառով... ռուբլու պէտք ունիմ, այնպիսի մի վճարի համար, որ ուշացնել չեմ կարող։ Վստահ եմ, որ եթէ առանձին մի արգելք չունիք՝ այդ գումարն անմիջապէս կհասցնէք ինձ։ Իսկ եթէ չէք կարող՝ խնդրեմ իսկոյն յայտնէք ինձ, որ ուրիշ տեղից վերցնեմ։ Եթէ կհաճիք յիշեալ գումարը փոխ տալ ինձ, խոստանում եմ մի ամսում վերադարձնել։ Սպասելով Ձեր պատասխանին, մնամ խորին յարգանքով և անձնուիրութեամբ

Ձեր...

Մեծարգոյ պարոն Գնել.

Մեծ ծառայութիւն արած կլինիք մեզ, եթէ տոմսակիս վերայ նշանակուած Առևտրական տան նկատմամբ մեզ տեղեկութիւն տալու լինիք։ Նոյն տան եղած տեղի հետ յարաբերութիւն ունենալով՝ կարող էք շուտ և որոշ

տեղեկութիւններ ունենալ։ Վստահ եղէք, որ խօսքը մեր մէջ կմնայ. կանխաւ ընդունեցէք խնդրեմ մեր անկեղծ շնորհակալութիւնը և

Մնամք Ձեզ միշտ յարգող...

Մեծարգոյ պարոն
Թորոս.

Ձեր ամսոյս 5-ին գրած նամակին պատասխանում ենք. Կարնոյ «Անահտեան» առևտրական տունը մեծ համարում է վայելում, որին իրօք արժանի է նա, որովհետև գործում է արդարասիրութեամբ և խոհեմութեամբ։ Վաճառատան տէրերը ճանաչուած են որպէս մեծ ստացուածքի տէրեր։ Մեր կարծիքը հաստատում են նաև նոյն քաղաքի մեր բարեկամներից ու լումայափոխներից մեր ստացած տեղեկութիւնները։ Մեզ համար բաղձալի է Ձեզ այստեղ մի հաճոյական ծառայութիւն մատուցանել, ուստի վստահ եղէք, որ այսպիսի առիթների մէջ միշտ պատրաստ ենք ծառայել Ձեզ։

Որին յարգանաց հաւաստեօք, մնամ խոնարհ ծառայ...

Մեծապատիւ պարոն
Վաչէ.

Շատ ցաւում եմ, որ Ձեր՝ ամսոյս 5-ի նամակով կարնոյ «Անահտեան» առևտրական տան վերայ խնդրուած տեղեկութեան՝ չեմ կարող Ձեր ցանկութեան չափ հաճոյական պատասխան տալ։ Ամենքին յայտնի է, որ յիշեալ տունը մինչև այժմ լաւ համարում ունէր, գործերը շատ ընդարձակած էր և յաջողութիւն ունէր։ Քաղաքիս առևտրական տներից ոչ մէկը նորա չափ պերճութիւն չունէր, այնպէս որ ոչ ոք կասկած չունէր նորա հաստատութեան վերայ։ Սակայն հիմա յայտնուեցաւ, որ այդ տունը թէ զանազան ձեռնարկութեանց և թէ լումայատոմսի առևտուրի մէջ մեծ կորուստներ է ունեցել այս օրերս։

Բայց կարծեմ թէ այս վտանգն անցաւոր բան է և մեր փոխանակագիրները կվճարուին. սակայն խոհեմութիւն չէ առ ժամս նոյն տան հետ մեծ գործեր ունենալ, քանի որ ամեն մարդ պարտաւոր է ինքն իրան քաշուած պահել ձախորդութիւնների ժամանակ։

Աւելորդ է յիշեցնել Ձեզ, որ այս տեղեկութիւնները մտերմական են և պէտք չէ այս մասին ում և ինչ բան խօսել։

Ձեզ միշտ յարգող և նուաստ բարեկամդ...

Շրջաբերական

Թիֆլիս 1 յունուար 1909

Մեծ. պարոն.

Հարկաւոր եմ համարում հաղորդել Ձեզ, որ այսօրուանից քաղաքումս առևտրական տուն հիմնեցի

Զ. ՀԱՅԿԵԱՆ

անունով, որի նպատակն է զբաղուել ամեն տեսակ ապրանքների արտածութեան և ներածութեան, փոխանակագիրների միջնորդութեանց և զանազան առևտրական յանձնարարութեանց գործերով։

Խնդրեմ ծանօթանաք ստորև դրուած մեր ստորագրութեան և ընդունել մեր խորին յարգանքները, որով մնամ

Զունդ Հայկեան

Վարկագիր

Թիֆլիս, 1 յունուար 1909

Մեծ. պարոն

Երևան

Այսու յանձնարարում եմ Ձեզ գրաբեր պ... որին խնդրեմ վարկ բանալ մինչև 2000 ռուբլի, որի փոխարէնը կանցկացնէք իմ հաշուին։

Իւրաքանչիւր անգամ դրամ տալիս խնդրեմ ստանաք պ...ից երկու օրինակ ստացագիր, որոնց մէկ օրինակը դուք կպահէք, իսկ միւսը կուղարկէք ինձ։

Ներփակ կգտնէք պ...ի ստորագրութիւնը։

Զ. Հ.

Ապրանք ուղարկել վանառի համար

Բագու 1 յունուար 1909

Մեծ. պարոն Էնզելի

Այսօր մեկնող «Մասիս» շոգենաւով ուղարկեցինք Ձեր ապսպրած 500 փութ նաւթը։ Ներփակ կգտնէք բեռնագիրն ու հաշուէցուցակը, որոնց գումարն է 500 ռուբլի, որ ստանալով, խնդրեմ աչքի անցնելով՝ անցկացնէք մեր պահանջին։

Յոյս ունինք, որ գոհացրինք Ձեր ցանկութիւնը և պիտի հաճիք նորանոր պատուէրներ ուղարկել մեզ։

Ընդունեցէք, խնդրեմ, մեր յարգանաց հաւաստին, որով մնամ

Զ. Հ.

Ստացագիր

Սորանով վկայում եմ, որ...ից ստացայ 150 ռուբլի ի հաշիւ 50 ոչխարի մորթիների, որ ծախեցի իրեն այս օրից մի ամիս յետոյ յանձնելու պայմանով։

Թիֆլիս 1 յունուար 1909։

Մ. Գ.

Գործ խնդրել

Յարգոյ բարեկամ.

Վստահանում եմ դիմել Ձեզ մի խնդրով։ Դիմում եմ Ձեր օգնութեան և խնդրում, որ դուք բարեհաճէք Ձեր հաստատութեան մէջ ընդունել ինձ։ Կարող եմ ապահովել Ձեզ, որ ինչ պաշտօն էլ առաջարկելու լինիք ինձ, հաճելի պիտի լինի ինձ համար և պիտի ճանաչեմ Ձեզ իբրև իմ բարերարը։

Ընդունեցէք կանխաւ շնորհակալութիւնս և մնամ միշտ խոնարհ յարգանքով

Թուական
տեղ.

Նոյնը ուրիշ կերպ

Մեծարոյ տէր։

Ներեցէք, որ վստահանում եմ Ձեզ ձանձրոյթ պատճառել։ Ձեր ծանօթ մարդասիրութիւնից խրախուսուած դիմում եմ Ձեզ և խնդրում, որ հաճիք ձեր ուշադրութիւնը նուիրելու շնորհ անէք ինձ։

Ներքոյ ստորագրեալս երկար տարիներ աշխատել եմ (այսինչ) առևտրական հաստատութեան մէջ ամենայն հաւատարմութեամբ և եռանդով։ Բայց այժմ բաւական ժամանակից ի վեր անգործ եմ և ընտանիքիս հետ միասին տառապում ենք չքաւորութեան մէջ։ Բարի եղէք, խնդրեմ, ազնիւ պարոն, ընդունել ինձ Ձեր գործի մէջ և ես խոստանում եմ, որ շատ շուտով պիտի տամ Ձեզ իմ հաւատարմութեան և աշխատասիրութեան գեղեցիկ ապացոյցները և Ձեր քաղցր պաշտպանութիւնը վայելելով՝ պիտի նուիրեմ Ձեզ ջերմագին երախտագիտութիւնս և մաղթանքներս Ձեր թանկագին կեանքի համար։

Խորին յարգանքով

Թուական
տեղ.

Փաստաբանին ուղղուած նամակ

Մեծարգոյ պարոն.

Բարի եղէք խնդրեմ հաղորդել ինձ, թէ կը հաճիք արդեօք ստանձնել մի գործ, որ ինձ համար շատ մեծ կարևորութիւն ունի: Գործի հանգամանքները հետևեալներն են (կարճ եւ պարզ կերպով պէտք է խնդիրն արծանագրել այստեղ): Եթէ գործը պաշտպանել յանձն առնէք՝ խնդրեմ հաղորդէք ինձ, թէ ինչ՞ պիտի ընդունիք ինձանից որպէս վարձատրութիւն Ձեր աշխատանքի համար և ինչքան դրամ պէտք է ուղարկեմ Ձեզ նախնական ծախքերի համար:

Խորին յարգանքով՝

..

Թուական
տեղ.

Ապրանք խնդրել

Մեծարգոյ տէր.

Խնդրեմ նամակս ընդունելուն պէս երկաթուղիով ուղարկել ինձ հետևեալ ապրանքները

Յոյս ունիմ, որ ապրանքների մէջ լաւ ընտրութիւն պիտի անէք, ապահով ծրարէք և այնպէս ուղարկէք ինձ:

Յարգանաց ողջոյններով՝

..

Թուական
տեղ.

Տեղեկութիւն ապրանք ուղարկելու մասին

Մեծ. տէր

Հարկաւոր եմ համարում յայտնել Ձեզ, որ կարսի երկաթուղիով ուղարկեցի Ձեզ Ձեր ուղված մի քանի տեսակ ապրանքները, որոնց ցուցակը ներփակեալ ուղարկում եմ Ձեզ:

Ընդունելուց յետ հաճեցէք հաշիները կարգադրել մինչև հետևեալ ամսի վերջը:

Խորին յարգանքով՝

..

Թուական
տեղ.

Մէկի մասին լաւ կարծիք յայտնել

Մեծարգոյ տէր

Ձեր ամսիս .. նամակին ուրախ եմ ծանուցանել, թէ պ... 3 տարուց ի վեր հաստատուած լինելով այստեղ՝ ընդհանուր յարգանք և վստահութիւն է գրաւել դէպ ինքը և արժանի է այն վարկի, որ խնդրել է Ձեզանից։ Ինքը հռչակուած է իբրև մի լուրջ և պարտաճանաչ մարդ և առևտրական գործն էլ յաջող ապագայ է խոստանում։

Այս տեղեկութիւնները կարող էք գործածել ինչպէս և կամիք։

Ձեզ միշտ յարգող

. .

Թուական
տեղ.

Մէկի մասին տեղեկութիւն խնդրել

Մեծ. տէր.

Միանգամայն վստահ լինելով Ձեր. բարեկամութեան և գաղտնապահութեան վերայ, վստահանում եմ դիմել Ձեզ մի տեղեկութիւն ստանալու համար։

Տեղւոյդ առևտրականներից մէկը՝ պ... 20,000 ռուբլու յանձնարարութիւն է արել ինձ, որի մի մասը կանխիկ և միւս մասը 6 ամսում վճարելու պայմանով։ Բայց որովհետև խնդրատու պարոնին ծանօթ լինելու պատիւը չունիմ և դժուար է ինձ կատարել մի այդպիսի ծանր խնդիր առանց գիտենալու թէ ինչ մարդու հետ գործ ունիմ, հարկադրուած եմ խնդրել Ձեզ, որ բարի լինիք անկեղծութեամբ գրել ինձ թէ, կարելի՞ է ապահով կերպով ապրանք տալ յիշեալ անձին։

Երախտապարտ պիտի լինիմ Ձեզ, եթէ հաճիք կարելի եղածին չափ շուտով պատասխանել ինձ, վստահ լինելով իմ գաղտնապահութեան վերայ։

Կանխաւ շնորհակալութիւնս յայտնելով՝ մնամ Ձեզ ի սրտէ բարեկամ։

. .

Թուական
տեղ

Ծանուցում

Մի երիտասարդ, վաճառականութեան քաջ հմուտ, որ գիտէ ֆրանսերէն, անգլիերէն և ռուսերէն լեզուները և Թիֆլիսի նշանաւոր վաճառատներից մէկում մի քանի տարի պաշտօն է

վարել, գործ է որոնում։ Ունի վկայաթղթեր իր ծառայութեանց համար։ Դիմել նամակով Թիֆլիս... փողոց... №...

Պայմանագրի օրինակ

1909 յունուար 1 Թիֆլիս

Մենք, ներքոյ ստորագրեալներս, Թիֆլիս... փողոց №... բնակուող վաճառատան տէր Մանուկ Մխիթարեանց մէկ կողմից, և միւս կողմից Թիֆլիս... № բնակուող վաճառական Գառնիկ Սահակեան կնքեցինք հետեւեալ պայմանագրը։—

Ա. Վերոյիշեալ անձերը կազմում են իրանց մէջ մի ընկերութիւն, ամեն տեսակ ապրանքի առևտուր անելու նպատակով։

Բ. Դրամագլուխ պիտի դնեն հինգ հազար ռուբլի, իւրաքանչիւրը հաւասար կէս բաժին, կանխիկ դրամով կամ արժէթղթով։

Գ. Ընկերութիւնը պիտի կրէ « . . . » անունը։ Ընկերներից ամեն մէկը իրաւունք ունի ստորագրել, բայց միմիայն ընկերութեան գործերի վերաբերեալ։

Դ. Ընկերութեան կենդրոնավայրն է Թիֆլիս. . . փողոց № . . :

Ե. Պայմանագիրը կնքւում է 5 տարի ժամանակով։

Զ. Ընկերներից որևէ մէկը, քանի որ ընկերութիւնը գոյութիւն կունենայ, իրաւունք չունի որևէ ուրիշ առևտրական ձեռնարկութիւն կատարել։

Է. Օգուտը և վնասը բաժանւում է հաւասար երկու ընկերակիցների մէջ։

Ը. Ամեն ամիս իւրաքանչիւր ընկեր առևտրական դրամարկղից իրաւունք ունի ստանալ... ռուբլի, որ անց է կացնում իւր հաշուին։

Թ. Ընկերութեան գործունէութիւնը կարող է ընդհատուել ընկերներից մէկն ու մէկի ցանկութեամբ. այդ դէպքում գործերին վերջ է տրւում փոխադարձ հաւանութեամբ, բաժանելով ամբողջ գոյքը կամ ունեցած դրամը։

Ստորագրութիւններ...։

Վկայական ծառայութեան

Այս վկայական ներկայացնողը, պ. Ոսանիկ Մլէհեանը, 8 տարի ծառայելով մեր առևտրական հաստատութեան մէջ իբրև հաշուապահ, իւր հըմտութեամբ և հաւատարիմ ու եռանդուն ծառա-

յութեամբ միշտ գոհ է կացուցել մեզ։ Որ վկայում ենք ստորագրութեամբ և մեր կնքոյ դրոշմամբ։

Կառավարիչ... Առևտր. տան

190... ամի

Թիֆլիս։

Մուրհակի ձեւ

Հայերէն

21 մարտ 1909 Թիֆլիս

մուրհակ 100 ռուբլու.

Հազար իննհարիւր իննը Թուի սեպտեմբերի քսան և մէկին ներքոյ ստորագրեալս սոյն իմ մուրհակի համեմատ պարտաւոր եմ վճարել Մութաֆեան և ընկ. առևտրական տանը Թիֆլիզում մի հարիւր ռուբլի։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն և ազգ.)

Ռուսերէն

21 марта 1909 г. Тифлисъ

Вексель на 100 рублей

Тысяча девятьсотъ девятаго года двадцать перваго сентября по сему моему вексе-

селю повиненъ я заплатить Торговому Дому Мутафовъ и К. въ Тифлисѣ сто рублей.

Подпись (имя, отчество и фамилія)

Փոխանակագրի ձեւ

Թիֆլիզ 1 ապրիլ 1909

ռուբլի 105 կոպէկ 97

Թուականիս տասն օր յետոյ վճարեցէք այս փոխանակագրով Ոսկի Շնորհքեանի հրամանին

մի հարիւր հինգ ռուբլի իննսուն եւ եօթն կոպէկ

արժէքը կանխիկ դրամ եմ ստացել. և անցկացրէք հաշուին ըստ ծանուցման։

ՀԵԹՈՒՄ ԳԱՌՆԻԿԵԱՆ

Առ մեծապատիւ

պ. Հրահատ Աղանունի

Հայոց թաղ թ. 10

Շուշի.

թիւ 124.

դրոշմաթուղթ

ՀՐԱՒԻՐԱՑՈՄՍԵՐ

Պարոն և Տիկին Օտեանները շատ սիրով ողջունում են Պարոն և Տիկին Լուսինեաններին և խնդրում են, որ կիրակի ճաշին շնորհ բերեն իրանց մօտ սեղանակից լինելու։ Մէկ ժամին սեղան կնստեն։

Խնդրեմ, սիրելի քոյրիկ, շնորհ բերէք ինձ մօտ թէյ վայելելու։ Ես մենակ եմ և յոյս ունիմ, որ Ձեր սիրելի ընկերութեամբ կուրախացնէք ինձ։ Խնդրեմ չզլանաք ինձ այս շնորհը։

Պարոն և Տիկին Լուսինեանները պատիւ ունին ամենայն սիրով և շնորհակալութեամբ ընդունել պարոն և տիկին Օտեանների սիրալիր հրաւէրը։

Շատ ցաւում եմ, պատուական քոյրիկ, որ Ձեր արած պատիւն ընդունել չեմ կարող, որովհետև արդէն ուրիշ տեղ խօսք եմ տուած այդ օրուան համար։

Կարևոր բան ունիմ հաղորդելու Ձեզ, ուստի խնդրում եմ օր և ժամ որոշէք, որ Ձեզ

տանը գտնել կարողանամ։ Յոյս ունիմ որ նեղողամիտ կլինիք նեղութիւն տալուս համար։

Նոր վերադարձայ Արցախից։ Եթէ ժամանակ ունիք, խնդրեմ գաք ինձ մօտ, շատ հաճոյական լուրեր ունիմ Ձեզ հաղորդելու։ Ամբողջ օրը տանն եմ, ուստի երբ ուզէք կարող էք շնորհ բերել։

Մի անյետաձգելի գործի համար եկայ Ձեր տուն, բայց տանը չէիք։ Վաղը առաւօտ ութը ժամին դարձեալ կգամ. մեծապէս երախտապարտ կլինիմ, եթէ տանը սպասէք ինձ։

Պարոն և տիկին Արաքսեանները մեծ պատիւ են համարում ծանուցանել Ձեզ, մեծարգոյ պարոն, որ ամսոյս 10-ին, կէս օրուան 12 ժամին տեղի պիտի ունենայ իրանց որդի Միհրդատի ամուսնութիւնը օրիորդ Խոսրովիդուխտ Մասիսեանի հետ։ Ուստի խնդրում են, որ հաճիք նշանակած ժամանակ Հայոց ս. Վարդանանց եկեղեցին։

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ, որ երեկ ամուսինս ազատուելով երկունքից՝ աշխարհ բերաւ մի արու զաւակ. թէ մայրը և թէ զաւակը ողջ և առողջ են։

Պարոն Ազատ Գնթունին ծանուցանում է Ձեզ իր կրած մի մեծ կորուստը. իւր փեսան՝ Սեպուհ Զարեհեանը ամսոյս 25-ին կնքելով իւր երկրաւորը՝ լաւագոյն կեանքի փոխուեցաւ և իւրայիններին խոր սուգով համակեց։

Յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարուի վաղը, կիւրակի, առ. 10 ժամին, իւր բնակարանից, Արտազեան փողոց թ. 10 դէպի ս. Մեսրովպ եկեղեցին։

ՀԱՐՍԱՆԻՔԻ ՀՐԱՒԷՐԻ ՈՒՐԻՇ ՁԵՒ

Նազելի և Արփիար Արաքսեանները պատիւ ունին յայտնել ձեզ, մեծ տէր, իրանց որդի Շահնշահ Արաքսեանի ամուսնութիւնը օր. Հերանոյշ Զարգարեանի հետ։

Զարմանդուխտ և Մասեհ Տէրջանեանները պատիւ ունին յայտնել Ձեզ, մեծ տէր, իրենց դստեր օր. Հերանոյշ Զարգարեանի ամուսնութիւնը պ. Շահնշահ Արաքսեանի հետ։

Եւ խնդրում են, որ հաճիք ընտանիքով շնորհ բերել պսակադրութեանը 1909 թ. փետր. 7-ին կէս օրի 12 ժամին Վանքի աւագ եկեղեցում և այնտեղից Արաքսեանների բնակարանը Հոռու Մելիքեան փ. № 1.

Թիֆլիս

.....1909 ամի։

ԱՅՑԵՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՒԵՐ

ՄԺԷԺ ՄՍԵՐԵԱՆ

ուսուցիչ Կարնոյ Սանասարեան վարժարանի

ԳԻՍԱՆԷ ՈՍԿԵԱՆ

ՇԱՒԱՍՊ ՈՒՔԱՆԵԱՆԸ պատիւ ունի .....ին իւր հրաւիրել պ. ..... գրասենեակը ուրբաթ, ամսոյս 21-ին առաւօտեան 11 ժամին։

Թիւ.

ՍԻՐԵԼԻ ԳԱՃՈՅՃ

Վաղը երեկոյեան քեզ և պատուական տիկնոջդ կսպասեմ մի գաւաթ թէյի մեզ ժամ։

(Թիւ)

ԺԴ. ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծապատիւ պարոն
Սկայորդի.

Դուք շատ յանցապարտ էք իմ առաջ, որ կարիք էք ունեցել և ինձ չէք դիմել։ Միթէ ուրիշներից պէտք է իմանամ ես այդ։ Միթէ ինձ բարեկամի տեղ չէք դնում և կարծում էք թէ ես կհրաժարուէի այդպիսի մի չնչին ծառայութիւն անելուց։ Ձեզ պատժելու համար պէտք էր ոչինչ չասէի Ձեզ, բայց իմ առ Ձեզ բարեկամութիւնն այդ չէ թելադրում։ Այժմ ես պահանջում եմ, որ Ձեր սխալն ուղղելու համար Ձեր հանգամանքները պարզէիք ինձ, որովհետև թէպէտ ինձ պատմել են քիչ շատ այդ մասին, բայց վայր ի վերոյ և կցանկայի աւելի մանրամասն տեղեկութիւններ ունենալ։ Պարզ

ու առանց քաշուելու գրեցէք, թէ ինչ կարիքներ ունիք. եթէ փող է պէտք, պատրաստ եմ օգնելու Ձեզ։ Սպասելով նամակիս պատասխանին՝ մնամ միշտ անձնուէրդ...

Մեծարգոյ պարոն
Պաճոյճ.

Քանի քանի անգամ ես օգտուել եմ Ձեր առատաձեռնութիւնից, քանի անգամ օգնել էք դուք ինձ, երբ գրեթէ ամեն միջոցներից զուրկ, դիմել եմ Ձեր օժանդակութեան։ Բայց հանգամանքները փոխուել են։ Մօտերս ես լսեցի, որ Դուք բաւական կարօտ վիճակումն էք գտնուում։ Այսօր չէ՞ ձեզ համար, որ այդ ծածկում էք ինձանից և անպատուութիւն չէ՞ ինձ, որ Դուք համարում էք ինձ այնպիսի մէկը, որ անարժան է եղել Ձեր նախկին շնորհների։ Որքան ծանր է ինձ տեսնել Ձեզ թշուառութեան մէջ, այնքան էլ գոհ եմ բաղդից, որ ինձ միջոց է տուել Ձեզ օգտակար լինելու։ Մի յուսահատուէք, ես պատրաստ եմ Ձեզ համար, պատրաստ եմ ամեն միջոց գործ դնել, միայն որ չասէք, թէ անշնորհ մարդ եմ եղել ես և անարժան Ձեր բարիքները վայելելու։ Դուք

ինձ մարդ դարձրիք, հետևապէս այժմ լիակատար իրաւունք ունիք իմ կարողութեան հետ վարուելու ինչպէս Ձերի հետ։

Լիաբուռն յարգանքով և անձնուիրութեամբ Ձեզ ամենախոնարհ ծառայ...

Սիրելի մօրաքոյրս.

Ձեզ ուզում թուել, սիրելի մօրաքոյր, թէ որքան հաճոյական յիշողութիւններ եմ տանում հետս Ձեզանից բաժանուելով, ուր ծնողական յարկի պէս սիրելի էր ինձ ապրել։ Ձեզ յայտնի է իմ սէրը, որ Դուք էք սնուցել. եթէ համեստութիւնը մէկ կողմ թողնէք, ինքներդ լաւ կզգաք, թէ ինչքան սիրելի էք Դուք ամենքիս համար և ուրեմն թէ որքան ծանր պիտի լինէր ինձ համար Ձեզնից բաժանուիլը։ Ձեր քնքոյշ խնամատարութեան յիշատակը դեռ թարմ է յիշողութեանս մէջ և չեմ կարողանում հաշտուել առանց Ձեզ ապրելու մտքի հետ, քանի որ Դուք և մայր էիք ինձ համար, և խրատատու և բարեկամ։ Տայ Աստուած, որ Ձեր ցանկութիւնները կատարուին, որոնց միակ նպատակը միշտ բարի է եղել. իսկ ես իմ կողմից պիտի պահպանեմ միշտ

այն անսահման անձնուիրութիւնը, որ անջնջելի կերպով տպաւորուած է իմ սրտում։

Յաւէտ անձնուէրդ Թամար.

Սիրելի և պատուական
Մանիկ.

Գրիր խնդրեմ, շուտ գրիր, թէ ինչպէս է քո և երեխայոց առողջութիւնը։ Ես, գոհուելով և ամենօրեայ խնդութիւն Աստուծոյ, առողջ եմ և ամենօրեայ խնդրուածներս առ Տէր այն են, որ պահպանէ քո երեխաներիդ կեանքը ընդ երկար։ Հոգւովս պանում եմ քեզ մօտ, հոգւոյս հատոր Մանիկ, և պատկերացնում եմ իմ առաջ սիրուն, ինձ համար յաւէտ սիրելի պատկերդ։ Այս մտածմունքները՝ մի փոքր մեղմացնում են իմ ծանրոյթը և սիրտ են տալիս նոր ոյժով գործով պարապելու։ Մխիթարուիր այն բանով, որ գործերիս կարգի դնելուց կախուած է իմ և քո բարեկամութիւնը և մեր զաւակների ապագայ երջանկութիւնը։ Իմ կողմից համբուրիր, պինդ համբուրիր խնդրեմ մեր երեխաներին։ Հէնց որ կարգի դնեմ ամեն ինչ, իսկոյն առանց ոտքի կորցնելու կշտապեմ քեզ մօտ։ Աստուած թող օրհնէ քեզ։ Մնաս բարեաւ։

Միշտ քոյդ...

ԺԵ. ԱՄՈՒՍՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմայարգ պարոն
Նարդոս.

Բաղդ ունեցայ Ձեր դստերը տեսնել հասարակութեան մէջ. նորա քնքշութիւնն ու այլ յատկութիւնները ամենալաւ տպաւորութիւն գործեցին ինձ վերայ։ Միով բանիւ ես սիրեցի Ձեր դստեր ամենամաքուր և ճշմարիտ սիրով և խնդրում եմ Ձեզանից նորա ձեռքը։

Դուք կարծեմ ծանօթ էք մեր գերդաստանին, որ պատուաւոր մի տուն է։ Ինչ ինձ է վերաբերում՝ պէտք է ասեմ, որ ես այնպիսի պաշտօն ունիմ, որի եկամուտը բաւական է մեր ապրուստի համար։

Ես նախազգում եմ, որ իմ առաջարկը ընդունելի պիտի լինի նաև օրիորդի կողմից։ Սակայն, ժեծարգոյ պարոն, ամենից առաջ Ձեզանից կախումն ունի իմ բաղդը. իմ ապագան յանձնելով Ձեզ և անհամբեր սպասելով Ձեր որոշման՝ պատիւ ունիմ մնալ խորին յարգանաց հաւատաւոր, ամենախոնարհ ծառայդ...

Սիրելի հայրիկ.

Ես այն հասակի մէջ եմ այժմ, որ անհրաժեշտ է ինձ միայնութիւնը թողնել և ուրախութեանս ու տրտմութեանս մի սրտակից ընկեր գտնել ինձ համար։

Ես հասարակութեան մէջ հանդիպել եմ մէկի, որ ինչպէս թւում է ինձ, կարող է բաղդատուրեցնել ինձ, որովհետև զգում եմ դէպի նա քնքոյշ ու անկեղծ համակրութեան զգացմունք և նոյնը նորա կողմից դէպի ինձ։ Դա օրիորդ Իսկուհին է, որի մասին երևի տեղեկութիւններ ցա ընտանիքին։ Նա կարող է Ձեզ պատմել, թէ որ աստիճան պատուաւոր ընտանիք է այն, արժանի ամենայն յարգանքի, և որ նոցա դուստրը սրտի յատկութիւնների հետ նաև լաւ զարգացումն ունի։

Յոյս ունիմ, հայրիկ, Ձեր հաճութեան ևս արժանանալ, որ անհրաժեշտ կլինի ինձ ունենալ դրաւոր կերպով և իմ ծննդեան վկայականիս հետ միասին։

Շուտափոյթ և բարեհաճ պատասխանիդ ակնկալութեամբ համբուրում եմ Ձեզ, սիրելի հայրիկ, անկեղծ սրտով և մնամ միշտ հնազանդ որդիդ...

Մեծարգոյ պարոն
Ասքանազ.

Անձամբ Ձեզ ծանօթ լինելու պատիւը չունենալով՝ գրով դիմում եմ Ձեզ հետևեալ առաջարկութեամբ։

Իմ որդին, Ձեր դստերը տեսնելով նորա մի ազգականուհու մօտ, համակրել է նրան։ Նա խոստովանուեց ինձ այս և իրաւունք տուաւ, որ խնամախօս լինիմ Ձեզ մօտ։ Որդիս քսան և չորս տարեկան է, ծառայում է (այսինչ տեղ, թուել և նորա առանձնայատկութիւնները)։ Նա երբէք դժգոհութեան առիթ չէ տուել ինձ և հաւոզուած եմ, որ բաղդաւոր ամուսին կլինի իւր կնոջ համար։ Պ. Տիրայրը, որ բնակւում է Ձեր աւանում, անձամբ ճանաչում է մեզ և բոլոր հարկաւոր տեղեկութիւնները կարող է տալ Ձեզ թէ որդուս և թէ մեր ընտանիքի մասին առհասարակ։ Եթէ կկնդրէի Ձեզ, մեծապատիւ Տէր, հաղորդել ինձ Ձեր որոշումը և եթէ պատասխանը դրական լինի, աւելացրէք նաև թէ ինչ կարգադրութիւններ կարևոր էք գտնում անել այդ մասին։ Այս յուսով և խորին յարգանաց հաւաստեօք՝ մնամ խոնարհ ծառայդ...

Մեծարգոյ պարոն
Բագարատ.

Ձեր առաջարկութիւնը սիրելի էր մեզ համար և Ձեր յարգելի ընտանիքի հետ անձուկ կապով կապուելը խիստ ախորժելի. սակայն մենք ստիպուած ենք մերժել Ձեր առաջարկը, որովհետև մեր դուստրը տակաւին շատ փոքր է. նա դեռ ծնողների խնամքի պէտք ունի և անկարող է կողակցի և տանտիկնոջ պարտաւորութիւնները կատարել։ Ցուսով ենք, որ մեր մերժումը վիրաւորական չի լինիլ Ձեզ համար և զգալով մեր աւորական չի լինիլ Ձեզ համար և զգալով մեր առարկութիւնների կարևորութիւնը՝ շնորհակալ կըմնաք մեզանից և մեզ չէք զրկի Ձեր բարեկամութիւնից, որով մնանք առ Ձեզ յարգանքով...

Մեծապատիւ պարոն
Ատովմ.

Ձեր առաջարկութիւնը խիստ զարմացրեց մեզ և մենք անկարող ենք իսկոյն որոշ պատասխան տալ Ձեզ, որովհետև նախապէս պէտք է խորհրդակցենք մեր դստեր հետ և նորա ճուութիւնն իմանանք. թէպէտ Դուք համոզուած էք, որ նա լիովին պիտի հաւանութիւն տայ

Ձեր ընտրութեան, բայց և այնպէս մի քանի օր մեզ մտածելու ժամանակ պէտք է տաք, որպէս զի պատշաճաւոր կերպով կշռենք այսպիսի ծանր խնդիրը և այնպէս մեր որոշումը տանք։

Ամուսինս իւր յարգանքներն է մատուցանում. և ես մնամ միշտ Ձեզ յարգող...

Մեծապատիւ պարոն
Ներսէհ.

Թէպէտ անյայտ չէր մեզանից Ձեր համակրութիւնը մեր դստեր նկատմամբ, բայց երբէք չէինք սպասում, որ այսպէս շուտով առաջարկութիւն պիտի անէիք։ Քաջ ճանաչելով Ձեր բարեմասնութիւնները, մենք ուրախութեամբ խոստովանում ենք, որ Ձեր առաջարկութիւնը խիստ հաճելի էր մեզ և ոչ մի արգելքի չէ կարող հանդիպիլ մեր կողմից։ Մնում է Ձեզ դիմել մեր աղջկան, որին մենք լիակատար իրաւունք ենք տուել իւր համար ապագայ ընկեր ընտրելու, և եթէ նա ևս, ինչպէս մենք յոյս ունինք, ոչ մի ասելիք չի ունենայ, մենք սիրով մեր համաձայնութիւնը կտանք Ձեր առաջարկութեան։

Ամուսինս խնդրում է ընդունել իւր մշտական յարգանքների հաւաստին առ Ձեզ։

Ցայտնելով և իմ խորին յարգանքներս, մնամ յաւէտ խոնարհ ծառայդ...

Գ. ՄԱՍ

ՑԱՒԵԼՈՒԱԾ

Ա. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՏԱԿ

Ընտանեկան կտակը գրւում է հասարակ թղթի վերայ, որին փակցւում է 80 կոպէկանոց մարքա։ Թուղթը կարելի է վերցնել ամեն չափսի, միայն անպատճառ լինելու է երկծալ մի ամբողջ թերթ։ Կտորտանքի վերայ գրուած կտակը համարւում է անվաւեր։

Ամեն մի ուղղուած բառ կամ նախադասութիւն, ինչպէս և ամեն մի յաւելման մասին, պէտք է ծանօթութիւն դնել կտակարարի ստորագրութիւնից առաջ։ Իսկ եթէ այդ փոփոխութիւններն արուած են իրա՝ կտակարարի ձեռքով՝ կարելի է և թողնել առանց ծանօթութիւնների։

Կտակը կամ ամբողջապէս գրւում է կտակարարի ձեռքով և կամ նորա խնդրանքով՝ ուրիշի ձեռքով. երկու դէպքումն էլ պէտք է վաւերացրած լինի իւր ստորագրութեամբ։ Ստորագրութիւնը պիտի կրէ՝ անուն, հայրանուն, ազգանուն և կոչում։

Երբ կտակը գրուած է ուրիշի ձեռքով, այդ դէպքում բացի կտակարարի ստորագրութիւնից՝ պէտք է կրէ և նոյն գրողի և առ նուազն երկու վկայի ստորագրութիւնը, եթէ սոցամից մէկը խոստովանահայր քահանան է։

Արտագրողը չէ կարող ոչ կտակարարի կողմից ստորագրել և ոչ էլ վկայ լինել. այսպէս էլ ստորագրողը չէ կարող ոչ վկայ լինել և ոչ էլ վկայի փոխարէն ստորագրել։

Անհրաժեշտ է և արտագրողի ստորագրութիւնը, որ լինելու է կտակի վերջում կտակարարի ստորագրութիւնից առաջ, թէպէտ կարող է և ուրիշ տեղ էլ լինել։

Վկաներից երկու պայման է պահանջւում. 1, նոքա պիտի վկայեն, որ նա, որը առաջարկել է իրանց կտակը՝ նոյն անձն է, ով որ կտակել է և ստորագրել. 2, կտակը իրանց առաջարկած ժամանակ՝ ամենքն էլ անձամբ տեսած են կտակողին և գտել են նորան առողջ մտքով և հաստատուն յիշողութեամբ։

Եթէ կտակարարը անգրագէտ է և կամ հիւանդութեան պատճառով չէ կարող իւր ձեռքով ստորագրել կտակը, այդ դէպքում բացի վկաներից, նորա փոխարէն և խնդրանքով պէտք

է մէկ ուրիշը ստորագրէ. սրանից ես պահանջում է նոյն պայմանները, ինչ որ ամեն մի վկայից։

Վկայ չեն կարող լինել՝ 1, որոնց կտակած է որևէ բան. 2, սոցա ազգականները մինչև չորրորդ աստիճան և խնամութեան երրորդ աստիճանի բարեկամները. 3, այդ կտակով նշանակուած կտակակատարներն ու խնամակալները. 4, Որոնք օրէնքով կտակելու իրաւունք չունին և 5, ովքեր ընդհանուր օրէնքով չեն կարող վկայ լինել։

Բոլոր կտակները, կտակողի մահից յետոյ, նախ քան կատար ածելը, պէտք է առաջարկուին նահանգական դատարանի հաստատութեան. Նահանգական դատարանին առաջարկելու ժամանակամիջոց նշանակուած է Ռուսիայում ապրողների համար—մի տարի, իսկ արտասահման ապրողների համար՝ երկու տարի, կտակողի մահուան օրից հաշուած։ Այս ժամանակամիջոցն անցկացրած կտակները այլ ևս չեն ընդունուում դատարան և համարուում են ոչնչացած։

Արտասահման ապրող ռուսահպատակները կարող են կտակ կազմել տեղական կարգերի համեմատ, բայց վերջը ռուսական հիւպատոսարան ներկայացնելու պայմանով։

Կտակի կատարումը յանձնուում է 1, կտակակատարներին և 2, նոյն իսկ ժառանգներին, ըստ ցանկութեան կտակարարի։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՏԱԿԻ ՕՐԻՆԱԿ

1. Կտակողի ձեռքով գրուած

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Ամէն։ Ես ներքոյ ստորագրեալս Թիֆլիսի քաղաքացի Թորգոմ Խաչիկեան Սլկունի, առողջ մտքով և հաստատուն յիշողութեան տէր, զգալով մօտալուտ վախճանս, որոշեցի դրոշմել այստեղ իմ վերջին կամքս՝ մահից յետոյ մնացող գոյքերիս վերաբերմամբ և ներկայ կտակովս կարգադրում եմ. 1, իմ բոլոր հայրական ժառանգութիւնս, որ է մի գիւղ իւր վարելահողերով, օրինական ժառանգութեամբ պիտի անցնին կնոջս և զաւակներիս։ 2, Իմ սեպհական տնշամութեամբ ձեռք բերած քարուկրեայ տունը, որ գտնուում է Թիֆլիս քաղաքում, Հայոց փողոց, թիւ 349, կտակում եմ ի մշտական և ժառանգական սեպհականութիւն իմ սիրելի կնոջ Կարինէ Վահանեանին այն բոլոր շարժական կայքերի հետ միասին, որոնք կերևան իմ մահուանս ժամին նոյն տանը։ 3, նոյն իմ կնոջս եմ թողնում գրասենեկումս երկաթէ անդուկի մէջ գտնուած լումայատոմսերը

«Անահտեան» Առևտրական տան։ 4, Իմ անդրանիկ որդի Սեպուհ Թորգոմեանին կտակում եմ իմ սեպհական աշխատութեամբ ձեռք բերած կալուածքը, որ գտնուում է Թիֆլիսի գաւառի Դուռնուկ գիւղում իւր ջրաղացով և բոլոր պատկանելիքներով. 5, Կրտսեր որդուս Փառնաւազ Թորգոմեանին թողնում եմ իմ սեպհական աշխատութեամբ ձեռք բերած կալուածքը, նոյն գաւառի Բոգ գիւղում, իւր բոլոր այգեստաններով։ 6, Այնուհետև բոլոր շարժական կայքս և դրամագլուխս, ինչ որ կմնայ իմ մահից յետոյ, բացի կնոջս կտակած գոյքից և լումայատոմսերից, բաժանել հաւասարապէս երկու որդւոցս վերայ, նախապէս դրամագլխից տալով ա) հարիւր հազար ռուբլի ս. Էջմիածնի Մայր Աթոռին՝ Հայկական Հոգևոր ճեմարանի պահպանութեան համար, բ) նոյն ճեմարանին յիսուն հազար ռուբլի՝ Հայ ժառենագիրների հրատարակութեան համար, գ) Թիֆլիսի Հայոց թեմական առաջնորդին՝ ս. Յովհան Օձնեցու վանքի նորոգութեան համար տասն հազար ռուբլի, և դ) երկու հազար ռուբլի իմ երկու սպասաւորներին բաժանելու, որ կատարուելու է իմ սիրելի կնոջ ձեռքով։ Եւ 7, ինձ կտակակատար նշանակում եմ Թիֆլիսի վաճառական Ընձակ Անանեան Սուրմակեանին։ Ի վերջ բանիս ինձանից

յետոյ մնացող գերդաստանիս վերայ հայցելով Ամենաբարձրեալի օրհնութիւնը, աղօթում եմ, որ նա պահէ նոցա սիրոյ և խաղաղութեան մէջ յանիսկան, և թող նոքա ներեն ինձ, որ այժմս ուղևորուում եմ դէպի անանց կեանքը, իմ բոլոր մեղքերը, ինչ որ գործել եմ նոցա դէմ, կամաւ թէ ակամայ. ամէն։ 1909 ամի Յուլիսի 31-ին։

Կտակեցի Թիֆլիսի քաղաքացի Թորգոմ Խաչկեան Սլկունի։ Վկայում եմ, որ այս կտակը գրուած է ու ստորագրուած կտակող՝ քաղաքացի Թորգոմ Խաչկեան Սլկունու իսկական ձեռքով և որ երբ կտակողն առաջարկեց ինձ այս կտակը ստորագրելու՝ գտնուում էր առողջ մտքի և հաստատուն յիշողութեան մէջ, կտակողի խոստովանահայր, ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու միաբան Ղեոնդ երէց Պահլաւունի։ Նոյնը և ես եմ վկայում ուսուցիչ Թոդիկ Ապահունի։

2. Կտակողի ձեռքով ստորագրուած

Տարեթուից եւ ամսաթուից յետոյ։ Այս կտակը կտակարար Թիֆլիսի քաղաքացի Թորգոմ Խաչկեան Սլկունու կամքի և ասածի համեմատ գրեցի իրաւագէտ Սիսակ Մլէհեան Արշակունի։ Կտակարար Թորգոմ Խաչկեան Սլկունի։ Վկայում եմ, որ այս կտակը կտակարար Թիֆլիսի քաղա-

քացի Թորգոմ Խաչկեան Սլկունու կամքի ու ա-
սածի համեմատ գրեց իրաւագէտ Սիսակ Մլէ-
հեան Արշակունին և ստորագրեց ինքը կտակողը։
Նոյնպէս էլ կտակողը այս կտակն ինձ առաջար-
կելիս կատարեալ խելք և հաստատուն յիշողու-
թիւն ունէր. տոհմական պատուաւոր քաղաքացի
Խաչ Եղրեան Սպանդունի։ Նոյնը և ես եմ վկ-
կայում. սպայ Աբաս Մելիք-Շահնազարեանց։

3. Անգրագէտի կտակ։

Տարեթուից եւ ամսաթուից յետոյ։ Այս կտակը կտակարար Թիֆլիսի քաղաքացի Թորգոմ Խաչկեան Սլկունու կամքով ու ասածի համեմատ գրեցի իրաւագէտ Սիսակ Մլէհեան Արշակունի։ Կտակեցի Թորգոմ Խաչկեան Սլկունի, սորա անգրագիտութեան պատճառով և խնդրանքով ստորագրեցի կարսեցի Շապուհ Հրանտեան Ջունդ։ Վկայում եմ, որ այս կտակը գրուած է կտակող Թիֆլիզի քաղաքացի Թորգոմ Խաչկեան Սլկունու կամքով ու ասածի համեմատ իրաւագէտ Սիսակ Մլէհեան Արշակունու ձեռքով և կտակողի անգրագիտութեան պատճառով և նորա խնդրանքով ստորագրուած է կարսեցի Շապուհ Հրանտեան Ջունդի ձեռքով, ինչպէս նաև որ կտակողն այս կտակը ինձ առաջարկելիս կատարեալ

խելք և հաստատուն յիշողութիւն ունէր. կտակողի խոստովանահայր ս. Վարդան եկեղեցու միաբան Մուշեղ երէց Արարատեանց։ Նոյնը և ես եմ վկայում ուսուցիչ Թոդիկ Ապահունի։

Բ. ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿ

Հազար ինն հարիւր ինն ամի, յունուար մէկին Թիֆլիս։ Մենք ներքոյ ստորագրեալներս, Թիֆլիսի արհեստաւոր Բակ Սենեքերիմեան Արշաղեանց և Երևանի նահանգի Բիւրական գիւղի Մանանդեանց, կոչեցեալ Ջաջուռ Թաթուլեան Մանանդեանց, կոչեցեալ Ջաջուռ Թաթուլեան Մանանդեանց, կոչեցինք մեր մէջ հետևեալ պայմանագիրը. 1, Ես Արտաղեանս, վերցուցի ինձ մօտ կոշկակարութիւն սովորցնելու Մանանդեանցի որդուն, Ծիտուլ Ջաջուռեան Մանանդեանց պատանուն, հինգ տարի ժամանակով վերոյիշեալ թուից սկսած, այսինքն մինչև հազար ինն հարիւր տասն և չորս թուի յունուարի մէկը։ 2, Ես Արտաղեանս պարտաւորուում եմ սովորցնել Ծիտուլ Մանանդեանցին հինգ տարուայ ընթացքում կոշկակարութեան արհեստը, այն է կարել երկու սեռի մանկանց կոշիկներ, կիսակոշիկներ, մաշիկներ և այն ամենը, ինչ որ յիշեալ արհեստին է վերաբերում, առանց

նորա հայր Զաքուռ Մանանդեանից վարձ պահանջելու իւր որդու պահպանութեան, կօշկի, հագուստի և փոխնորդի համար. 3, Հինգ տարին լրանալուց յետոյ ես Արտազեանս պարտաւոր եմ Ծիտուլ տղային վերադարձնել իւր հօրը Զաքուռ Մանանդեանին մաքուր շորերով ու փոխնորդով, և եթէ պատշաճաւոր քննութիւնը ցոյց տուեց, որ Ծիտուլ Մանանդեանը ինձ մօտ լաւ է սովորել արհեստը, այդ դէպքում ես Զաքուռ Մանանդեանս պարտաւոր եմ վճարել նորան Արտազեանցին իմ որդի Ծիտուլին պահելու և հագուստի համար յիսուն ռուբլի։ 4, Ես Արտազեանցս, քանի որ ինձ մօտ կուսանի Ծիտուլ Մանանդեանը, պարտաւոր եմ իմ հաշուով ամեն շաբաթ բաղանիք ուղարկել նորան։ 5, Ուսման ժամանակ ես Արտազեանս իրաւունք ունիմ նորան Ծիտուլ Մանանդեանին թեթև ընտանեկան պատժի ենթարկել նորա վատ վարքի և ծուլութեան համար և նորա հայր Զաքուռ Մանանդեանը իրաւունք չունի հաշիւ պահանջել սորա համար ինձանից։ 6, Եթէ ես Արտազեանս նկատեմ, որ Ծիտուլ Մանանդեանը միանգամայն անընդունակ է արհեստի, այդ դէպքում պէտք է տեղեկացնեմ նորա հօր Զաքուռ Մանանդեանին անշուշտ մինչև վեց ամիս այսօրից սկսած և որդուն ուղարկել իւր հօր, մօտ առանց որևէ վարձ պահանջելու

նորանից։ 7, Մինչև նշանակած հնգամեայ ժամանակամիջոցը Զաքուռ Մանանդեանը իրաւունք չունի յետ վերցնել ինձանից, Արտազեանից, իւր որդի Ծիտուլ Արտազեանին. իսկ ես, Արտազեանս իրաւունք չունիմ յետ դարձնել նորան իւր որդին, բացի նախընթաց յօդուածում արձանագրած դէպքից։ Այս պայմանագիրը մենք կարդացինք։ Արտազեանցի, իսկ Զաքուռ Մանանդեանի մօտ վաւերացրած պատճէնը։ Թիֆլիսի արհեստաւոր Բակ Սենեքերիմեան Արտազեանց։ Երևանի նահանգի Բիւրակն գիւղի բնակիչ Զաքուռ Թաթուլեան Մանանդեանց։

Գ. ԲՆԱԿԱՐԱՆ ՎԱՐՁՈՒ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հազար ինն հարիւր ինն ամի, օգոստոսի մէկին։ Մենք ներքոյ ստորագրեալներս, Թիֆլիսի վաճառական Երուազ Աղէկեան Բագրատունի և բժիշկ Նորայր Պռօշեան Մանդակունի կռեցինք այս պայմանագիրը առ այն, որ ես Մանդակունիս վարձեցի Բաղրատունու տունը, որ գտնուում է Թիֆլիսի Տափի թաղում, Ներսիսեան փողոցում, թիւ 10, երկրորդ յարկում հինգ սենեկից բաղկացած մի բնակարան իւր հաշուով, խոնա-

նոցով, լուացարանով, նկուղով և ջրով, մի տարի ժամանակով, այն է՝ մինչև առաջիկայ հագարինն հարիւր տասը թուականի օգոստոսի մէկը, տարեկան չորս հարիւր ութսուն ռուբլի վարձով և հետեւեալ պայմաններով. 1, Ես Մանդակունիս պարտաւորւում եմ վարձագրամը վճարել Բագրատունուն իւրաքանչիւր ամսուանը սկզբից քառասնական ռուբլի, միշտ ճշտութեամբ և միանուագ, արտօնեալ եօթն օրից աւելի չուշացնելով և այս պայմանագրի պատճէնի վերայ ստորագրել տալով ստացման մասին. իսկ եթէ Ես Մանդակունիս իւր ժամանակին չվճարեմ, Բագրատունին իրաւունք ունի տունս յետ ստանալ ինձանից և պահանջել ինձանից տան վարձը ինչքան ժամանակ որ բնակուել եմ և չեմ հատուցել։ 2, Ես Մանդակունիս պարտաւոր եմ հետեւել, որ ինձ մօտ ապրող անձինք ամենքն էլ ունենան օրինաւորման վկայագրեր իրանց անձնաւորութեան մասին, որոնց մասին իւր ժամանակին պարտաւոր եմ տեղեկութիւն տալ Թաղապետութեան, հակառակ դէպքում բոլոր տուգանքները վճարում եմ ես Մանդակունիս։ 3, Բնակարանը պէտք է պահեմ մաքուր և կարգին, աղբը դէն ածել նշանակած տեղը, լուացքն անել Լուացարանում։ 4, Եթէ ես Մանդակունիս որևէ նորոգութիւն ցանկանամ անել, կարող եմ կատարել միայն և եթէ Բագրատունու հաւանութեամբ, իսկ երբ տունը դատարկեմ՝ իմ աւելացրած նորոգութիւնները բոլորն էլ մնալու են տանտիրոջ սեպհականութիւն. 5, Ես Մանդակունիս ամեն կերպ պիտի զգուշանամ տունը կրակ գցելուց։ 6, Եթէ ես Մանդակունիս մինչև պայմանագրիս լրանալը ցանկանամ տունը ուրիշին յանձնել, նախապէս պարտաւոր եմ տանտէր Բագրատունու համաձայնութիւնն առնել առ այն. 7, Տունը դատարկելիս ես Մանդակունիս պարտաւոր եմ յանձնել կարգին և մաքուր. ինչ իրեր որ փչացրած լինինք, պէտք է ուղղենք յանձնելիս. 8, Այս պայմանագիրը պատրաստելու ծախսերը ես Մանդակունիս առնում եմ ինձ վերայ. 9, Այս պայմանագիրը երկու կողմից պէտք է պահուի սուրբ և անխախտ. Բագրատունիս պէտք է ունենամ սորա իսկականը, իսկ Մանդակունիս իսկականի վաւերացրած պատճէնը։ Այս պայմաններին համաձայն եմ Թիֆլիզի վաճառական Երուազ Աղէկեան Բագրատունի։ Այս պայմաններին համաձայն եմ բժիշկ Նորայր Պոշեան Մանդակունի։—Առաջին ամսուայ վարձը, այսինքն մինչև 1909 թուի սեպտեմբերի 1-ը քառասուն ռուբլին ստացայ Բագրատունի։

—

Դ. ԽՆԴՐԱԳԻՐՆԵՐԻ ՁԵՒԵՐ

1. Ծննդական վկայականի խնդիր

Թիֆլիսի Հայոց վիճակային Կոնսիստորիային

Թիֆլիսի նահանգի Խաչէն գիւղացի
Արմայիս Հայկեան Մանդակունուց

Խնդիր

Խնդրում եմ թեմական ատենիցդ տալ ինձ իմ ծննդեան և մկրտութեան վկայականը։ Ես ծնուել եմ իմ ծնողներ Հայկ Մանդակունու և Թագուհի Յովնանեանի օրինաւոր ամուսնութիւնից 1889 թուի մայիսի 1-ին և մկրտուել նոյն թուի մայիսի 9-ին Խաչէն գիւղի ս. Մեսրովպ եկեղեցում Վահէ քահանայ Վարազդատեանի ձեռքով և Սահակ Թորոսեանի կնքահայրութեամբ։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն, ազգ. ու բնակութեան հասցէն).

.....19.....ամի

Խաչէն

*) 1, 2, և 3 վկայականների խնդիրների վերայ ռուսական օրէնքի համաձայն, պէտք է կպցնել երկու երկու հատ 75 կոպէկանոց դրուագադրոշմ (մարկա)։

2. Պսակի վկայականի խնդիր

Թիֆլիսի Հայոց Վիճակային Կոնսիստորիային

Թիֆլիսի քաղաքացի Մանուէլ Գէորգեան Արարատեանից

Խնդիր

Խնդրում եմ թեմական Ատենիցդ տալ ինձ իմ ամուսնութեան վկայականը։ Ես պսակուել եմ Անոյշ Հրաչեայի հետ 1907 թուի մարտի 2-ին Թիֆլիսի ս. Լուսաւորիչ եկեղեցում Պաշպիկ քահանայ Երանոզեանի ձեռքով և խաչեղբայրութեամբ Վլաս Մալխասեանի։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն և ազգ. ու բնակութեան հասցէն)

.....19.....ամի

ք. Թիֆլիս —

3. Մահուան վկայականի խնդիր

Արցախի Հայոց Վիճակային Կոնսիստորիային

Նորշէն գիւղացի Անուշաւան Մուշկամբարեանից Խնդիր

Խնդրում եմ թեմական Ատենիցդ տալ ինձ

իմ հայր Գրիգոր Մուշկամբարեանցի մահուան և թաղման վկայականը, որ վախճանուել է 1900 թուի հոկտ. 1-ին և թաղուել Նորշէն գիւղի հանգստարանում նոյն տեղի Փառնաւազ քահանայ Ատոմեանի ձեռքով։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն, ազգ՝ և բնակութեան հասցէն)

.....19.....ամի

Նորշէն գ.

—

4. Ուսման տալու խնդիր

Գօրուայ հնաշէն ս. Ստեփանոս եկեղեցու տղայոց ծխական ուսումնարանի Հոգաբարձութեան

Նոյն քաղաքի բնակիչ Խաչիկ Առաւեղեանից

Խնդիր

Ցանկանում եմ իմ որդի Հրանտին տալ Ձեր խնամքին յանձնուած դպրոցը. ուստի սորա հետ ներկայացնելով նորա ծննդեան և ծագկի պատուաստման վկայականները՝ խնդրում եմ ընդունել նորան ձրիաթոշակ աշակերտների թուում՝ իբ

հասակին և դիտութեան համապատասխան դասատանը։ (Կամ այսինչ դասատուն)։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն, ազգ. և բնակութեան հասցէն).

.....190.....ամի

Ք. Գօրի

—

5. Ծառայութեան վկայականի խնդիր

Ագրոր գիւղի Հայոց ծխական ուսումնարանի հոգաբարձութեան

Նոյն ուսումնարանի նախկին ուսուցիչ Միսաք Վանցեանից

Խնդիր

Ձեր խնամքին յանձնուած ուսումնարանում ծառայել եմ ուսուցչի և վերակացուի պաշտօնով 3 տարի, 1901 թուի սեպտեմբերից մինչև 1904 թուականի ուսումնական տարուայ վերջը։ Եւ որովհետև այժմ անհրաժեշտ է ինձ մի վկայական իմ ծառայութեան համար դպրոցիդ մէջ, ուստի խնդրում եմ Հոգաբարձութիւնդ տալ ինձ այդ վկայականը հոգաբարձութեանդ ստորագրութեամբ և դպրոցական կնքով վաւերացրած։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն, ազգ. և բնակութեան հասցէն)

.....190..... ամի

Ամսոր գ.

—

6. Նպաստի կամ օժանդակութեան խնդիր

Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան խորհրդին

Թիֆլիսի քաղաքացի այրի Զանազան Մանուկեանից

Խնդիր.

Ամուսնուս մահից յետ մնացի հինգ անչափահաս որբերով անտէր և անօգնական, զուրկ ապրուստի ամեն միջոցներից։ Ուստի դիմելով ընկերութեանդ խորհրդին՝ խնդրում եմ կարեկցել իմ թշուառ վիճակին և տալ ինձ ընկերութեանդ դրամարկղից ամսական կամ միանուագ նպաստ, որով կարողանամ հայթայթել զաւակներիս օրական ապրուստը։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն, ազգ. բնակութեան հասցէն)

.....190..... ամի

Թիֆլիս.

7. Ամուսնալուծութեան խնդիր

Ն. Նախիջևանի Հայոց վիճակային կոնսիստորիային

Ն. Նախիջևանի բնակիչ Ոգոհէ Խաչկեան Խաչվանքեանից

Խնդիր.

Իմ ամուսին Ռստակ Խաչվանքեանը վերջին տարիները նկատուել է ամուսնական անհաւատարմութեան մէջ և թողնելով իւր օրինաւոր ամուսինն ու զաւակները՝ հեռացել է մեզանից։ Երկար ժամանակ ես ներում էի նորա այդ յանցաւորութիւնը և յորդորում վերադառնալ իւր տուն և տէր լինել իւր զաւակներին. բայց 'ի զուր։

Դժբաղդաբար համոզուած լինելով, որ այլևս անուղղայ է դարձել նա և ցանկալով հեռացնել նորա անուանարկ անունը ինձանից՝ խնդրում եմ թեմական Ատենիցդ քննութիւն նշանակել այդ խնդրի համար և երբ կհաստատուի

---

*) Հայոց եկեղեցին իբրև ամուսնալուծութեան պատճառ ընդունում է հետևեալ էական հանգամանքները.

1, մէկ կամ միւս կողմի ամուսնական անհաւատարմութիւն։

2, մէկ կամ միւս կողմի հոգեկան անբուժելի հիւանդութիւն։

իմ սասծները, լուծել մեր պսակը՝ թոյլատրելով ինձ մտնել նոր ամուսնութիւն։ Քննութեանը ես պարտաւորուում եմ ներկայացնել իմ վկաներն ու փաստերը ամուսնոյս յանցաւորութիւնն ապացուցանելու համար։

Ստորագրութիւն (անուն, հայրանուն, ազգ. բնակութեան հասցէն)

.....190..... ամի

Ն. Նախիջևան.

Պսակի հրաման առնելու ձեւ

Երևանի Հայոց վիճակային Կոնսիստորիային

Ծխատէր քահանայից

Յայտարարութիւն

Երևանի բնակիչ Ռուբէն Լևոնեան Ցոլակեանը, 22 տարեկան ամուրի ցանկանում է ամուսնանալ նոյն քաղաքի բնակիչ Սուրէն Հրանտեանի դուստր օրիորդ Փառանձեմի հետ, որ 18 տարեկան է։ Երկու խօսեցեալների մէջ ոչ

3, մէկ կամ միւս կողմի ցմահ աքսոր.
4, մէկ կամ միւս կողմի 7 տարուայ անհետ բացակայութիւն.
5, առնական անկարողութիւն։

մի օրինական արգելք չգտնելով՝ սորա հետ ներկայացնում եմ բժշկի վկայական փեսայի առողջութեան վերաբերմամբ և նորա՝ զինուորագրութեան վկայականը, և խնդրում թեմական Ատենիցդ տալ ինձ հրաման պսակելու վերոյիշեալներին։ *)

Ծխատէր երէց...

.....190..... ամի

Երևան.

---

9. Քահանայի ձեռնադրութեան համախօսական

Նորին բարձր սրբազնութեան

.....վիճակաւոր առաջնորդ Տ.....ին

.....գիւղի հայ հասարակութիւնից

խնդիր

Մենք, ներքոյ ստորագրեալներս, ... գիւղի հայ հասարակութիւնը, իւր նախկին ծը-

*) Այս յայտարարութեան մէջ պէտք է աւելացնել նաև, թէ ծխատէրն առաջարկում է թեմական Ատենին Աթոռահաս կոչուած արդիւնքը, որի քանակը տարբեր է լինում զանազան վիճակներում։

խատէր ..... քահանայի վախճանուելուց յետ զուրկ մնալով հոգևոր մխիթարութիւնից, համահաճ հաւանութեամբ ընտրեցինք մեզ համար քահանայացու մեր համագիւղացի ..... ին, որ իւր ուսումը աւարտել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարանում, հինգ տարուց 'ի վեր ուսուցչութեամբ է պարապում մեր գիւղի ծխական դպրոցում և իւր գովանի վարք ու բարքով և քահանայապատշաճ գիտելիքների ուսմամբ քաջ յայտնի է մեր հասարակութեան:

Ուստի և սորա հետ ներկայացնելով Ձեր գերապատուութեան յիշեալ ..... ի ուսման և ծննդական վկայականները և հարկից ազատման գիւղական համախօսական թուղթը՝ խնդրում ենք ընդունել նորան հոգևոր կոչման մէջ և ձեռնադրել նորան քահանայ մեր գիւղի սուրբ Մեսրովպ եկեղեցու վերայ մեզ հովուելու համար:

Գերապատիւ սրբազնութեանդ խոնարհ որդիք

Ստորագրութիւնները

'ի գիւղն .....

'ի ..... 190 ..... ամի.

---

10. Վկայականների օրինակներ

1. Ծննդեան, պսակի և մահուան քաղուածքների վերայ ռուսական օրէնքի համաձայն պէտք է կպցնել մի մի հատ 75 կոպէկանոց դրոշագրոշմ (гербовая марка):

2. Այս տուրքից ազատ են այն քաղուածքները, որոնք առաջարկուելու են զինուորագրութեան տեսանին և որբոց դատարանին:

Ա. ԾՆՆԴԵԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ

Ի մայր տումարէ ծնելոց և մկրտելոց (այս ինչ) եկեղեցւոյ Հայոց (քաղաք կամ գիւղ) 190 ..... ամի համար ..... երևի. յօրինաւոր ամուսնութեամբ (այս ինչի) ընդ (այս ինչ) ծնեալ է (ուստր կամ դուստր) ի ..... ամսոյ հազար ինն հարիւր ..... ամի և մկրտեալ 'ի (գրել ամիս եւ տարին) քահանայագործութեամբ (այս ինչի), ի դեամ մկրտութեան անուանեալ է (անունը գրել) ինքահայրն եղեալ է (անուն եւ ազգ):

Զօրմէ վկայեմ ստորագրութեամբ իմով և դրոշմամբ սեպհական կնքոյ: ի ..... ն ..... 19 ..... ամի ի Թիֆլիս

(Ստորագրութիւն)

..... Եկեղեցւոյ ծխատէր

տեղի կնքոյ

ВЫПИСКА

Изъ метрической книги.....
церкви за 19 ..... г. ч. 1 ст. ..... видно: отъ
законнаго брака .....
съ .....
родил .....
тысяча девятьсотъ .....
года, котор ..... крещен .....
священодѣйствіемъ .....
и при св. крещеніи наречено ..... имя
..... воспріемникомъ былъ .....

Въ чемъ удостовѣряю подписью и приложеніемъ собственной печати. ..... го
..... 19 ..... г. гор. Тифлисъ

пе- чать

(подпись)

—

Բ. ՊՍԱԿԻ

ՔԱՂՈՒԱԾՔ

Ի մայր տուփարէ պսակաց (այս ինչ) եկեղեցւոյ Հայոց (քաղաք կամ գիւղ) 19 ..... ամի համար ..... երևի՝ (գրել մարդու անուն, հայրանուն եւ ազգը) մտեալ է (գրել՝ թէ ո՞ր պսակն է, առաջին, երկրորդ, թէ՞ երրորդ) օրինաւոր ամուսնութիւն ընդ դստեր (կնոջ հօր անունը, ազգը եւ իրան՝ կնոջ անունը) ի ..... ն
..... հազար ինն հարիւր .....
ամի քահանայագործութեամբ (այս ինչի)։

Զորմէ վկայեմ ստորագրութեամբ իմով և դրոշմամբ սեպհական կնքոյ։ ի ..... ն
..... 19 ..... ամի ի ..... ։

..... Եկեղեցւոյ ծխատէր (Ստորագրութիւն)

Տ. Կ.

—

ВЫПИСКА

Изъ метрической книги ..... Армянской ..... церкви за 19 ... г. ч. 2 ст. ..... видно: ..... вступилъ въ ..... законный бракъ съ дочерью .... го ..... тысяча девятьсотъ ..... года (19 ..... г.), священодѣйствіемъ ..... .

Въ чемъ удостовѣряю подписью и приложеніемъ собственной печати. ..... го ..... 19 ..... г. гор. .....

(подпись)

М. П.

Գ. ՄԱՀՈՒԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ

Ի մայը տումարէ հնջեցելոց (այս ինչ) եկեղեցւոյ Հայոց (քաղաք կամ գիւղ) 19 ..... ամի

համար ..... երևի (անուն, հայրանուն, ազգ եւ տարիք) ամաց, վախճանեալ է 'ի ..... հազար ինն հարիւր ..... ամի և թաղեալ ..... 'ի ձեռն (այս ինչ քահանայի) ի գերեզմանատան Հայոց (հանգստարանի անունը)։

Զորմէ վկայեմ ստորագրութեամբ իմով և դրոշմամբ սեպհական կնքոյ։ Ի ..... ն 190 ..... ամի ի ք. .....

..... Եկեղեցւոյ ծխատէր (Ստորագրութիւն)

Տ. Կ.

ВЫПИСКА

Изъ метрической книги ..... Армянской ..... церкви за 19 ..... г. ч. 3 ст. ..... видно: ..... лѣтъ, умер ..... тысяча девятьсотъ ..... года (19 .....) и погребен ..... священодѣйствіемъ ..... на ..... Армянскомъ кладбищѣ.

Въ чемъ удостовѣряю подписью и приложеніемъ собственной печати. ..... го
..... 190 ..... года гор. .....

(подпись)

М. П.

Դ. ԶՔԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Վկայական

Տալիս իմ այս վկայականը իմ ծխական Թիֆլիզի քաղաքացի Դաւիթ Բակուրեան Հրահատեանցին առ այն, որ նա անչափահաս բազմաթիւ որդիների տէր լինելով, գտնուում է յետին աղքատութեան մէջ՝ կարօտ մարդասէր անձանց օգնութեան, որ վկայում եմ իմ սեփական կնքոյս վաւերացումով։ 1 Սեպտեմբերի 1909 ամի Թիֆլիս։

Թիֆլիսի Վերայի ս. Խաչ եկեղեցու
Հրանտ քահանայ տէր Աւետիսեանց։

Նոյնը պաշտօնական լեզուով

Վկայական

Տամ զայս վկայական ծխոյ իմում Թիֆլիզի քաղաքացի Դաւթայ Բակուրեան Հրահատեանց առ այն, զի նա զոյով տէր բազմանդամ գերդաստանի, անչափահաս զաւակօք, 'ի ծայրահեղ աղքատին վիճակի, կարօտի օգնութեան մարդասէր անձանց, զորմէ վկայեմ ստորագրութեամբ իմով և դրոշմամբ կնքոյ իմոյ։ 'ի 1 սեպտ. 1909 ամի 'ի ք. Թիֆլիս։

Ծխատէր Վերայի ս. Խաչ եկեղեցւոյ
Հ. ք. տէր Ա.

11. Դպրոցական

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՈՒԽԱՅԻ Եկեղեցական Ծխական Երկսեռ Դպրոցի Հոգաբարձութիւնը, համաձայն Մանկավարժական ժողովի՝ 190 ..... թուի ..... ին կայացրած որոշման, տալիս է այս վկայականը ....., որ նա 190 ..... թուի ..... աւարտել է ..... ամեայ դպրոցիս լիակատար դասընթացքը ..... վարքով և ստացել է առարկաներից հետևեալ աւարտական թուանշանները՝

Կրօն	.....
Հայոց լեզու	.....
Ռուսաց լեզու	.....
Թուաբանութիւն	.....
Հայոց պատմութիւն	.....
Բնական պատմութիւն	.....
№ Աշխարհագրութիւն	.....
Գծագրութիւն	.....
Գեղագրութիւն	.....
Ձեռագործ	.....

Անուխա, 190 ..... թուի .....

Նախագահ Հոգաբարձութեան՝
Ուսուցիչ՝

Փոստային կանոններ

Քաղաքային նամակներ

Բաց նամակների գինը.	3 կ.
Մինչև մի ֆունտ փակ նամակների գինը .	3 կ.
» » » ապահոված փակ. » .	10 կ.
Փաթեթ (бандероль) տպուած բովանդ. մինչև 1 լոտ	1 —
» » » » 8 »	2 —
» » » 8—16 »	4 —
Գործառնական թղթեր և ապրանքի նմուշներ ամեն մի 4 լոտ	2 —
Փաթեթների կշիռը սահմանափակուած	է.—

տպուած թղթերի և գործ. թղթերի համար 128 լ. (4 ֆ.) իսկ նմուշների համար 27 լ.

Բաց նամակ պատասխանի վճարով։ Տեղական և օտարերկրեայ նամակներն արժեն 6 կ., իսկ միջազգայինները՝ 8 կ.։

Փակ նամակ. Ներքին օտարերկրեայ նամակների ամեն մի լոտը արժէ 7 կ. և ամեն մի 15 գրամը (1 լ. 1/4 մսխ.) արտասահմանի նամակը 10 կ.։

Փաթեթներ (бандероль)։ Փաթեթներով կամ չկպցրած ծրարներով թույլ է տրուած ուղարկել.—տպուած գործեր, գործնական թղթեր, ապրանքի նմուշներ և լուսանկարներ։

Փաթեթների ամենամեծ կշիռը ներքին հաղորդակցութեան համար 4 ֆունտ է, իսկ միջազգայինը՝ 4 ֆ. 28 լոտ։

Երկու տեսակ փաթեթների համար էլ սակագին է որոշուած ամեն մէկ 4 լոտին 2 կոպ.

Պատուիրած կարելի է ուղարկել թէ բաց և թէ

փակ նամակներ և փաթեթներ. պատուէրի համար բացի կշռագնից՝ առնում է ներքինի համար 7 կ., իսկ միջազգայինի համար 10 կ.։ Այդպիսի թղթակցութեան կորչելու դէպքում փոստային վարչութիւնը վճարում է ուղարկողին ներքինի համար՝ 10 ռ. իսկ միջազգայինի՝ 12 ռ. 50 կ.։

Հասարակ և պատուիրած նամակներում և. փաթեթներով արգելուած է փող ուղարկելը։

Դրամական ծրարներ։ Փող ուղարկւում է ծրարով ոչ աւելի քան 1000 ռ. իբրև դրամական ծրար կարելի է ուղարկել և ամեն տեսակ արժէթուղթ։

Ամեն մի այդպիսի ծրարի համար՝ ներքինի համար վերցւում է լոտին 6 կ., իսկ միջազգայինին՝ 10 կ., ապահովութեան վարձ ներքինի համար մինչև 10 ռ. 10 կ., 10 ռ. մինչև 100 ռ. 25 կ., իսկ 100 ռուբլուց բարձր բացի այդ սակագնից ամեն մի հարիւրին 15 կ.։ Արտասահմանի համար կայ առանձին սակագին։

Ուղարկուելիք ամեն տեսակ դրամական և արժէքաւոր ծրարներ ուղարկւում են յատուկ դոբա համար փոստերում վաճառուող թերթիկներով, որոնց վերայ փակցւում են սակագնի համապատասխան դրուագադրոշմներ (մարկաներ)։

Դրամի փոխադրութիւն։ Մինչև 500 ռ. փոխադրւում է Ռուսիայի ամեն կողմերը, որի համար վերցնւում է վճար—մինչև 25 ռ. 15 կ., 25 ռուբլուց բարձր մինչև 100 ռ. 25 կ., 100—125 ռ.—40 կ., 125—200 ռ.—50 կ., 200—225 ռ.—65 կ., 225—300 ռ.—75 կ., 300—325 ռ.—90 կ, 325—400 ռ.—1 ռ., 400—425 ռ.—1 ռ. 15 կ. և 425—500 ռ.—1 ռ. 25 կ. ևն։

Ծրարներով (посылки) ուղարկւում է ամեն բան, բացի դրանից, փակ նամակներից և դիւրավառ նիւթերից, ամենաշատը 3 փութ ծանրութեամբ։ Ծրարի ամենամեծ չափը լինելու է 28 վերշ. երկ. 9 վերշ. լայն. և 7½ վերշ. բարձր կամ 22 վերշ. երկ. 11½ վերշ. բարձր. և 12 վերշ. լայն։

Ծրարների սակագնի տեսակէտից Ռուսիան բաժանւում է 3 մասը. 1. Եւրոպական Ռուսաստան և Անդրկովկաս, 2, Արևմտ. Սիբիր. Թուրքեստան, Անդրկասպեան և Տուրգայեան նահանգներ, 3. արևելեան Սիբիր։

Սակագինը՝

մինչև 2 ֆ.	I մասին՝ 25 կ.,	II մ.—45 կ.	III մ. 65 կ.
մինչև 7 » »	» 45 » »	—85 » »	1—25 կ.
» 12 » »	» 65 » »	1—25 » »	1—85 կ.

Վերադիր վճար։ Վերադիր կարելի է անել պատուիրած փակ նամակներ, արժէքաւոր ծրարներ, բացի արտասահմանից, ամեն տեսակ։ Հասցէի վերին կողմը գրւում է «վերադիր վճարով» (съ наложеннымъ платежомъ» գումարը բառերով և թուանշաններով և ուղարկողի հասցէն։ Գումարը 5000 ռուբլուց աւելի չպէտք է լինի։ Բացի սահմանած վճարից ամեն մի ռուբլուն տալու է 2 կ. առնուազն 10 կ. կանխիկ դրամով։

Ցպահանջ։ Ցպահանջ հասարակ նամակ ստանալիս պէտք է փոստին ներկայացնել որևէ վկայագիր, գէթ այցեքարտ. իսկ ապահովեալները ստանալու համար պէտք է վաւերացնել տալ իւր ով լինելը։

Հեռագրական կանոններ

Հեռագրի ամեն մէկ բառի վճարն է

քաղաքային կամ արուարձաններինը .	1 կ.
Եւրոպական Ռուսիայում	5 կ.
Ասիական »	5 կ.
Եւրոպական Ռուսիայից Ասիական կամ ընդհակառակ	10 կ.
Բացի դորանից ամեն մի հեռագրին աւելացնում է	15 կ.

Արտասահմանի հեռագիրներից վերցնում է, խօսքի թուի համեմատ առանց յաւելեալ վճարի։

Բառերի թիւը։ Ամենամեծ բառը 15 տառ պիտի ունենայ, աւելին կրկնակի է հաշուում։

Առոգանութեան նշանները՝ գիծը, շեշտը ոչինչ չեն հաշուում։

Կրճատման նշանները, օր. (R. P. պատասխանը վճարուած) (К. Р. Д. ստիպողական վճարուած պատ.) մի բառ են հաշուում. դոքա թոյլ են տրուում միմիայն միջազգային թղթակցութեանց մէջ փակագիծներում։

Թուանշանների հաշիւը։ Ամեն 5 թուանշան մի բառ է հաշուում։ Կէտերը և ստորակէտները թուերի մէջ, կոտորակի նշանները ամեն մէկը մի թուանշան է հաշուում։

Ստորագծում, չակերտներ և փակագիծներ մի մի բառ են հաշուում։

Ստիպողական հեռագիրը տրուում է բոլոր հասարակ հեռագիրներից առաջ. վճարն էլ նոցանից 3 անգամ աւելի է։ Հասցէից առաջ գրում են ստիպողական, կամ ըստ միջազգ. (Д.)։

Տուն հասցնելը։ Ցանկացողը վճարում է 10 բառի վճար և հեռագիրը նորան հասցնում են տուն, որի համար նա իւր հասցէի տակ գրում է հասցնելը վճարուած կամ (С. Р.)

Պատասխանը վճարուած։ Հասցէից առաջ գրում են պատասխանը վճարուած, կամ (R. P.)։ Եթէ պատասխանի բառերի թիւը որոշուած չէ՝ վերցնում է 10 բառի վարձը, իսկ եթէ որոշում են թիւը՝ հաշուում են բառերի թուի համեմատ։

Պատասխան տալու իրաւունքը 6 շաբաթ է նշանակուած։

Ռուսաց եւ օտարազգի դրամների համեմատական աղիւսակ

		արժէք	
		ռ.	կոպէկ
Աւստրօ—Հունգարիա. 1 կրոնը=100 հելլերին		—	$39^{3}/_{8}$
Անգլիա. 1 ֆունտ ստէրլինգը=20 շիլլինգին=12 պէնս.		9	$45^{3}/_{4}$
Բելգիա. 1 ֆրանկը=100 սանտիմին		—	$37^{1}/_{2}$
Բուլղարիա. 1 լէվան=100 ստոտինկին		—	$37^{1}/_{2}$
Բրազիլիան. 1 միլրէյսը=1000 րէյսին		1	$06^{1}/_{2}$
Գերմանիա. 1 մարկը=100 պֆէննինգին		—	$46^{29}/_{100}$
Դանիա. 1 կրոնը=100 էօրամին		—	52
Եգիպտոս. 1 պիաստրը=40 փարաին		—	$96^{4}/_{5}$
		—	$9^{3}/_{5}$

Իսպանիա, 1 պեզետը=100 ցենտիմոսին	—	37 1/2
Իտալիա. 1 լիրան=100 ցենտեզիմոին	—	37 1/2
Լիւքսեմբուրգ. 1 ֆրանկը=100 սանտիմին	—	37 1/2
Հիւս. Ամերիկայի միացեալ նահանգներ.	1	
1 դոլլարը=100 ցենտ.	1	94 3/10
Հոլլանդիա. 1 գուլդենը=100 ցենտին	—	78 1/10
Մէքսիկա. 1 պեզոն=100 ցենտավոին	1	91 1/5
Նորվէգիա. 1 կրոնը=100 էօրամին	—	52
Յունաստան. 1 դրախմը=100 լեպտաին	—	37 1/2
Շվէյցարիա. 1 ֆրանկը=100 ռեպպէն (սանտ.)	—	37 1/2
Շվեցիա. 1 կրոնը=100 էօրամին	—	52
Չինաստան, արծաթի գործածութիւն, հաշուական միութիւն տաէլը (Haikuan—Taël)=37,58 գր. մաքուր արծաթին =1000 կէշ (կամ 100 կանդարին)	—	—
Պարսկաստան. 1 տոմանը=10 նոր կրանին =100 սէնարին=1000 բիստին=10,000 դինարին	3	32
Պորտուգալիա. 1 միլրէյսը=1000 ռէյսին	2	10
Ռումինիա 1 լէուն=100 բաններին	—	37 1/2
Սէրբիա. 1 դինարը 100 փարայի	—	37 1/2
Տաճկաստան. 1 պիաստրը= 40 փարաի	—	8 1/2
Ֆինլանդիա. 1 մարկը =100 պէննիին	—	37 1/2
Ֆրանսիա. 1 ֆրանկը=100 սանտիմին	—	37 1/2

ԴՐՈՒՄԱԳԱՒՈՐ ԹՂԹԵՐԻ ԳԻՆԸ

ա. ԳՈՐԾՆԱԿԱՆ (актовой)

Թերթի գինը.			Որքան գումարի համար		
Ռուբլի	Կոպ.	Բարձր կարգի		Ստորին կարգի	
—	40	մինչև	100	մինչև	1.000
—	80	«	200	«	2.000
1	20	«	300	«	3.000
1	60	«	400	«	4.000
2	—	«	500	«	5.000
2	40	«	600	«	6.000
2	80	«	700	«	7.000
3	20	«	800	«	8.000
3	60	«	900	«	9.000
4	—	«	1.000	«	10.000
8	—	«	2.000	«	20.000
12	—	«	3.000	«	30.000
16	—	«	4.000	«	40.000
20	—	«	5.000	«	50.000
24	—	«	6.000	«	60.000
28	—	«	7.000	«	70.000
32	—	«	8.000	«	80.000
36	—	«	9.000	«	90.000
40	—	«	10.000	«	100.000
80	—	«	20.000	«	200.000
120	—	«	30.000	«	300.000
160	—	«	40.000	«	400 000
200	—	«	50.000	«	500.000
400	—	«	100.000	«	1.000.000
800	—	«	200.000	«	2.000.000
1.200	—	«	300.000	«	3.000.000
2.000	—	«	500.000	«	5.000.000

Բ. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ

Թերթի գինը.		Որքան գումարի համար		
Ռբլի.	Կոպ.			
—	10	մինչև	50	ռուբլուն:
—	15	«	100	«
—	30	«	200	«
—	45	«	300	«
—	60	«	400	«
—	75	«	500	«
—	90	«	600	«
1	05	«	700	«
1	20	«	800	«
1	35	«	900	«
1	50	«	1.000	«
2	25	«	1.500	«
3	—	«	2.000	«
4	50	«	3.000	«
6	—	«	4.000	«
7	50	«	5.000	«
9	—	«	6.000	«
10	50	«	7.000	«
12	—	«	8.000	«
13	50	«	9.000	«
15	—	«	10.000	«
30	—	«	20.000	«
45	—	«	30.000	«
60	—	«	40.000	«
75	—	«	50.000	«

Գ. ՀԱՄԱՐԱԿ

Թղթերի տեսակներ	Թերթի գինը	
	Ռբլի.	Կոպ.
1	—	60
2	1	—

ԴՐՈՒԱԳԱԴՐՈՇՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տեսակներ.	Դրոշմների գինը	
	Ռբլի.	Կոպ.
1	—	5
2	—	10
3	—	15
4	—	40
5	—	75
6	1	—

Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա Ր Ա Կ Ա Ն

Աբաս
Աբգար
Աբիկ
Աբով
Ադդոն
Ադդիկ
Աղատ
Աթանիկ
Աթիկ
Ալաւիկ
Աղան
Աղանիկ
Աղբուղ
Աղէկ
Ամասիա
Ամբակ
Ամպակ
Այրուկ
Անանիա
Անդուկ
Անդրանիկ
Անձրևիկ
Անուշաւան
Անտիկ
Աշոտ
Աշուշայ
Աշտակ
Ապիրատ
Ապլոց
Առան
Առանձար
Առաւան
Առիւծ
Առնակ
Առուշան
Ասպետ
Ասպուրակէս
Ատիկ
Աստուածատուր
Աքանազ
Ատատ
Ատգէն
Ատովմ
Արաղ
Արամ
Արայ
Արարատ
Արբակ
Արբուն
Արգամ
Արգաւան
Արգոմ
Արգօշ
Արդոկ
Արդուարդ
Արեգ
Արև
Արևամանեակ
Արևամանուկ
Արիստակէս
Արծուիկ
Արձան
Արմայիս
Արմէն
Արմենակ
Արմոգ

Արշալոյս
Արշակ
Արշամ
Արշաւիր
Արշէն
Արուէս
Արջուկ
Արսէն
Արտակ
Արտաշաս
Արտատ
Արտաշէս
Արտաւազդ
Արտաւան
Արտէն
Աւագ
Աւետիք
Արփիար

—

Բաբ
Բաբիկ
Բաբգէն
Բագարատ
Բազ
Բազուկ
Բազունի
Բակ
Բակուր
Բակուրան
Բայգամ
Բանիկ
Բատ
Բարդ
Բարգամ
Բարշղ
Բարուանակ
Բենիկ
Բիւրատ

—

Գաբաղ
Գագ
Գագիկ
Գագիշոյ
Գազրիկ
Գալիկ
Գալուստ
Գամիկ
Գանձի
Գառնի
Գարեգին
Գարջոյլ
Գպիհոն
Գեղամ
Գին
Գինտ
Գինոս
Գիսակ
Գիսանէ
Գիւտ
Գիտ
Գլակ
Գղակ
Գնէլ
Գնիթ
Գոռ
Գոռակ

—

Գորգ
Գունղուզ
Գունտ
Գուշան
Գուրգէն

—

Դաղ
Դանան
Դասիկ
Դատ
Դատաքէն
Դարա
Դերենիկ
Դունին
Դրաստամատ

—

Եղնակ
Եղնիկ
Եզր
Եղբայր
Եղիշէ
Եր
Երազմանակ

Երուազ
Երուանդ
Երամ
Երան
Երանոս
Երևում
Եփրիկ
—
Զազիկ
Զահրատ
Զանգակ
Զատիկ
Զատկար
Զարմայր
Զաւան
Զաւէն
Զգօն
Զուարէն
Զուրա
Զօրակ
Զօրիկ
—
Էմին
—
Ընձակ
Ընձուղ
Ընճուղ
—
Թազուոր
Թաթ
Թաթիկ
Թաթուլ
Թաղիադին
Թոդիկ
Թոռնիկ
Թորգոմ
Թորոս
Թորոսակ
Թուրվանդ
—
Իշխան
Իշխանիկ
Իրաւափառ
—
Լևոն
Լուսեղէն
Լուսպարոն
—
Խաղ
Խաժակն
Խաչազիզ
Խաչատուր
Խաչերես
Խաչիկ
Խաչուկ
Խապատ
Խնդիր
Խնդտաձ
Խնկիկ
Խոռ
Խոսրով
Խոսրովիկ
Խոցտեղ
Խտրիկ
Խորէն
Խուժիկ
Խուրս
—
Ծառուկ
Ծեր
Ծերոն
Ծերուն
—
Կադմոս
Կախիկ
Կամսար
Կայպակ
Կապուտիկ
Կար
Կարապետ
Կարդոս
Կարէն
Կենան
Կեռաս
Կիրակոս
Կոմիտաս
Կոն
Կոնակ
Կոռնակ
Կոչիկ
Կոտիչ
Կորիւն
Կունձիկ
Կուռնիկ
Կարիճ
—
Հազարապետ
Հազարվարդ
Համազասպ
Համամ
Հայկ
Հայկազն
Հայկակ
Հայրապետ
Հայրում
Հարմայ
Հարպիկ
Հաւանակ
Հաւուկ
Հեթում
Հերպետ
Հժայեակ
Հոյ
Հոռէն
Հրահատ
Հրաչեայ
Հրաչէ
Հրանտ
Հօրայ
—
Ղազրիկ
Ղևոնդ
—
Ճանճիկ
Ճնճղուկ
—
Մազենտ
Մաժակ
Մաժան
Մաղթում
Մաղխազ
Մամբրէ
Մանակ
Մանաճիհր
Մանաւազ
Մանեակ
Մանէճ
Մանէն
Մանիկ
Մանկասար
Մանուկ
Մաշտոց
Մարուգէ
Մարտիկ
Մարտիրոս
Մաքսուտ
Մեհեան
Մեհենդակ
Մեհրուժան
Մեղրիկ
Մեսրոպ
Մժէժ
Միանդակ
Մլեհ
Մխիթար
Մշակ
Մոմեղէն
Մուշ
Մուշեղ
Մուշէ
Մսեր
Մրջիւնիկ
Մոզիկ
Մօլոշիկ
—
Յաշկուր
Յարութիւն
Յոյս
Յուսակ
Յուսիկ
—
Նահապետ
Նարդոս
Նաւասարդ
Ներսէհ
Ներսէս
Նշան
Նորայր
—
Շահակ

Շահան
Շահէն
Շաղիտա
Շամլուս
Շամշադրամ
Շանշ
Շարայ
Շարաշան
Շաւասպ
Շաւարշ
Շնգին
Շնորհք

—

Ոսկան
Ոսկեծամ
Ոսկի
Ոստանիկ
Որդի
Ուխտանէս
Ուռնայր
Ուքան

—

Պաճոկ
Պաճոյճ
Պապ
Պապաք
Պապիկ
Պապուկ
Պասքամ
Պատուական
Պարգև
Պարէտ
Պարոյր
Պարոնլոյս
Պերճ
Պոռշ
Պսակ

—

Ջաջուռ
Ջունդ

—

Ռեհան
Ռուբէն

—

Սաղ
Սաթէն
Սաթուն
Սահակ
Սահուռ
Սաղամուտ
Սամեղ
Սանատրուկ
Սատոց
Սարուէն
Սենեքերիմ
Սեպուհ
Սևինջ
Սևուկ
Սիսակ
Սիրական
Սիրատեղ
Սիրուն
Սլաք
Սկայորդի
Սղակ
Սղուկ
Սմբատ
Սուր
Սուրա
Սուրէն
Սուրմակ
Սուքիաս
Սպանդար
Սպանդարատ
Սօս

—

Վահագն
Վահան
Վահէ
Վահրամ
Վահրաման
Վահրիճ
Վաղարշ
Վաղարշակ
Վաղինակ
Վաղոտ
Վան
Վանակ
Վանատուր
Վանվան
Վաշտակ
Վաչագան
Վաչէ
Վառգոշ
Վասակ
Վարազ
Վարազդատ
Վարազդէն
Վարաժ
Վարդ
Վարդազար
Վարդան
Վարդաշահ
Վարդգէս
Վարդերես
Վարդևան
Վարդհուր
Վարդմանուկ
Վարդուկ
Վարդպարոն
Վարժ
Վարխամ
Վարճ
Վարճաւոր
Վարշամ
Վարոս
Վարս
Վեհնամեան
Վիգէն
Վիրապ
Վռամշապուհ
Վստամ
Վրդանէս
Վրէն
Վրոյր

—

Տաճատ
Տատուր
Տեառնթագ
Տէր
Տիգրան
Տիրայր
Տիրան
Տիրանուն
Տիրատուր
Տիրիթ
Տիրիկ
Տիրոց
Տիրուկ
Տիրտուր
Տորք
Տուր
Տուրքիկ
Տրդատ
Տօնական
Տօնիկ

—

Ցլիկ
Ցոլակ

—

Փապակ
Փառէն
Փառնակ
Փառնակէս
Փառնաւազ
Փառներսեհ
Փառնէս
Փառոխ
Փարթամ
Փաւոս

—

Քաջաջ
Քաջոյլ
Քուչակ
Քուրդիկ
Քուք
Քրիստափոր
Քրիստոստուր

—

Օշին
Օտայ
Օրբէլ

—

ԻԳԱԿԱՆ

Աբիսակ
Աղնիւ
Ազտիկ
Ալիծ
Աղաւնեակ
Աղաւնի
Այծեաձն
Այծեձնիկ
Անահիտ
Անդուկա
Անթառամ
Աննիկ
Աննման
Անոյշ
Աշխէն
Աստղիկ
Արաքսինէ
Արգինա
Արեգնազան
Արծուիկ
Արմաւենի
Արմենուհի
Արմիկ
Արշանոյշ
Արուսեակ
Արտաշամ
Արփենի
Արփիկ

Աւագուհի
—
Բալասան
Բամբիշն
Բերկրուհի
Բիւրեղ
—
Գայիանէ
Գեղեցիկ
Գիսանէ
Գոհար
Գոհարիկ
Գոհարինէ
Գուլշատ
—
Դիլշատ
Դխտիկ
Դշխոյ
Դշխուհի
Դստրիկ
—
Եղներ
Երանեակ
Երանիկ
Երանուհի
Եփրուհի
—
Զանազան

Զարման
Զարմանազան
Զարմանդուխտ
Զարմուհի
Զարուհի
Զմրուխտ
—
Թագուհի
Թութիկ
—
Ժամ
—
Իսկուհի
Իւղաբեր
—
Լուսաբեր
Լուսնթագ
Լուսիկ
Լուսինար
—
Խնկաբեր
Խոշաք
Խոշաքեր
Խոսրովանոյշ
Խոսրովիդուխտ
Խոսրովուհի
—
Ծաղիկ

Ծովինար
—
Կատար
Կարինէ
—
Հազարվարդ
Համազասպուհի
Համասփիւռ
Հայ
Հայանոյշ
Հայաստան
Հայկանոյշ
Հայկանդուխտ
Հայկունի
Հեղինար
Հերանոյշ
Հերիք
Հերիքնազան
Հնազանդ
Հռիփսիմէ
Հրանոյշ
Հրաչեայ
—
Ձուիկ
—
Մանանդ
Մանէ
Մաննիկ
Մանուշակ
Մարգարիտ

Մաքրիկ
Մաքրուհի
Մեծտիկին
Մենիկ
—
Ցասմիկ
—
Նազելի
Նազենիկ
Նառնեակ
Նարգիզ
Նարդոս
Նոյեմզար
Նոյեմին
Նորտիկին
Նուարդ
Նունուֆար
Նուրիկ
Նռանհատ
—
Շահանդուխտ
Շահաստան
Շաղիկ
Շամանդուխտ
Շնորհ
Շնորհուր
Շողակաթ
Շողեր
Շուշան
Շուշանիկ

Շուշիկ
—
Ոգորմի
Ոսկեհատ
Ոսկի
Ոսկէնտուկ
Ովգէ
—
Պայծառ
Պերճանոյշ
Պերճուհի
—
Ռեհան
Ռուզան
Ռոփի
—
Սաթինիկ
Սալչուկ
Սահականոյշ
Սահակդուխտ
Սանդուխտ
Սիսակուհի
Սիրամարդ
Սիրանոյշ
Սիրունիկ
Սմբատանոյշ
Սմբատուհի
Սոնդիկ
Սպրամիկ
Սրբուհի

Վանենի
Վարդանդուխտ
Վարդանոյշ
Վարդանուհի
Վարդենի
Վարդենիկ
Վարդիթեր
Վարդիկ

Վարդիշաղ
Վարդոյշ
Վարդուհի
Վահրատ
Վանուհի
Վարսենիկ
Վարսենուհի

—

Տաճատուհի
Տիգրանուհի
Տիրուհի
Տնկիկ

—

Փառանձեմ

—

Փնքուշ

ՑԱՆԿ

Ա. մասն

Նամակագրութեան վերաբերեալ անհրաժեշտ գիտելիքներ. 3
ա. Նամակագրութեան մասին ընդհանրապէս . . . 4
բ. Նամակագրութեան պատշաճքը 5
Թուղթը 6
Նամակի սկիզբը—վերնագիրը 7
Պատուանուններ.—1. Եկեղեցականների. 9
—2. Աշխարհականների 11
Նամակի վերջաւորութիւնը . . . . . »
գ. Մի երկու գիտելիք նամակի բովանդակութեան կամ մարմնի մասին . . . . . »
դ. Թուական 12
ե. Յետ-գրութեան 14
զ. Հասցէ 17

Բ. մասն

Նամակների օրինակներ.
ա. Շնորհաւորական նամակներ.
Նոր տարուայ կամ մեծ տոնների առիթով.— 20
Ծնողներին ուղղուած 23
Աղգականներին ուղղուած 28
Կողմակի անձանց ուղղուած 32
Ծննդեան կամ անուանակոչութեան առիթով . 34
Ամուսնութեան առիթով . . . . . .
Որդու ծննդեան առիթով . . . . . .
Կեանքի այլ դէպքերի առիթով . . . . . .
բ. Պատասխաններ շնորհաւորական նամակ-

ների 39
գ. Ցաւակցական նամակներ 51
դ. Պատասխաններ ցաւակցական նամակներին 59
ե. Յանձնարարական նամակներ 64
զ. Աղաչանաց նամակներ 69
է. Շնորհակալական նամակներ 74
ը. Ազդարարական նամակներ 79
թ. Ներումն խնդրող նամակներ. 82
ժ. Հրաւիրական նամակներ 84
ժա. Ցանդիմանութեան, գանգատանաց, խորհրդատուութեան նամակներ 86
ժբ. Առևտրական
Շրջաբերական 100
Վարկագիր . . . . . »
Ապրանք ուղարկել վաճառքի համար . . 101
Ստացագիր 102
Գործ խնդրել . . . . . »
Փաստաբանին ուղղուած 104
Ապրանք խնդրել . . . . . »
Տեղեկութիւն ապրանք ուղ. մասին . . 105
Մէկի մասին լաւ կարծիք 106
» » տեղեկ. խնդրել . . . . . »
Ծանուցում 107
Պայմանագրի օրինակ 108
Վկայական ծառայութեան 109
Մուրհակի ձև 110
Փոխանակագրի ձև 111
ժգ. Հրաւիրատոմսեր և այցետոմսերի ձևեր . 112
ժդ. Բարեկամական նամակներ 116
ժե. Ամուսնութեան առաջարկներ 120

Գ. մասն

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ա. Ընտանեկան կտակ
1. կտակողի ձեռքով գրուած.—
2. » » ստորագրուած
3. անգրագէտի կտակ 126
բ. Արհեստաւորին աշակերտ տալու պայմանագրի օրինակ 133
գ Բնակարան վարձու տալու պայմանագիր. 135
դ. Խնդրագիրների ձևեր 138
1. Ծննդական վկայականի խնդիր
2. Պսակի » »
3. Մահուան » »
4. Ուսման տալու »
5. Ծառայութ. վկայականի »
6. Նպաստի կամ օժանդակութ.»
7. Ամուսնալուծութեան »
8. Պսակի հրաման առնելու ձև
9. Քահանայի ձեռնադրութեան համախոսական 147
ե. Վկայականների օրինակներ
1. Ծննդեան քաղուածք
2. Պսակի »
3. Մահուան »
4. Զքաւորութեան վկայական . 154
զ. Դպրոցական.—աւարտման վկայական . 155
է. Փոստային կանոններ . . . . . .

Ը. Հեռագրական կանոններ 158
Թ. Ռուսաց և օտարազգի գրամների համեմատական աղիւսակ 159
Ժ. Դրուագաւոր թղթերի գինը
ա. գործնական.—բ. մուրհակների.—գ. հասարակ դրուագագրոշմների տեսակները 161
Ժա. Հայկական յատուկ անունների ցանկ . . 164

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГГС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Գ. ԿՄ Ա Մ Ասնիկյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0290129

23.547